

ՎԱՐԴԱՆ ԱԹՈՅԱՆ

**ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ
(դասախոսություններ)**

ԵՐԵՎԱՆ
Տնտեսագետ
2014

ՀՏԴ 351/354(042.4)
ԳՄԴ 67.99(2)116.2գ7
Ա 269

Հրատարակության է երաշխավորել
ՀՊՏՀ գիտական խորհուրդը

Գրախոսներ՝ **Ս.Ս. Ավետիսյան**
տ.գ.դ., պրոֆեսոր

Ս.Ս. Հովհաննիսյան
ք.գ.թ., դոցենտ

Աթոյան Վ.Վ.,

Ա 269 **Ազգային անվտանգության հիմնախնդիրներ:** Դասախոսություններ / **Վ.Վ. Աթոյան.**– Եր.: «Տնտեսագետ» հրատարակչություն, 2014, 154 էջ:

Դասախոսություններում ներկայացվում է ազգային անվտանգության էությունը, առանցքային հասկացությունները, բաղադրիչները, ուղղություններն ու ապահովման եղանակները: Դիտարկված են ազգային անվտանգության ապահովման ոլորտում ուղեղային կենտրոնների մասնակցության ձևաչափին և դերակատարմանն առնչվող հարցերը, ինչպես նաև անվտանգության ապահովման հիմնահարցերը՝ համաշխարհային տնտեսության գլոբալացման համատեքստում: Միաժամանակ քննարկվում են գլոբալ տեղեկատվական համակարգի և ցանցային հասարակության առանձնահատկությունները, տեղեկատվական անվտանգության ապահովման հիմնահարցերն ու մանիպուլյացիոն տեխնոլոգիաները: Առանձին անդրադարձ է կատարված երկրի ռազմական և տարածաշրջանային անվտանգության ապահովման հիմնախնդիրներին ու դրանց լուծման ուղիներին:

Աշխատանքը նախատեսված է ուսանողների, դասախոսների, ինչպես նաև քաղաքագիտությամբ ու ազգային անվտանգության հիմնախնդիրներով հետաքրքրվող մասնագետների համար:

ՀՏԴ 351/354(042.4)
ԳՄԴ 67.99(2)116.2գ7

ISBN 978-9939-61-102-0

© Աթոյան Վ., 2014

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2014 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ	5
ՆԱԽԱԲԱՆ	10
ԳԼՈՒԽ 1. ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ՍԱՀՄԱՆՈՒՄԸ, ԱՊԱՀՈՎՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԵՐԸ	16
1.1 ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ	16
1.2 ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ	25
1.3 ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԵՐԸ	31
1.4 ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	35
ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ	41
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	41
ԳԼՈՒԽ 2. ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԴԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ...	45
2.1. ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ	46
2.2. ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ	49
2.3 ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ	52
2.4. ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	59
ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ	64
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	64
ԳԼՈՒԽ 3. ԳԼՈՐԱԼԱՅՈՒՄ. ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	67
3.1 ԳԼՈՐԱԼԱՅՈՒՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ	68
3.2 ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳԼՈՐԱԼԱՅՈՒՄԸ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ	72
3.3 ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԱՓՈԽՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ 21-ՐԴ ԴԱՐԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ	77
ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ	81
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	81

**ԳԼՈՒԽ 4. ԳԼՈՐԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ
ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ.....84**

4.1 ԳԼՈՐԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ
ՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ 85

4.2 ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՆ ՈՒ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ 88

4.3 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ.....100

4.4 ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻՈՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ105

ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ115

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 115

**ԳԼՈՒԽ 5. ՌԱԶՄԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ.....119**

5.1 ՌԱԶՄԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ...120

5.2 ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ124

5.3 ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ.....136

ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ145

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 145

ՎԵՐՋԱՐԱՆ149

ԱՄՓՈՓՈՒՄ152

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ազգային անվտանգության տեսության ուսումնասիրությունը և ըստ պատշաճի կրթագիտական համակարգում ներկայացումը հայ քաղաքագիտական հանրության համար նորություն է: Այդ առումով, Վարդան Աթոյանի «Ազգային անվտանգության հիմնախնդիրներ» դասախոսությունների հրատարակումն, անտարակույս, իր որոշակի կարևոր ներդրումը կունենա:

Ի սկզբանե պետք է կարևորել այն հանգամանքը, որ հեղինակի դասախոսությունները ոչ միայն տեսական-դասախոսական, այլև գործնական աշխատանքի արդյունք են՝ հաշվի առնելով այն, որ Վ. Աթոյանն ազգային անվտանգության ոլորտում ունի ոչ միայն գիտական, դասախոսական, այլ նաև պրակտիկ աշխատանքի փորձ:

Դասախոսությունների դասընթացը բաղկացած է հինգ գլխից: Հեղինակը կարևորում է թեմայի հետազոտությունը հատկապես մեր նորանկախ պետականության ամրապնդման, առկա ներքին և արտաքին մարտահրավերներին դիմակայելու տեսանկյունից, հատկապես՝ ներկա գլոբալացման պայմաններում:

Առաջին գլխում հանգամանալից ներկայացվում է ազգային անվտանգություն հասկացությունը, տրվում դրա սահմանումը, հիմնական օբյեկտները և ապահովման տեսակները՝ մասնավորապես ազգային շահերի համատեքստում: Անդրադառնալով ազգային անվտանգության հասկացության վերաբերյալ քաղաքագիտության մեջ շրջանառվող սահմանումներին՝ հեղինակը մասնավորապես վերլուծում է ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությանն առնչվող օրենսդրական փաստաթղթերը:

Քննարկելով ազգային անվտանգության վտանգ, սպառնալիք, ռիսկ, մարտահրավեր առանցքային հասկացություններին տրված տարբեր գնահատականները՝ հեղինակը փորձել է կատարել որոշակի եզրահանգումներ և տվել սեփական սահմանումներ:

Երկրորդ գլխում համակարգային վերլուծության է ենթարկված ազգային անվտանգության ապահովման համակարգում ուղեղային կենտրոնների դերակատարումը: Մանրամասն ներկայացված է ուղեղային կենտրոն հասկացության սահմանումն ու ձևավորման պատմությունը: Առանձնահատուկ ուշադրության է արժանի գիտակրթական, հասարակական-քաղաքական և աշխարհաքաղաքական համակարգերում ժամանակակից ուղեղային կենտրոնների դերակատարության վերլուծությունը, ընդ որում՝ նաև վիճակագրական աղյուսակների ցուցադրությամբ, ինչն առավել ակնառու է դարձնում թեման:

Նշյալ հանգամանքը պետք է վերագրել նաև արդեն զուտ ազգային անվտանգության համակարգի ձևավորման գործում ուղեղային կենտրոնների գործունեության արդյունավետության և նշանակության գնահատմանը:

Ինչ խոսք, հնարավոր չէ ներկա պայմաններում քաղաքագիտական հիմնավոր խոսք ասել, առավել ևս՝ անվտանգության թեմայով և չանդրադառնալ գլոբալացման երևույթին: Ըստ այդմ՝ հեղինակը երրորդ գլխում վերլուծում է գլոբալացման էությունը, անդրադառնում երևույթի նկատմամբ առկա դրական և բացասական մոտեցումներին, քննարկում գլոբալացման տնտեսական բաղադրիչներն իրենց առանցքային նշանակությամբ: Այս համապատկերում պետք է կարևորել գլոբալացման պայմաններում ազգային պետությունների գոյությանն ուղղված սպառնալիքների վերլուծությունը:

Չորրորդ գլխում վերլուծված են գլոբալ տեղեկատվական միջավայրի ձևավորման և ազգային անվտանգության հարաբերակցության հիմնահարցերը, մասնավորապես՝ ցանցային հասարակություն, տեղեկատվական անվտանգություն, տեղեկատվական հեղափոխություն հասկացությունները՝ առկա սպառնալիքներով և հնարավորություններով:

Աշխատանքում առանձին ուշադրության է արժանի տեղեկատվական հակամարտության, մանիպուլյացիոն տեխնոլոգիաների հարաբերակցությանը և դրանում քարոզչական ներգործության դերակատարությանը նվիրված բաժինը: Հեղինակը ներկայացրել է առավել տարածված մանիպուլյացիոն հնարքները, այդ թվում՝ պիտակավորում, պայծառ ընդհանրացում, փոխանցում կամ տրանսֆեր, հղումը հեղինակությունների կամ վկայում, ժովորդականության խաղ և այլն:

Հինգերորդ գլխում համակողմանիորեն վերլուծված են ռազմական անվտանգության և տարածաշրջանային անվտանգության հիմնախնդիրները:

Արժևորելով ազգային անվտանգության համակարգում ռազմական գործոնի էական դերակատարությունը՝ ներկայացվել են դրա ոլորտները, ռազմական վտանգի և պատերազմի տեսակների դասակարգումը:

Հեղինակը մեր հանրապետության ազգային անվտանգությանն ուղղված մարտահրավերներից է համարում Ադրբեյջանի հայատյաց քարոզչությունը, ՀՀ-ին պարտադրվող սպառնազինությունների մրցակազմը, հայկական մշակութային հուշարձանների ոչնչացումը և պատմական փաստերի ակնհայտ կեղծումը:

ՀՀ ռազմական անվտանգության ապահովման գործում ծանրակշիռ դերակատարություն վերապահելով հայ-ռուսական երկկողմ և ՀԱՊԿ շրջանակներում համագործակցությանը՝ կարևորում է ՀՀ որդեգրած արտա-

քին քաղաքական դիրքորոշումը. «Ներկա աշխարհաքաղաքական իրողությունների պայմաններում ՀԱՊԿ անդամ ՀՀ, չնայած իր հստակ աշխարհաքաղաքական և ռազմաքաղաքական դիրքորոշմանը դեպի Մաքսային միություն և ձևավորվող Եվրասիական տնտեսական միություն, փորձում է զգույշ և հավասարակշռված արտաքին քաղաքականություն վարել՝ տարբեր ձևաչափերով համագործակցելով այլ ուժային կենտրոնների և կառույցների հետ»:

Արցախյան հակամարտությունը քննարկելով տարածաշրջանային անվտանգության համատեքստում՝ հեղինակը ներկայացրել է արցախահայության ազգային-քաղաքական ինքնորոշման իրավունքի մի շարք հիմնավորումներ: Միաժամանակ, տարածաշրջանում անվտանգության խարխլմանը նպատակաուղղված Ադրբեյջանի ապակառուցողական դիրքորոշմանն ի հակակշիռ՝ հիմնավորվում է տարածաշրջանային համագործակցության միջավայրի ձևավորման, անվտանգության համակարգի ստեղծման, հարևան պետությունների միջև կառուցողական հարաբերությունների հաստատման օգտին տարվող ՀՀ քաղաքական-անվտանգային հետևողական դիրքորոշումը:

Յուրաքանչյուր դասախոսության կցված է անհրաժեշտ գրականության ցանկ, ինչպես նաև՝ դասավանդման մեթոդիկայի և թեմայի ընկալման դյուրինության տեսանկյունից գնահատելի ինքնաստուգման հարցեր:

Փաստորեն, ներկա դասախոսությունների դասընթացն ուղղված է ազգային անվտանգության մի շարք հիմնախնդիրների թեմատիկ ներկայացմանը և վերլուծմանը: Անշուշտ, մեկ դասընթացում հնարավոր չէ սպառիչ պատասխան տալ ազգային անվտանգության վերաբերող բոլոր հարցերին, ինչին ամենևին հեղինակը չի հավակնել, այդ իսկ պատճառով՝ շեշտադրումները կա-

տարել է առավել հիմնարար և արդիական հնչեղության հիմնախնդիրների ուղղությամբ:

Անտարակույս, ներկա դասախոսությունների գրքով լրացվում է ազգային անվտանգության վերաբերյալ հայերեն քաղաքագիտական-ուսումնական գրականության առկա կարևոր բացը:

Աշխատությունը դասախոսա-ուսանողական շրջանակներին հնարավորություն է ընձեռում արհեստավարժ և տեսա-մեթոդական տեսանկյունից իրավամբ հաջողված դասախոսությունների շնորհիվ հասու լինել անվտանգության տեսության առավել արդիական հիմնախնդիրներին:

Տարածաշրջանում իր ռազմաքաղաքական դերակատարությունն ակտիվացնող ՀՀ առջև նոր մարտահրավերներ են հառնել, որոնց արդյունավետ դիմակայման ճանապարհին անհրաժեշտ է համակարգորեն մշակված անվտանգային հայեցակարգային դրոյթների իրականացում: Մասնավորապես, հենց այդ հանգամանքը հաշվի առնելով՝ հրատապ է դարձել համապատասխան կադրերի պատրաստումը, ինչին էլ նպատակաուղղված է ներկա դասընթացը: Այն, մեր համոզմամբ, նաև այս ուղղությամբ տարվելիք հետագա ուսումնամանկավարժական և քաղաքագիտական հետազոտական աշխատանքների արդյունավետ ծավալման համար խթան կհանդիսանա և իր համեստ, բայց և ուրույն ներդրումը կունենա ազգային անվտանգության տեսության քաղաքագիտական մշակման գործընթացում:

Ավագ Հարությունյան

*պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ՊՆ «Մայր Հայաստան» զինվորական
թանգարանի տնօրեն*

ՆԱԽԱԲԱՆ

Քաղաքագիտությունը շարժվելի նուրբ գիտություն է, քան որևէ այլ գիտություն, և նրա համալսարանը պետական կյանքն է:

Շահան Նաթայի

Ազգային անվտանգության (այսուհետ՝ ԱԱ) ապահովումն ու այդ ոլորտի հիմնախնդիրների գիտական ուսումնասիրությունը ցանկացած երկրի ինքնիշխանության, տարածքային ամբողջականության պահպանման և կայուն զարգացման ապահովման համար ունի կենսական նշանակություն: Այդ համատեքստում ԱԱ հիմնախնդիրների ակադեմիական մակարդակով ուսումնասիրությունն ու բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան ուղղվածության առարկաների դասավանդումը կարևորվում է հատկապես մեր երկրում՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առջև ծառայած ներքին և արտաքին, այդ թվում՝ համաչափ և անհամաչափ սպառնալիքներն ու մարտահրավերները:

Հենց վերոնշյալ հանգամանքներով պայմանավորված՝ ՀՀ-ում տարեցտարի օբյեկտիվորեն մեծանում է ԱԱ հիմնախնդիրների ուսումնասիրման և անվտանգային քաղաքագիտական գրականության պահանջարկը:

Ներկայիս արագ փոփոխվող աշխարհում տեղի ունեցող գործընթացները և աննախադեպ թափ ստացած համահարթեցումը, երբ պետությունների միջև գծված քաղաքական սահմանները կորցնում են իրենց երբեմնի նշանակությունը, իսկ վերազգային կառույցները աստիճանաբար փոխարինում են ազգային պետության ավանդական ինստիտուտին՝ ի հայտ բերելով նորանոր մարտահրավերներ, որոնց համարժեք պատաս-

խանելու և արդյունավետ կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկելու հիմնախնդիրը, սեփական անվտանգությամբ մտահոգվող յուրաքանչյուր պետության առաջնահերթություններից է: Ինչպես ճշմարտացիորեն նկատում է Ջ. Հարթմանը (Jim Hartman)¹ աշխարհը վերջին հիսուն տարիներին էականորեն փոխվել է, և փոփոխությունների քայլերը պատմության մեջ վերջին տասնամյակներում իրենց հավասարը չունեն: Մարդու ներգործությունը բնական ռեսուրսների և համակարգերի վրա, տեղեկատվության փոխանցման արագությունն ու լայնությունը, պետությունների, կառավարությունների փոխհաղորդությունը, ինչպես նաև անհամաչափ պատերազմներ վարելու փոքր խմբերի հնարավորությունը կամ պրո-ժողովրդավարական շարժումների ուղղորդումը (կառավարումը/առաջ մղումը) ակնհայտորեն ցույց է տալիս, որ մենք այլևս պարփակված համակարգում չենք ապրում, որտեղ մարդը կարող է կառավարել, վերահսկել իր սեփական ճակատագիրը մեծամասամբ բիրտ ուժի, տեխնիկայի և միակողմանի գործողությունների/որոշումների կայացման միջոցով¹:

Ակնհայտ է, որ 21-րդ տեղեկատվական դարաշրջանում պետությունների միջև տեղի ունեցող հակամարտությունները հաճախ շեղվում են ավանդական ռազմական բնույթից և ստանում են բոլորովին նոր ձև ու բովանդակություն՝ տեղեկատվական, հոգեբանական, տնտեսական և տարատեսակ այլ պատերազմների տեսքով, ինչն ԱԱ ապահովման համար պատասխանատու մարմինների և ԱԱ խնդիրներով զբաղվող ակադեմիական հանրության համար որակապես նոր խնդիրներ է առաջ քաշում:

¹ St'u Hartman J. Sustainability and National Security. Sustainability and National Security, Center for Strategic Leadership, US Army War College, Carlisle, PA, January/2012. P. 22-23, [http://www.csl.army.mil/usacsl/publications/SustainabilityandNationalSecurity\(webversion\).pdf](http://www.csl.army.mil/usacsl/publications/SustainabilityandNationalSecurity(webversion).pdf)

Կասկածից վեր է նաև, որ ԱԱ ապահովման գործընթացը բավականին բարդ է և փոխկապակցված մի շարք համակարգային խնդիրների արդիականացման հետ, որոնց հաջող լուծումը միայն կարող է բավարար չափով ապահովել ԱԱ: Նման պնդումը հատկապես տեղեկատվական հեղափոխության դարաշրջանում արդիական է դառնում:

Գլոբալացման պայմաններում նոր մարտահրավերներ և սպառնալիքներ են ձևավորվում, ի հայտ են գալիս նոր մարտահրավերներ, որոնք պահանջում են ոչ միայն անհատի, հասարակության, պետության պաշտպանվածություն ավանդական վտանգներից ու սպառնալիքներից, այլ նաև նոր սերնդի այն վտանգների և սպառնալիքների բացահայտումը, կանխարգելումը, թուլացումը, վերացումը, որոնք ունակ են գրկելու իրենց հիմնարար նյութական և հոգևոր արժեքներից, վնաս հասցնել՝ սահմանափակելով զարգացման հնարավորությունները:

Ինքնին գլոբալացման գործընթացը և նոր գլոբալ աշխարհակարգի կայացումը ԱԱ մարտահրավեր է: Իրավիճակ է ստեղծվում, երբ ԱԱ ապահովման նախկին գործիքներն ու մեթոդները այլևս կորցնում են իրենց արդիականությունն ու արդյունավետությունը կամ դիտվում են որպես ամբողջատիրական կամ ավտորիտար համակարգերի ռուդինենտալ (մնացորդային) երևույթներ և որպես ժողովրդավարության, քաղաքացիական կամ ազգային հասարակության դեմ ուղղված սպառնալիք:

Ինչպես ճշմարտացի նշում է Դ. Տիբակովը. «Նույնիսկ զարգացած երկրների կառավարությունները բացահայտորեն ընդունում են իրենց անզորությունը գլոբալացման գործընթացի ազդեցությամբ առաջացող առավել վտանգավոր խնդիրների և սպառնալիքների նկատ-

մամբ»²: Կարծում ենք, որ ի հայտ եկող իրողությունները ստիպում են ԱԱ հարացույցը ուղղել ոչ թե հետևանքների գնահատման և չեզոքացման վրա, այլն՝ սպառնալիքներ ծնող ռիսկերի նվազեցման և կանխարգելիչ միջոցառումների մշակման ուղղությամբ:

Միաժամանակ, ժամանակակից աշխարհաքաղաքական գործընթացներում ազգային շահերի հստակեցման և դրանց համապատասխան ԱԱ քաղաքականության մշակման հարցը մնում է յուրաքանչյուր պետության առանցքային խնդիրն ու մտահոգության առարկան: ԱԱ ապահովման բարդությունն առաջին հերթին նրա բազմամակարդակ կառուցվածքի, բազմաշերտության և բաղկացուցիչ տարրերի լայն շրջանակի մեջ է:

Ելնելով հասարակության կենսագործունեության տարբեր ոլորտների առանձնահատկություններից՝ ԱԱ կառուցվածքում կարելի առանձնացնել հետևյալ տեսակները՝

- քաղաքական անվտանգություն,
- տնտեսական անվտանգություն,
- սոցիալական անվտանգություն,
- հոգևոր անվտանգություն,
- տեղեկատվական անվտանգություն,
- ռազմական անվտանգություն,
- բնապահպանական անվտանգություն,
- գիտատեխնիկական անվտանգություն,
- էներգետիկ անվտանգություն,
- իրավական անվտանգություն և այլն³:

Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն, որ պատմական տարբեր փուլերում անվտանգության այս կամ այն

² Цыбаков Д.Л. Милитаризация политики и национальная безопасность России, Орел, 2008. С. 53.

³ Экономическая и национальная безопасность /под ред. Е.А. Олейникова/. М., 2005. С. 18.

տեսակի առաջնայնությունը օբյեկտիվորեն փոխվում է, և այդ պատճառով ԱԱ ապահովմամբ զբաղվող ակադեմիական հանրության կարևորագույն խնդիրն է ճշգրտորեն սահմանել տվյալ ժամանակին համահունչ անվտանգության առաջնահերթությունները:

Գաղտնիք չէ, որ ԱԱ ենթադրում է պետության կայուն զարգացման ապահովման նպատակով կենսագործունեության տարբեր ոլորտներում անհատի, հասարակության և պետության կենսական շահերի պաշտպանվածությունը արտաքին և ներքին սպառնալիքներից: Մյուս կողմից, ԱԱ ուղղված է առկա ռեսուրսների և հնարավորությունների հաշվարկմամբ քաղաքական, տնտեսական, սոցիալական, ռազմական, տեխնոգեն, բնապահպանական, տեղեկատվական և այլ բնույթի արտաքին և ներքին սպառնալիքների դիմակայմանը և հաղթահարմանը:

Պետք է նշել, որ ԱԱ վիճակի վրա ազդում է նաև սոցիալական, հաղորդակցական, սոցիոմշակութային և աշխարհաքաղաքական լայն համատեքստը: Ակնհայտ է, որ ներկա գլոբալացումն առաջիկա տասնամյակներում շատ կոնկրետ ազդեցություն է ունենալու հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտների՝ տնտեսության, քաղաքականության, գիտության, կրթության և մշակույթի վրա: 21-րդ դարում մարդկությունը մտել է իր զարգացման նոր՝ տեղեկատվական պարբերաշրջան: Մեր օրերում ԶԼՄ տեղեկատվական ազդեցությունը պետության, հասարակության, քաղաքացու վրա հաճախ առավել խորքային է, քան քաղաքական, տնտեսական և, երբեմն, ռազմական ազդեցությունը: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ տեղեկատվությունն աստիճանաբար առավել իրական և ազդեցիկ ուժ է դառնում:

ԱԱ այս և մի շարք այլ հիմնախնդիրների վերհանմանն ու մատուցմանն էլ ուղղված են սույն դասախոսու-

թյունների շարքը: Մենք, իհարկե, չենք հավակնում համապարփակ կերպով ներկայացնել ԱԱ ամբողջ համատեքստը, ուստի շեշտադրումները կանենք միայն մի քանի ժամանակակից սպառնալիքների քննարկման վրա:

Այսպիսով, ներկա պայմաններում ԱԱ ապահովումն իրենից ներկայացնում է բավականին բարդ, բազմամակարդակ և բազմաշերտ խնդիր, որի լուծման արդյունավետությունն ուղղակիորեն կախված է գիտական, վերլուծական մտքի և ակադեմիական հանրության պատրաստվածության մակարդակից, կուտակված գիտելիքներից և այդ խնդիրների վերաբերյալ հասարակության իրազեկվածության մակարդակից: Ակնհայտ է, որ առանց վերոնշյալ պայմանների ապահովման հնարավոր չէ նշված ոլորտում ճշգրիտ ու արդյունավետ կառավարչական որոշումների ընդունումը:

ԳԼՈՒԽ 1

ԱՋԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՍԱՀՄԱՆՈՒՄԸ, ԱՊԱՀՈՎՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԱՋԳԱՅԻՆ ՇԱՀԵՐԸ

- ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ
- ԱՋԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ
- ԱՋԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԱՋԳԱՅԻՆ ՇԱՀԵՐԸ
- ԱՋԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Մի ժողովուրդ, որն իր փիլիսոփայությունը, աշխարհայեցողությունը, կրոնն անգամ չի հարմարեցնում իր ինքնապաշտպանության պահանջներին, անբարոյական է և անապագա...

Գարեգին Նժդեհ

ԱԱ ապահովումը ներկա հարափոփոխ աշխարհում բավականին բարդ կառավարվող, միաժամանակ՝ բազմաշերտ և բազմամակարդակ հիմնախնդիր է, որի հաջող լուծումը մեծապես կախված է հետազոտության առանցքային՝ *ազգային անվտանգություն* և մի շարք հարակից հասկացությունների ճշգրիտ սահմանումից, ինչպես նաև գոյություն ունեցող տարբեր մոտեցումների օբյեկտիվ, լիարժեք և բազմակողմանի վերլուծությունից:

Հատկանշական է, որ առանցքային հասկացության հիմքում ընկած է անվտանգություն կատեգորիան, որն, ըստ էության վտանգի բացակայությունն է: Սակայն, անվտանգություն կատեգորիայի գիտական մեկնաբանությունն, իր հերթին, աչքի է ընկնում բազմազանությամբ: Հարցի հետազոտությունը բարդանում է նրանով, որ անվտանգությունը՝ որպես բարդ սոցիալական երևույթ, վերլուծվում է տարբեր գիտակարգերի շրջանակներում: Միաժամանակ, հարկ է նշել, որ անվտանգության բազմաթիվ սահմանումների առկայությունը, որոնք մշակվել են տարբեր գիտակարգերի շրջանակներում, յուրօրինակ ձևով են բացահայտում այս երևույթի բնույթը:

Հնուց ի վեր անվտանգությունը և դրա հետ կապված հարցերը հետաքրքրել են մարդկությանը: Անվտանգության տարբեր ասպեկտներին անդրադարձել են տարբեր ժամանակաշրջանների հայ և օտարերկրյա մտածողները՝ Պլատոնից մինչև Մաքիավելի, Ժ.Ժ. Ռուսոյից մինչև Գարեգին Նժդեհ: Պատահական չէ, որ ան-

վտանգության նկատմամբ պահանջմունքը արտացոլված է տնտեսագետներին քաջ հայտնի ամերիկացի հայտնի հոգեբան, հումանիտար հոգեբանության հիմնադիր Ա. Մասլոուի (Abraham Maslow) պահանջմունքների բուրգում (տե՛ս Գծանկար 1) և համարվում է մարդու հիմնարար պահանջմունքներից մեկը՝ տեղ գտնելով ֆիզիոլոգիական պահանջմունքներից անմիջապես հետո:



Գծանկար 1. Մասլոուի պահանջմունքների բուրգը

Վտանգավոր արտաքին և ներքին ազդեցություններից պաշտպանվելու պահանջը հիմնական պահանջմունք է ինչպես առանձին մարդու, ընտանիքի, հասարակության, այնպես էլ՝ ցանկացած պետության համար: Ընդհանուր առմամբ, անվտանգություն հասկացությունը կարող է մեկնաբանվել որպես վտանգի բացակայություն կամ սպառնալիքներից հիմնարար արժեքների և շահերի պաշտպանվածության վիճակ:

Փաստ է, որ անվտանգության ապահովման պահանջմունքը մարդկային քաղաքակրթության ամբողջ պատմության ընթացքում ուղեկցել է մարդուն: Անվտանգության ձգտումն է, նախ և առաջ, պայմանավորել նախնադարյան մարդկանց միավորումը խմբերի

և հանրությունների: Ավելի ուշ՝ պետական կազմավորումների ձևավորումից հետո, ստեղծել պահպանության, անվտանգության և պաշտպանական հատուկ մարմիններ՝ բանակի, ոստիկանության, հատուկ և արտակարգ ծառայությունների տեսքով, իսկ արդեն վերջին 100 տարում՝ կանխորոշել է վերազգային բազմաթիվ կազմակերպությունների ձևավորումը, այդ թվում՝ Երկիր մոլորակի ողջ բնակչության անվտանգության ապահովմանը կոչված Միացյալ ազգերի կազմակերպության (ՄԱԿ) ստեղծմանը:

Վերոնշյալի համատեքստում՝ ավելորդ չէ նշել, որ ՄԱԿ-ի սպառնալիքների, մարտահրավերների և փոփոխության բարձր մակարդակի խմբի 2005թ. «Առավել անվտանգ աշխարհ. մեր ընդհանուր պատասխանատվությունը», A/59/565 զեկույցում թվարկված են այն վեց հիմնական սպառնալիքը, որոնց լուծմամբ համաշխարհային հանրությունը ներկայում և առաջիկա տասնամյակներում պետք է զբաղվի: Դրանք են՝

- պետությունների միջև պատերազմները,
- բռնությունը երկրների ներսում, այդ թվում՝ քաղաքացիական պատերազմները, մարդու իրավունքների զանգվածային խախտումները և ցեղասպանությունը,
- աղքատությունը, վարակիչ հիվանդությունները և բնապահպանական քայքայումը,
- միջուկային, ռադիոգիտական, քիմիական և կենսաբանական զենքը,
- ահաբեկչությունը,
- կազմակերպված վերազգային հանցավորությունը [1]:

Անվտանգություն հասկացությունը լայն տարածում գտավ ԱՄՆ-ում 1940-ականների վերջին և 1950-ականների սկզբին, երբ այդ տերմինով սկսեցին անվանել ռազմական, քաղաքացիական ռազմավարության հետազոտությունների, տեխնոլոգիաների, սառը պատերազմի պայմաններում սպառազինության վրա հսկողության համալիր ոլորտը, և երբ ռազմական դիմակայության խնդիրը, հատկապես նոր միջուկային չափումներում, դարձավ միջազգային հարաբերությունների գերակայող մասը: Միջազգային ան-

վտանգության դասընթացները դարձան համալսարանական ծրագրերի անքակտելի մասը, իսկ թեման՝ արագորեն շատացող գիտահետազոտական կենտրոնների հետազոտության հիմնական առարկան [2]:

Հարկ է նշել, որ անվտանգության բոլոր եղանակների կենտրոնում մարդն է: Մարդն է, նախ և առաջ, տառապում տարբեր տեսակի սպառնալիքներից: Սակայն, միևնույն ժամանակ, այդ սպառնալիքների ծանրակշիռ մասնաբաժինը հենց մարդածին բնույթ ունի: Հենց դրա պատճառով մարդն ամենասանպաշտպան և ամենավտանգավոր էակն է՝ թե՛ իր և թե՛ շրջակա միջավայրի համար: Այս առումով հատկանշական է Շեքսպիրի «Ռիչարդ 3-րդ» ստեղծագործությունից հետևյալ հատվածը. «Յուրաքանչյուր գազանի մոտ կա գեթ մեկ կաթիլ խիղճ, սակայն ես չունեմ, որովհետև ես գազան չեմ»:

Աշխարհում ներկայիս վիճակն այնպիսին է, որ ոչ ոք իրեն անվտանգ չի զգում: Վտանգներն ու սպառնալիքները մեր իրականության անբաժանելի մասն են դարձել: Ավելին, դրանք անհատների, հասարակությունների և պետությունների ձևավորման և զարգացման բոլոր փուլերի պարտադիր ուղեկիցներն են, և որոշակի տրամաբանությամբ ընթացող գործընթացներն ու իրադարձություններն են, որոնք կարող են վնաս պատճառել մարդուն, սոցիալական խմբին, հասարակությանը, պետությանը և երկիր մոլորակին, նրանց բարեկեցությանը, ոչնչացնել նյութական, հոգևոր արժեքները, առաջացնել աստիճանական անկում և փակել զարգացման ուղին, անգամ ոչնչացնել նրանց:

Անվտանգության սպառնալիքների ձևավորման աղբյուր է երկրում և միջազգային ասպարեզում մարդկային գործունեության տարբեր ոլորտներում հասարակական զարգացման ներքին և արտաքին հակասությունների բազմազանությունը՝ որպես մշտապես զարգացում ապրող գործընթաց:

Հատկանշական է, որ մարդը վտանգների ու սպառնալիքների և՛ օբյեկտն է, և՛ սուբյեկտը: Մարդու մեջ անբացատրելի կերպով զուգակցվում են եսասիրությունը, իռացիոնալությունը, ագրե-

սիվությունը՝ դրանց բացասող սխրագործության, անձնագոհության, բարեգործության հետ: Ժամանակակից մարդը չի շտապում բաժանվել իր բոլոր արատներից, դուրս գալ աշխարհի սուբյեկտիվ, անհատական, ընչաքաղց ընկալման շրջանակներից: Միաժամանակ, մարդն ուղղակի կամ անուղղակի ներառված է հարաբերությունների և գործընթացների բազմազան, բարդ կազմակերպված համակարգում՝ լինելով կրավորական կամ ներգործական և ունենալով ակտիվ ստեղծարար, պասիվ հայեցողական կամ կործանիչ դեր:

Յուրաքանչյուր մարդ միայն մասնակի կարող է ապահովել իր անձնական անվտանգությունը՝ գործելով օրենքի սահմաններում և չանտեսելով հասարակության և պետության շահերը: Հասարակական հիմունքներով գործող ոչ պետական կազմակերպություններն ինչ-որ չափով կարող են ապահովել բնակչության առանձին խմբերի անվտանգությունը: Սակայն, կենսագործունեության անվտանգության ապահովման հիմնական գործիք կոչված է լինել պետությունը: Դա ոչ միայն նրա հիմնական խնդիրն է, այլև բացառիկ պարտականությունն ու առաքելությունը:

Վերջին ժամանակներում նկատվում է ինչպես անվտանգության հասկացության մեկնաբանության ընդլայնման, այնպես էլ՝ ռազմական, տնտեսական, բնապահպանական, մշակութային և մարդկության գործունեության այլ կողմերի համալիր քննարկման միտում [3]:

Ինչպես նշեցինք, անվտանգությունը բարդ և բազմամակարդակ համակարգ է: Քաղաքագիտական և կոնֆլիկտոլոգիական գրականության մեջ ներկայացված է անվտանգության հայեցակարգերի բավականին լայն շրջանակ [4]: Հետազոտող Վ. Դիևը ուշադրություն է դարձնում տարբեր հետազոտողների կողմից անվտանգության ուսումնասիրության երկու տարբեր ուղղությունների՝ անվտանգությունը՝ որպես երևույթ, և անվտանգության ապահովումը՝ որպես գործընթաց, խառնման հարցի վրա: Որպես կանոն՝ աշխատանքների մեծամասնությունը նվիրված է անվտանգության ապահովման մոտեցումների մշակմանը, այսինքն՝ գործ-

նական խնդիրների լուծումների առավել արդյունավետ մեթոդների և միջոցների սահմանմանը: Այս ամենը հանգեցնում է նրան, որ մասնագետները, անվտանգության մասին դատողություն անելիս, հաճախ խոսում են միայն կոնկրետ գործնական հասկացություններից՝ պետական, տնտեսական, տեղեկատվական անվտանգություն և այլն [5]:

Հարկ է նշել, որ գոյություն ունեն անվտանգություն հասկացության սահմանման տարբեր մոտեցումներ: Որոշ հեղինակներ անվտանգությունը սահմանում են մարդկանց, հասարակության, պետության, ժողովուրդների համաշխարհային հանրության՝ վտանգների և սպառնալիքների բացահայտման (հետազոտության), կանխարգելման, թուլացման, վերացման և դիմադարձման, գործունեության կատեգորիայի միջոցով, որոնք ի վիճակի են կործանել նրանց, գրկել հիմնարար և հոգևոր արժեքներից, հասցնել անթույլատրելի (օբյեկտիվորեն և սուբյեկտիվորեն) վնաս, փակել պրոգրեսիվ զարգացման ճանապարհը [6]: Այլ հետազոտողներ կարծում են, որ անվտանգության հասկացության էությունը կայանում է «տարբեր առարկաների, երևույթների կամ գործընթացների կողմից պաթոզեն (ապակազմակերպող, ապակառուցողական, քայքայիչ) ազդեցության ժամանակ՝ երևույթի կամ գործընթացի իր համակարգաստեղծ որակների, հիմնական բնութագրիչների, չափորոշիչների և էության պահպանման» հնարավորության մեջ [7]: Ոչ պակաս հիմնավորված է երևում այն մոտեցումը, ըստ որի կենսաբանական և սոցիալական համակարգերի համար անվտանգությունը հիմունքային, առաջնային պահանջմունք է, որը բխում է մատերիայի և իրենց պրոգրեսիվ էվոլյուցիայի ճանապարհին կոնկրետ նյութական համակարգերի ինքնապահպանման բնույթից [8]: Առկա են և մի շարք այլ տեսակետներ, որոնք, մասնավորապես, անվտանգությունը սահմանում են որպես հասարակական հարաբերությունների վիճակ [9]:

Թվարկված մոտեցումների ընդհանրությունը անվտանգություն հասկացության հարաբերական լինելու հանգամանքի և հավանական բնույթ ունենալու մեջ է: Այսպես, անվտանգության

ապահովմանն ուղղված գործունեությունը կարող է իրականացվել, սակայն ցանկալի արդյունքներ չտալ կամ ընդհանրապես չիրականացվել: Իր հերթին, երևույթը կամ գործընթացը կարող է ունենալ իր համակարգաստեղծ որակների, բնորոշիչների, չափորոշիչների և էության պահպանման ունակություն կամ չունենալ նման ունակություն կամ ժամանակի ընթացքում կորցնել այն: Անվտանգության նկատմամբ կենսաբանական և սոցիալական համակարգերի պահանջմունքը կարող է բավարարվել, կարող է՝ ոչ: Հետազոտողը երբեք չպետք է անտեսի անվտանգության այդ կարևորագույն բնութագրիչի մասին, հակառակ դեպքում կարող են առաջանալ ոչ ճշգրիտ գնահատականների և դրանց հիման վրա արված սխալ հետևությունների որոշակի ռիսկեր:

Ավելորդ չէ նշել, որ մարդու անվտանգություն կամ անհատի անվտանգություն եզրը (human security), ի տարբերություն «պետության անվտանգություն» եզրի՝ ի հայտ է եկել 1994թ. ՄԱԿ-ի փաստաթղթերում, ընդ որում վերջինս ունի բավականին լայն նշանակություն: Մարդու անվտանգությունն այնպիսի քրոնիկ սպառնալիքների բացակայությունն է, ինչպիսիք են սովը, հիվանդությունները, բռնաճնշումները: Նեղ բացատրությունով՝ մարդու անվտանգությունը նշանակում է պետության կամ այլ կազմակերպված քաղաքական դերակատարի կողմից ժողովրդի նկատմամբ քաղաքական բռնության բացակայությունը [10]:

Վերոնշյալի համատեքստում նշենք, որ մարդկության զարգացման ժամանակակից փուլում, որը բնորոշվում է գիտական, տեխնոլոգիական, տեղեկատվական, ռազմական ոլորտում արձանագրված աննախադեպ նվաճումներով, անվտանգություն եզրը կիրառվում է ինչպես նեղ, այնպես էլ՝ լայն իմաստով: Նեղ իմաստով՝ օրինակ՝ ձեռնարկություններում կիրառվում է անվտանգության տեխնիկա եզրը՝ որպես պաշտպանության նախատեսված միջոցառումների համաձայն շահագործման տեխնիկական ցուցանիշների պահպանում: Լայն իմաստով՝ եզրույթը բացատրվում է որպես փիլիսոփայական կատեգորիա և կապվում է կոնկրետ օբյեկտների կենսունակության և կենսակայունության արտահայտ-

ման ինչ-որ արստրակտ ձևի հետ: Անվտանգությունը դիտարկվում է նաև որպես օբյեկտի, երևույթի կամ գործընթացի ունակություն՝ պահպանելու սեփական հիմնական բնութագրիչները, չափորոշիչները, էությունը՝ այլ առարկաների, երևույթների կամ գործընթացների պաթոզեն, քայքայիչ ազդեցությունից [11]: Այստեղ մենք անվտանգություն հասկացությունը կօգտագործենք առավելապես լայն իմաստով:

Ն. Ռիբակովի կարծիքով. «Լիովին բնական է թվում այն փաստը, որ անվտանգությունն արդեն իսկ առօրյա գիտակցության մեջ զուգորդվում է ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկի արտաքին և ներքին սպառնալիքներից պաշտպանվածության հետ: Այն կարող է ներկայացվել որպես ֆունկցիա, որի փաստարկներն են՝ ա) պաշպանվածությունը և բ) սպառնալիքը: Հետևաբար, որքան բարձր է (ուժեղ, ուժգին) սպառնալիքը, այդքան բարձր (ամուր, ուժեղ) պետք է լինի պաշտպանվածությունը: Քանի որ հասարակությունն իր մեջ ընդգրկում է անհատներ, ուստի անհրաժեշտ է պաշտպանել նրանց կյանքը, առողջությունը, շահերը, իդեալները, ազատությունը, արժեքները և այլն: Քանի որ հասարակությունը իրականության հատուկ տեսակ է՝ իրեն բնորոշ օրենքներով և ոլորտներով, անհրաժեշտ է պաշտպանել նրա գործառնությունը և գոյությունը» [12]:

1.2. ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Ներկայիս արագ փոփոխվող աշխարհում տեղի ունեցող գործընթացները և աննախադեպ թափ ստացած համահարթեցումը, երբ պետությունների միջև գծված քաղաքական սահմանները կորցնում են իրենց երբեմնի նշանակությունը, իսկ վերազգային կազմակերպությունները աստիճանաբար փոխարինում են ազգային պետության ավանդական ինստիտուտին՝ ի հայտ են գալիս նոր սերնդի մարտահրավերներ, որոնց համարժեք պատասխանելու և արդյունավետ կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկելու հիմնախնդիրը սեփական անվտանգությամբ մտահոգվող յուրաքանչյուր պետության առաջնահերթություններից է: Ակնհայտ է նաև, որ 21-րդ տեղեկատվական դարաշրջանում պետությունների միջև տեղի ունեցող հակամարտությունները հաճախ շեղվում են ավանդական ռազմական բնույթից և ստանում են բոլորովին նոր ձև ու բովանդակություն՝ տեղեկատվական, հոգեբանական, տնտեսական և տարատեսակ այլ պատերազմների տեսքով, ինչն ԱԱ ապահովման համար պատասխանատու մարմինների և ԱԱ խնդիրներով զբաղվող ակադեմիական հանրության համար որակապես նոր խնդիրներ է առաջ քաշում:

Խոսելով ԱԱ մասին՝ պետք է ընդգծել, որ համապատասխան գրականության մեջ ազգային բառը օգտագործվում է ոչ թե էթնիկ իմաստով, այլ որպես ազգ-պետություն (nation-state), այսինքն՝ հիմքում դրված է առավելապես պետական իմաստային ծանրաբեռնվածությունը:

ԱԱ տեսությունը չափազանց բարդ և բազմաշերտ հիմնահարցերի համալիր է, սակայն փորձենք ընդհանուր գծերով ցույց տալ մեզանում թերևս նոր, իսկ Արևմուտքում՝ արդեն իսկ որպես քաղաքագիտական ինքնուրույն ուղղություն ձևավորված ԱԱ տեսության որոշ բնութագրիչները և տալ սահմանումը:

Որպես քաղաքագիտության առանձին ուղղություն՝ ԱՄՆ-ում արդեն իսկ ձևավորվել է ԱԱ տեսությունը, որը ներառում է հետևյալ ուղղությունները՝

- ռազմավարական տեսլականի հայեցակարգային հիմքեր,
- միջազգային հարաբերությունների կանխատեսում,
- ԱԱ ազգային դոկտրինները և ռազմավարությունները (հայեցակարգերը),
- դիվանագիտական ռազմավարություն,
- տնտեսական ռազմավարություն,
- աշխարհառազմավարական պլանավորում,
- ռազմական ռազմավարություն և ռազմական շինարարության պլանավորում,
- ռազմական կանխատեսում [13]:

Մինևույն ժամանակ, ԱԱ տեսության օբյեկտն է անձի, հասարակության և պետության սոցիալական շահերի համակարգը, իսկ ԱԱ տեսության առարկան՝ արտաքին և ներքին սպառնալիքներից անձի, հասարակության և պետության շահերի պաշտպանությունը, ԱԱ ապահովման օրինաչափությունները և սկզբունքները:

Ազգային անվտանգություն եզրը անգլերեն *national security* հասկացության թարգմանությունն է, որը սկզբունքորեն կարող է թարգմանվել և՛ որպես ազգային, և՛ որպես պետական անվտանգություն: Սակայն, կարծում ենք, որ ներկայումս առավել օրինաչափ և նպատակահարմար է օգտագործել ազգային անվտանգություն եզրույթը՝ հաշվի առնելով այն, որ այդ տերմինն է օգտագործվում է նաև մեր իրավական փաստաթղթերում, օրինակ՝ Ազգային անվտանգության մարմինների մասին ՀՀ օրենք, Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին ՀՀ օրենք, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն, և այլն:

Ազգային անվտանգություն եզրույթը պաշտոնապես շրջանառության մեջ է հայտնվել անցյալ դարասկզբին. 1901թ. ԱՄՆ նախագահ Թեոդոր Ռուզվելտն իր ուղերձում հայտնել էր, որ ԱՄՆ

ժողովրդի ԱԱ շահերը պահանջում են Պանամայի ջրանցքի անեքսիան, որը թեև կառուցվել էր ինքնիշխան պետության տարածքում, սակայն ամերիկյան գումարներով: Ազգային անվտանգություն եզրույթը անմիջապես յուրացվեց մամուլի կողմից և աստիճանաբար ներմուծվեց քաղաքական և գիտական բառապաշար [14]:

Հատկանշական է, որ այս եզրույթը տարբեր երկրներում նույն իմաստով և բովանդակությամբ երբեմն տարբեր կերպ է անվանվում: Այսպես, Ֆրանսիայում պաշտոնական փաստաթղթերում ընդունված է օգտագործել ոչ թե ազգային անվտանգություն, այլ՝ ազգային պաշտպանություն կամ ազգի պաշտպանություն եզրերը [15]:

Խոսելով ԱԱ հասկացության սահմանման մասին՝ հարկ է նշել, որ մասնագիտական գրականության մեջ չկա դրա վերաբերյալ միասնական և համընդհանուր կերպով ընդունելի սահմանում: Ինդրի հետազոտմամբ զբաղվող արտերկրի և հայրենական տարբեր հեղինակների մոտ կարող ենք հանդիպել, թեկուզ հաճախ համանման իմաստն արտահայտող, սակայն տարբեր ձևակերպում ստացած սահմանումներ: Այսպես, ամերիկացի քաղաքագետ և լրագրող Ու. Լիպմանը, ով ժամանակին ներմուծեց *սառը պատերազմ* տերմինը, տվել է նաև ԱԱ հասկացության առաջին սահմանումներից մեկը. «Պետությունը գտնվում է անվտանգության վիճակում, երբ նա ստիպված չէ պատերազմից խուսափելու նպատակով զոհաբերել իր շահերը, և երբ նա ի վիճակի է պատերազմի օգնությամբ պաշտպանել իր շահերը նրանց հանդեպ ոտնձգության դեպքում» [16]:

Իսկ արդեն ԱՄՆ պաշտպանության նախարարության ռազմական և հատուկ տերմինների բառարանում ԱԱ սահմանվում է որպես հավաքական տերմին, որն ընդգրկում է ԱՄՆ ազգային պաշտպանությունը և արտաքին հարաբերությունները: Պայմաններ, որոնք ապահովում են մասնավորապես՝ ա) ցանկացած պետության կամ պետությունների խմբի նկատմամբ ռազմական կամ պաշտպանական առավելություն, բ) նպաստավոր դիրք արտաքին

տնտեսական հարաբերություններում, գ) պաշտպանական քաղաքականություն, որն ի վիճակի է հաջողությամբ դիմակայել թշնամական կամ կործանարար գործողություններին՝ դրսից կամ ներսից, բացահայտ կամ թաքնված [17]:

Ըստ ամերիկյան այլ փորձագետների՝ ԱԱ ազգային ինստիտուտների ունակությունն է ամերիկացիներին կամ նրանց ազգային շահերին վնաս պատճառելու նպատակով հակառակորդների կողմից ուժի կիրառման կանխարգելումը և դրանում ամերիկացիների վստահությունը [18]:

ՌԴ մինչև 2020թ. ընդունված ԱԱ ռազմավարության մեջ տեղ է գտել հետևյալ սահմանումը. «Ազգային անվտանգությունը անձի, հասարակության և պետության արտաքին և ներքին սպառնալիքներից պաշտպանվածության վիճակն է, որը թույլ է տալիս ապահովել սահմանադրական իրավունքները, ազատությունը, քաղաքացիների կյանքի արժանապատիվ որակն ու մակարդակը, ՌԴ ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը և կայուն զարգացումը, երկրի պաշտպանությունը և անվտանգությունը» [19]:

Իր հերթին, ռուս հետազոտող Ս.Ստեպաշինը ԱԱ բնութագրում է որպես հասարակական հարաբերությունների որակական վիճակ, որը կոնկրետ պատմական և բնական պայմաններում ապահովում է առաջընթաց զարգացում վտանգներից, որոնց ի հայտ գալու աղբյուրը հանդիսանում են ներքին և արտաքին հակասությունները [20]:

Հատկանշական է՝ 2005թ. ՀՀ Նախագահին առընթեր Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի ՀՀ ԶՈՒ հրամանատարական կազմի համար «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության ուղենիշները» զեկուցման մեջ տեղ գտած ձևակերպումը. «Հայաստանի ազգային անվտանգությունը Հայաստանի Հանրապետության և հայ հասարակության անվտանգ գոյությունն է՝ որպես սոցիալական-իրավական պետություն և քաղաքացիական հասարակարգ» [21]:

«ՈՆ Դ. Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի կողմից հրատարակված հայերեն-ռուսերեն-անգլերեն անվտանգային-պաշտպանական բառարանում ԱԱ սահմանվում է որպես ռեալ և հնարավոր արտաքին ու ներքին սպառնալիքներից անձի, ընտանիքի, հասարակության ու պետության կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածության վիճակ: Ապահովվում է պետության ռազմական, քաղաքական, տնտեսական, սոցիալական, բնապահպանական և այլ կարողություններով [22]: Նույն սահմանումը հանդիպում ենք նաև քաղաքական գիտությունների դոկտոր, գեներալ-մայոր Հ. Քոթանջյանի աշխատությունում [23]:

Հայրենական հետազոտողներից տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա. Մարկոսյանը որպես ԱԱ նեղ սահմանում՝ առաջարկում է հետևյալ ձևակերպումը. «Ըստ անվտանգության նեղ սահմանման՝ ԱԱ ներառում է տարածքի պաշտպանություն, արտաքին քաղաքականություն, հետախուզություն և հակահետախուզություն: Ինչպես տեսնում ենք, ազգային անվտանգության նեղ սահմանումը կենտրոնացած է համակարգի և արտաքին աշխարհի հարաբերությունների ոլորտում» [24]: Ըստ Ա. Աղայանի աշխատության մեջ տեղ գտած սահմանման՝ ԱԱ-ն «...ազգի կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածությունն է, որը հնարավորություն է տալիս պահպանվել և զարգանալ որպես ազգ» [25]:

Այսպիսով, բավարարվելով վերոնշյալ հեղինակների կողմից բերված սահմանումներով և մեր կողմից ԱԱ սեղմ կերպով ձևակերպելով որպես պետության, հասարակության և անձի պաշտպանվածության վիճակ՝ պարտավոր ենք հղում կատարել նաև ՀՀ օրենսդրությանը, որտեղ Ազգային անվտանգության մարմինների մասին ՀՀ օրենքի 1-ին հոդվածում տեղ է գտել ԱԱ հետևյալ ձևակերպումը. «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությունը պետության և հասարակության այնպիսի կացությունն է, երբ ապահովված է անձի, հասարակության և պետության անվտանգությունը, երկրի տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը, սահմանադրական կարգը, տնտեսության բնա-

կանոն զարգացումը, հասարակության նյութական և հոգևոր արժեքների, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, շրջակա միջավայրի պաշտպանությունը ներքին ու արտաքին սպառնալիքներից [26]:

Վերոնշյալի համատեքստում հարկ է նշել, որ Հայաստանի ԱԱ ոլորտում գործող հիմնարար փաստաթղթերից են նաև «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը», «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության հայեցակարգը», «Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգը» և այլն:

Ըստ վերոնշյալ առաջին փաստաթղթի՝ ՀՀ ԱԱ ռազմավարությունը պետության, հասարակության և անհատի անվտանգության ապահովման, կայուն զարգացման, հայ ինքնության պահպանման պետական քաղաքականության համակարգն է: Այն իրականացվում է կենսագործունեության բոլոր ոլորտների համար ժողովրդավարական արժեքների համակարգի վրա հիմնված միասնական պետական քաղաքականության մշակման և իրագործման միջոցով [27]:

«ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն» փաստաթղթում ամփոփված դրույթներն արտահայտում են ԱԱ ապահովման ոլորտում պետության միասնական քաղաքականությունը, որն ուղղված է անձի, հասարակության և պետության գոյությանը և զարգացմանը սպառնացող բոլոր տեսակի ներքին և արտաքին սպառնալիքների կանխատեսմանը, բացահայտմանը, կանխարգելմանը և վերացմանը:

Այսպիսով, ԱԱ հիմնական օբյեկտներին են վերաբերում՝

- անձը, նրա իրավունքներն ու ազատությունները,
- հասարակությունը, նրա նյութական և հոգևոր արժեքները,
- պետությունը, նրա սահմանադրական կարգը, ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը:

1.3. ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԵՐԸ

Հարկ է նշել, որ գոյություն ունեն ԱԱ ապահովման համակարգերի մի քանի պատմական տիպեր.

- պատժիչ-ռեպրեսիվ, որը կողմնորոշված է թշնամիների որոնմանը, ճնշմանը, մեկուսացմանը, վտարմանը և ոչնչացմանը,
- պահպանիչ-ուժային, որն ուղղված է իշխող վերնախավի և քաղաքական ռեժիմի անվտանգության ապահովմանը, որն, իր հերթին, հենված է ուժի վրա և կիրառում է ճկուն միջոցներ՝ կաշառում, խաբեբայություն, կեղծ ընդդիմություն և այլն,
- ժողովրդավարական, որը հիմնված է ժողովրդավարական օրենսդրության վրա, ինչն ենթադրում է անվտանգության ապահովման առավելապես ոչ ուժային մեթոդներ՝ իրավապահ, տեղեկատվական, հոգեբանական, հոգևոր և այլն [28]:

Առաջին երկու պատմական տիպերն առավել բնորոշ են համապատասխանաբար՝ ամբողջատիրական և ավտորիտար (կամ կիսաավտորիտար) հասարակություններին ու պետություններին:

Վերոնշյալի համատեքստում տեղին է ընդգծել նաև, որ ժողովրդավարական պետություններին բնորոշ են ԱԱ ապահովման ոլորտում գործող այնպիսի մարմիններ, որոնք երկրի ղեկավարությանն ապահովում են հատուկ քաղաքական տեղեկատվությամբ, օգնում են մշակել արդյունավետ քայլեր՝ ուղղված այլ պետությունների և թշնամաբար տրամադրված կառույցների կողմից ձեռնարկվող հետախուզական և ընդհատակյա աշխատանքների խփանմանն ու դիմագրավմանը:

Ամբողջատիրական համակարգից ժողովրդավարականին անցման փուլում գտնվող երկրներին հաճախ բնորոշ են իշխանության և անվտանգության այնպիսի մարմիններ, որոնք լինելով

պետական կառավարման համակարգի մասը՝ իրականացնում են այլ՝ պետական կառույցներին պարտադիր խորհրդատվություն տալու, դրանց գործունեության վրա հսկողություն իրականացնելու գործառույթ, այդ թվում՝ կադրային հարցեր, արտերկրյա գործուղումներ և այլն:

Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը՝ լիովին այլ բնույթ ունեն ամբողջատիրական երկրների ԱԱ ապահովման համար պատասխանատու մարմինները, որոնք, որպես կանոն, ներառված են ոչ միայն պետական կառավարման ոլորտի համակարգում, այլ նաև՝ պետական անվտանգության քաղաքականության իրականացման ոչ սահմանադրական ապահովման ոլորտում:

ԱԱ հարցերը քննարկելիս չենք կարող շրջանցել ազգային շահեր հասկացությանը: Ազգային շահերը կարելի է սահմանել որպես պետության, հասարակության և անհատի գոյության, երկրի ինքնիշխանության, ազգի ինքնության, քաղաքակրթական ինքնատիպության պահպանման և կայուն զարգացման համար գերակա նշանակություն ունեցող քաղաքական, տնտեսական, սոցիալական, հոգևոր, մշակութային և այլ պահանջմունքների համախումբ:

Յուրաքանչյուր պետության ազգային շահերը ձևավորվում են իր հասարակության միասնական նպատակների, սեփական առաքելության գիտակցման, հոգևոր և բարոյական արժեքների վրա: Ազգային շահերը և կարիքները լինում են հիմնարար կամ կենսական և ընթացիկ՝

- հիմնարար շահերն են պետության և այն ձևավորող ազգի (կամ ազգերի) անվտանգությունը, բնականոն զարգացումը, տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը, սահմանադրական կարգի պահպանումը, մշակութային և քաղաքակրթական ինքնատիպությունը,
- ընթացիկ են այն շահերը, որոնք որոշվում են ընթացիկ իրավիճակով և երկրի զարգացման ընտրված ուղղության ապահովմամբ:

Ազգային շահերը կարելի է դասակարգել նաև ըստ հետևյալ մակարդակների՝

- անհատական,
- խմբային,
- կորպորատիվ,
- հասարակական,
- ազգային,
- համամարդկային:

Ըստ գործունեության ոլորտների՝

- քաղաքական,
- ռազմական,
- տնտեսական,
- սոցիալական,
- տեղեկատվական,
- մշակութային,
- հոգևոր:

Ըստ սուբյեկտների՝

- անհատի,
- հասարակության,
- պետության,
- տարածաշրջանի
- երկրների դաշինքի,
- համաշխարհային հանրության:

Բազմաթիվ հեղինակների կարծիքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անբարենպաստ ազդեցությունների նկատմամբ անձի, հասարակության, պետության կենսական կարևորություն ունեցող ազգային շահերի պաշտպանվածության վիճակը կազմում է անվտանգության առարկան: Սակայն այս ամենը, ըստ մեր պատկերացման, անչափ կարևոր, սակայն առարկայի միայն առանձին կողմերն են, որոնք բովանդակության տեսակետից ենթակա են որոշակի փոփոխությունների: Այսպես, անձի, հասարակության և պետության շահերը երկրի զարգացման պատմական տարբեր ժամանակաշրջաններում կարող են տարբեր լինել:

Ակնհայտ է, որ անվտանգության համակարգի թուլությունը, դրա կարևորության թերագնահատումն անխուսափելիորեն վերածվում է մեծ արհավիրքների. պետականության կորստի, ժողովուրդների հայրենագրկման, ցեղասպանությունների, ներքին և արտաքին հակամարտությունների, բազմաբնույթ ճգնաժամերի, նյութական, հոգևոր և բարոյական արժեքների, ավանդական կենսաձևի քայքայման, բարքերի անկման, այլասերման և, ի վերջո, կործանման: Իրենց անվտանգության նկատմամբ պատշաճ հոգատարություն չդրսևորող պետություններն ու ժողովուրդները դառնում են անկենսունակ և դուրս շարտվում պատմության թատերաբեմից՝ կլանվելով այլ սուբյեկտների ու քաղաքակրթությունների կողմից՝ նրանց համար դառնալով պարարտացուցիչ նյութ՝ զիջելով սեփական կենսատարածքը և ազգային հարստությունը:

Ամփոփելով հարցի քննարկումը՝ նշենք, որ ԱԱ համակարգի արդյունավետությունը, ԱԱ ապահովման համար պատասխանատու մարմինների աշխատանքի որակն ու արհեստավարժությունը՝ ցանկացած երկրի իմունային, դիմադրական ցուցիչներն են: Հատկանշական են այս կապակցությամբ հայ իմաստասիրական մտքի հանճարեղ ներկայացուցիչ, ականավոր ազգային գործիչ Գարեգին Նժդեհի մշտարդիական խոսքերն առ այն, որ սեփական ուժերով ինքնապաշտպանվելու անընդունակ ժողովուրդները պատժվում են մահվամբ [29]:

1.4. ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱԱ տեսության հարցերը քննարկելիս չենք կարող շրջանցել մի շարք հասկացություններ, որոնց էության և բովանդակության սպառիչ բացահայտումն ու ճշգրիտ սահմանումն առանցքային նշանակություն ունեն ԱԱ տեսության խնդիրների ուսումնասիրման համար: Այդ համատեքստում պետք է նշել, որ ԱԱ տեսության վերաբերյալ հրատարակված բազմաթիվ թե՛ հայրենական, և թե՛ օտարերկրյա, նույնիսկ մասնագիտական գրականության մեջ չկան դրա՝ անկյունաքարային հասկացություններ հանդիսացող մի շարք հասկացությունների, այդ թվում՝ վտանգ, սպառնալիք, ռիսկ, մարտահրավեր, միասնական և համընդհանուր կերպով ընդունելի սահմանումներ, ինչի պատճառով այդ եզրույթների կիրառման ժամանակ երբեմն շփոթ է առաջանում:

Յուրաքանչյուր հեղինակ կամ բացատրական բառարան տալիս է վերոնշյալ հասկացությունների իր ուրույն մեկնաբանությունն ու սահմանումները, որոնք թեև որպես կանոն կրում են համանման իմաստային ծանրաբեռնվածություն, սակայն հաճախ ամբողջովին նույնական չեն: Ուստի փորձենք ներկայացնել և քննարկել նշված խնդրի վերաբերյալ որոշ հետազոտողների կարծիքները, պաշտոնական փաստաթղթերում տեղ գտած սահմանումները, բերված բացատրությունները և մեր կողմից կատարված եզրակացությունները՝ հատկապես կենտրոնանալով վտանգ և սպառնալիք հասկացությունների վրա, որոնց կիրառման ժամանակ էլ առավել հաճախ ի հայտ է գալիս այդ խնդիրը:

Այսպես, ըստ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության մեջ տեղ գտած սահմանման՝ «Ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքներն են պետության, հասարակության, ընտանիքի և անհատի գոյության դեմ ուղղված, դրանց հիմքերը խարխլող կամ հեռանկարային վտանգ ներկայացնող երևույթները, գործողություններն ու անգործողու-

նը: Այդպիսի սպառնալիքները կարող են ծագել երկրի ներսում (ներքին սպառնալիքներ) և երկրի սահմաններից դուրս (արտաքին սպառնալիքներ)» [30]:

Հատկանշական է նաև Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինում ռազմական անվտանգության սպառնալիքների սահմանումը. «Ռազմական անվտանգության սպառնալիքները Հայաստանի Հանրապետության պաշտպանունակության վրա բացասաբար ազդող, նրա ինքնիշխան գոյության և կայուն զարգացման համար վտանգներ հարուցող պայմանների, գործոնների և գործողությունների համախումբ են և ունեն արտաքին և ներքին բնույթ» [31]:

ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի 2009թ. հրատարակած Անվտանգային-պաշտպանական բառարանում վտանգը (danger) սահմանվում է որպես «վիճակ, որի դեպքում կա համակարգին վնաս պատճառելու հնարավորություն», իսկ սպառնալիքը (threat) ռեալ կամ հնարավոր երևույթն է, գործընթաց, որը կարող է վնաս պատճառել պետության, հասարակության կամ անձի շահերին: Այն բնութագրվում է և՛ մտադրության, և՛ հնարավորության առկայության պարագայում: Սպառնալիքը, ըստ իր աղբյուրի, կարող է լինել արտաքին և ներքին, ըստ ներազդման ոլորտի՝ համաչափ և անհամաչափ: Արտաքին անհամաչափ սպառնալիքն, իր հերթին, սահմանվում է որպես սպառնալիք, որի աղբյուրներն են տվյալ պետության սահմաններից դուրս գտնվող ոչ պետական կառույցները՝ ներառյալ հասարակական, կրոնական, ահաբեկչական կազմակերպությունները, ինչպես նաև այլ պետությունների տարածքում տեղի ունեցող կործանարար բնական ու տեխնածին աղետները և տարածված համաճարակները: Արտաքին համաչափ սպառնալիքը բնութագրվում է որպես սպառնալիք, որի աղբյուրն է մեկ այլ պետություն (պետությունների դաշինք) կամ նրա որևէ կառույց: Ներքին անհամաչափ սպառնալիքը, նույն բառարանի համաձայն, այն սպառնալիքն է, որի աղբյուրներն են տվյալ պետության տարածքում գործող ոչ պետական կառույցները, ինչպես

նան պետության կողմից անվերահսկելի երևույթներն ու գործընթացները: Եվ վերջապես ներքին համաչափ սպառնալիքը սահմանվում է որպես սպառնալիք, որի աղբյուրը պետությունն ինքն է՝ իր ոչ բավարար զարգացածության պատճառով [32]:

Իսկ արդեն Ստեփան Մալխասյանցի «Հայերենի բացատրական բառարան»-ում վտանգը մեկնաբանվում է որպես դրություն, երբ կարող է պատահել չարիք կամ փորձանք, միաժամանակ՝ երկյուղալի դրություն, փորձություն, նեղություն, չարչարանք, հանցանք, պատիժ, հիվանդ, տկար [33]: Նույն բառարանում սպառնալիքը մեկնաբանված է որպես «Խոսքով կմ (կամ. հեղ.) գործով մեկին երկիւղ ազդելը՝ թէ նրան չարիք կհասցնէ, չարիք հասցնելու երկիւղով ահաբեկելը, ճնշում գործ դնելը: Ընդհանրապէս՝ երկիւղալի դրութիւն» [34]:

Ինչ վերաբերվում է արտերկրի մասնագետների մոտեցումներին՝ նկատենք, որ, մասնավորապես, ամերիկյան փորձագետ Ջ. Քոլինսը (Collins J.) սպառնալիքը բնութագրում է որպես որևէ երկրի, երկրների խմբի կամ երևույթների կողմից սպառնալու հնարավորություն [35]: Իսկ հետազոտող Վ. Պիրումովը վտանգները սահմանում է որպես անհատին, հասարակությանը և պետությանը վնաս հասցնելու օբյեկտիվորեն գոյություն ունեցող հնարավորություն [36]:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ մեր ներկայացրած հեղինակների կողմից վտանգ և սպառնալիք հասկացությունների սահմանումների մեջ կան որոշ նմանություններ, սակայն դրանք երբեմն հստակորեն չեն սահմանազատվում:

Հավելենք, որ ռազմագիտական և քաղաքագիտական ոլորտին վերաբերող գրականության մեջ վտանգ և սպառնալիք հասկացությունները բավականին լայն կիրառություն ունեն, ինչը հաճախ կիրառվում է շփոթության աստիճանի նման համատեքստում: Այս երկու հասկացությունների և դրանց բնորոշող չափորոշիչների խստորեն սահմանազատումն երբեմն դյուրին խնդիր չէ:

Այնուամենայնիվ, այժմ ռազմագիտական և քաղաքագիտական որոշ շրջանակներում արմատավորվում է այն կարծիքը, որ

սպառնալիքը վտանգի ծայրահեղ մակարդակն է կամ ուղղակի անմիջական վտանգը, իսկ վտանգը հնարավոր կամ պոտենցիալ սպառնալիքն է:

Վերոնշյալի համատեքստում բերենք մեկ պարզունակ օրինակ. շենքի տանիքից կախված մեծ սառցաբեկորը վտանգ է ներկայացնում անցորդների համար, իսկ արդեն պոկվելու եզրին գտնվող սառցաբեկորը անցորդների համար վերածվում է սպառնալիքի:

Վտանգ և սպառնալիք կատեգորիաները բնորոշելիս ուշադրության է արժանի նաև Վ. Մանիլովի դիտարկումը, ըստ որի՝ սպառնալիք հասկացությունը պետք է բացատրել վտանգ կատեգորիայի միջոցով. «Սպառնալիքը կենսական կարևոր ազգային շահերին և ԱԱ վնաս հասցնելու անմիջական վտանգն է, որը դուրս է գալիս լոկալ շրջանակներից և շոշափում է հիմնական ազգային արժեքները՝ պետականություն, տարածքային ամբողջականություն» [37]:

Ամփոփելով մեր կողմից կատարված վտանգ և սպառնալիք հասկացությունների մասնագիտական գրականության մեջ առկա բացատրությունների համառոտ ներկայացումը՝ փորձենք կատարել որոշակի եզրակացություններ և ներկայացնել նաև խնդրի վերաբերյալ մեր մոտեցումները.

- Սպառնալիքը վտանգից տարբերակվում է վնասի հասցման պատրաստության մակարդակով: Վտանգը կարելի է սահմանել որպես լարվածության կուտակման փուլ, երբ մի սուբյեկտ կարող է, սակայն պատրաստ չէ ուժ կիրառել իր նպատակներին հասնելու համար:
- Անվտանգության համատեքստում սպառնալիքը պետք է ներառի երկու բաղադրիչ՝ մտադրություն և անվտանգության շահերին վնաս հասցնելու հնարավորություն, իսկ վտանգը սահմանափակվում է այդ բաղադրիչներից միայն մեկի առկայությամբ:
- Սպառնալիքը պարտադիր ունենում է կոնկրետ և հասցեական բնույթ, ինչն ենթադրում է իրական սուբյեկտի (աղ-

բյուրի) և օբյեկտի առկայություն, որին ուղղված է գործողությունը: Ի տարբերություն սպառնալիքի՝ վտանգը կրում է հիպոթետիկ, հաճախ անհասցե բնույթ, իսկ նրա սուբյեկտն ու օբյեկտը հստակորեն կարող են չարտահայտվել:

Այսպիսով, վերլուծելով սպառնալիք և վտանգ հասկացություններն ու դրանց բովանդակային տարբերությունները՝ կարող ենք հետևություն անել, որ անվտանգության շահերի սպառնալիքը սուբյեկտներից մեկի պատրաստականությունն է (մտադրություն և հնարավորություն) վնաս հասցնել այլ սուբյեկտի կենսական շահերին՝ վերջինիս հետ ունեցած հակասությունն իր օգտին լուծելու, իր կամքը պարտադրելու և միակողմանի առավելություն ստանալու նպատակով:

Ինչ վերաբերում է մարտահրավեր և ռիսկ հասկացություններին, ապա պետք է նշենք, որ դրանց բովանդակությունն ամբողջովին և համապարփակ կերպով բացահայտվում է վերևում արդեն իսկ հիշատակված «Անվտանգային-պաշտպանական բառարան»-ում, որտեղ մարտահրավեր անվտանգությանը (challenge to security) սահմանվում է իբրև այնպիսի ռեալ վտանգի հատկանիշ, որը հնարավոր վնասի նախականիման և/կամ նվազեցման համար հակազդում է պահանջում, ինչպես նաև անվտանգության սուբյեկտին հրավիրում է մրցակցության: Անհրաժեշտություն է ստեղծում անվտանգության առկա ռեսուրսները համապատասխանեցնելու այդ բնագավառում ծագած մրցակցության պահանջներին: Միաժամանակ՝ ռիսկը (risk) սահմանված է որպես որոշակի ծանրությամբ ու բովանդակությամբ վնաս կրելու հնարավոր հատկանիշ, անվտանգության ապահովմանն ուղղված գործունեության փաստացի արդյունքների շեղում անվտանգության նախատեսված չափանիշներից [38]:

Իսկ ԱՄՆ պաշտպանության նախարարության «Ռազմական և հատուկ տերմինների բառարան»-ում ռիսկը սահմանվում է որպես վտանգների հետ կապված կորուստների հավանականություն [39]:

Հավելենք, որ ռիսկը որոշ իրադարձությունների հավանականության և դրանց հետևանքների համադրությունն է, միաժամանակ, այն բնութագրում է այնպիսի իրավիճակ կամ գործընթաց, որն ունի ոչ բարենպաստ հետևանքներով ելքի հավանականություն:

Ամփոփելով՝ հարկ է ընդգծել, որ հիշատակված հասկացությունների ճշգրիտ բնորոշումը, դրանց էության և բովանդակության ամբողջական բացահայտումը մեծ կարևորություն ունի ԱԱ տեսության բարդ, բազմաբնույթ, բազմամակարդակ և բազմաշերտ հարցերը քննարկելու, բացահայտվող խնդիրները ճշգրտորեն թիրախավորելու և անսխալ լուծումներ առաջարկելու համար: Պակաս կարևոր չէ նաև այն, որ ցանկացած հարցին ակադեմիական, փորձագիտական մոտեցումը պահանջում է քննարկվող հարցերի շրջանակներում շոշափվող հասկացությունների հնարավորին չափ ամբողջական և համապարփակ սահմանում, ինչը դրականորեն է անդրադառնում հետազոտողի կողմից իր առջև դրված խնդրի արդյունավետ իրականացման վրա:

ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ

- Ի՞նչ է նշանակում անվտանգություն եզրը:
- Որո՞նք են այն վեց հիմնական սպառնալիքը, որոնց լուծմամբ համաշխարհային հանրությունը պետք է զբաղվի ներկայում և առաջիկա տասնամյակներում:
- Որո՞նք են ազգային անվտանգություն հասկացության հիմնական սահմանումները:
- Ի՞նչ ուղղություններ է իր մեջ ներառում ԱԱ տեսությունը:
- Որո՞նք են ՀՀ ԱԱ ոլորտում գործող հիմնարար փաստաթղթերը:
- Որո՞նք են ԱԱ հիմնական օբյեկտները:
- Որո՞նք են ԱԱ ապահովման հիմնական պատմական տիպերը:
- Ի՞նչ է ազգային շահը և ինչպե՞ս է այն դասակարգվում:
- Որո՞նք են ԱԱ առանցքային հասկացությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Միացյալ ազգերի կազմակերպության պաշտոնական կայք, տես՝ www.un.org/secureworld/report.pdf
2. Кулагин В.М., Современная международная безопасность: учебное пособие/ В.М. Кулагин. –М.: КНОРУС, 2012. С. 17.
3. Նշվ. աշխ., էջ 13:
4. Гулиев М.А., Коротец И.Д., Чернобровкин И.П., Этноконфликтология. – М.: ИКЦ «МарТ»; Ростов н/Д: Издательский центр «МарТ», 2007. С. 57.
5. Диев В. Безопасность как междисциплинарный феномен // Проблемы национальной безопасности России в XX–XXI вв. Уроки истории и вызовы современности: материалы международной научно-практической конференции. Краснодар, 2010. С. 134-136.
6. Серебрянников В., Дерюгин Ю., Ефимов Н., Ковалев В., Безопасность России и армия. М., 1995.
7. Дзлиев, М., Романович А., Урсул А., Проблемы безопасности: теоретико-методологические аспекты, М., 2001.
8. Урсул А., Урсул Т. Феномен безопасности в синергетическом ракурсе // Социально-гуманитарное знание, 2008. № 4.
9. Бабосов Е. Безопасность // Социология: энциклопедия. Мн., 2003.

10. Никитина Ю.А., Международные отношения и мировая политика: Введение в специальность: Учеб. пособие для студентов вузов / Ю.А. Никитина. – М.: Аспект Пресс, 2009. С. 95.
11. Солонина В. Региональная безопасность как система направленности и обеспечения устойчивого социального развития: автореф. дис. д-ра соц. наук. Ростов н/Д., 2008.
12. Рыбаков Н.С., Безопасность как защищенность // Проблемы национальной безопасности России в XX – XXI вв. Уроки истории и вызовы современности: материалы международной научно-практической конференции. Краснодар, 2010. С. 413-414.
13. Логунов А. Б. Региональная и национальная безопасность: Учебное пособие. 2-е изд. перераб. и доп.– М.: Вузовский учебник. ИНФРА-М, 2011. С. 89.
14. Основы национальной безопасности: учеб. пособие для студ. высш. проф. учеб. заведений / [Л.А. Михайлов], М., Издательство центр «Академия», 2008. С. 45.
15. Логунов А., նշվ. աշխ., էջ 9:
16. Кулагин В.М., նշվ. աշխ., էջ. 15:
17. Department of Defense. Dictionary of Military and Associated Terms. Joint publication 1-02. 12, April, 2001 (As amended through April, 2010). P. 320, տես՝ www.fas.org/irp/doddir/dod/jp1_02-april-2010.pdf
18. Sarkesian S., Williams J., Cimbala S. US National Security: Policymakers, Processes, and Politics (Fifth Edition), 2013. P. 2. Տե՛ս <https://www.rienner.com/uploads/504fb4693f591.pdf>
19. Տե՛ս ՌԴ Ազգային անվտանգության խորհրդի պաշտոնական կայք, <http://www.scrf.gov.ru/documents/99.html>
20. Степашин С.А., Безопасность человека и общества (политико-правовые вопросы). СПб., Юридический ин-т МВД РФ, 1994. С. 6.
21. «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության ուղենիշները», ՀՀ Նախագահին աղընթեր Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի զեկուցումը ՀՀ ԶՈւ հրամանատարական կազմի համար, ՀՀ պաշտպանության նախարարություն, Եր., 2005, էջ 11:
22. ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական

- հանդեսի հավելված, Աշխատանքային տետրեր, հատուկ թողարկում, 2009, էջ 99:
23. Քրթանջյան Հ.Ս., Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում, Եր., ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, 2008, էջ 180:
 24. Մարկոսյան Ա., Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները. մեթոդաբանություն և արդյունքներ, Եր., «Նորավանք» ԳԿՀ, 2005, էջ 19:
 25. Աղայան Ա., Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, Եր., «Նորավանք» ԳԿՀ, 2002, էջ 8:
 26. Տե՛ս ՀՀ ԱԱԾ պաշտոնական կայք, <http://www.sns.am/index.php/am/nss-today/legislation/61-law-on-security-bodies>
 27. Տե՛ս ՀՀ ԱԱԽ պաշտոնական կայք, <http://www.nsc.am/index.php?m=28>
 28. Основы национальной безопасности: учеб. пособие для студ. высш. проф. учеб. заведений. С. 45.
 29. Նժդեհ Գարեգին, Հատընտիր, Եր., Ամարաս, 2006, էջ 71:
 30. «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն», ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 17:
 31. «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին», տե՛ս <http://www.mil.am/files/mil-doctrine-arm.pdf>
 32. ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի 2009թ. «Աշխատանքային տետրեր» հավելվածի հատուկ թողարկում, էջ 102-103:
 33. Մալխասեանց Ս., Հայերէն բացատրական բառարան: Չորս հատորով, Եր.: ԵՊՀ հրատ., 2010, Հ. 4: 2-Ֆ, էջ 354:
 34. Նշվ. աշխ., էջ 253:
 35. Collins J. Grand Strategy; Principles and Practices, Annapolis, Md, 1973. P. 14.
 36. Пирумов В.С., Некоторые аспекты методологии исследования проблем национальной безопасности России в современных условиях // Геополитика и безопасность. 1993. № 1. С. 12.

37. Манилов В.Л., Угрозы национальной безопасности России // Военная мысль. 1996. № 1. С. 17.
38. ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի 2009թ. «Աշխատանքային տետրեր» հավելվածի հատուկ թողարկում, էջ 102:
39. Department of Defense. Dictionary of Military and Associated Terms. Joint publication 1-02. 12, April, 2001 (As amended through April, 2010). P. 406, տե՛ս www.fas.org/irp/doddir/dod/jp1_02-april2010.pdf

ԳԼՈՒԽ 2

ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԴԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

- ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ
- ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ
ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ
- ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ
- ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

2.1. ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Լավ բանակներ ունենալուց լավագույնը լավ քաղաքագետներ ունենալն է...

Գարեգին Նժդեհ

21-րդ դարի հարավփոփոխ աշխարհում ապագայի կանխատեսման, պետության տարբեր ոլորտներին վերաբերող արտաքին և ներքին քաղաքականության մշակման և վերջապես՝ ԱԱ ապահովման գործում առանցքային նշանակություն ունեն անցյալ դարի ֆենոմեն հանդիսացող *ուղեղային կենտրոնները*: Գրականության մեջ ուղեղային կենտրոնները հանդիպում են նաև այլ անվանումներով, ինչպիսիք են՝ մտքի ֆաբրիկա, մտքի տրեստ և այլն: Այդպիսի կենտրոնները գիտահետազոտական ինստիտուտների էվոլյուցիոն զարգացման հերթական փուլն են, որոնք կարելի է բնորոշել որպես ինտելեկտուալ արտադրանք թողարկող կազմակերպություններ: Ինչպես ժամանակին դիպուկ նշել է խնդրի հետազոտող Փոլ Դիքսոնը՝ քաղցկեղի կամ աստղադիտարանի հետազոտության կենտրոններն իրենցից ներկայացնում են գիտահետազոտական կենտրոններ, սակայն դրանցից ոչ մեկը մտքի ֆաբրիկա չէ: Մյուս կողմից՝ խումբը, որը կառավարության հանձնարարությամբ կազմում է ապագա քաղաքականության կանխատեսումը, ֆիրման, որը խորհրդատվություն է մատուցում կառավարությանը նոր գիտական մեթոդների հարցերով, գիտնականների խումբը, որը միավորվում է գիտական կոլեկտիվի մեջ տեխնոլոգիաների կամ ժողովրդավարության ապագայի տեխնոլոգիաների ուսումնասիրության համար, դրանք բոլորը մտքի ֆաբրիկաներ են [1]:

Վերոնշյալի համատեքստում հետաքրքրական են հնչում Ա. Սոլոդովնիկովի և Ա. Չերնիշի կարծիքները, ըստ որոնց՝ գլոբալ քաղաքականության ինտելեկտուալ ապահովումն առաջին հերթին կապված է ուղեղային տրեստների կամ ուղեղային կենտրոնների

հետ: Նրանք իրականացնում են գործնական քաղաքական փորձաքննություն, պատրաստում են վերլուծական նյութեր և հիմնարար աշխատություններ: Ինտելեկտուալ արտադրանքի բոլոր այս տեսակները տարբերվում են գլոբալ գործընթացների ռազմավարական տեսլականով, որը հիմնված է աշխարհում քաղաքականության և տնտեսության ոլորտում փոփոխությունների գործընթացներում քաղաքական և սոցիալ-տնտեսական ցանկալի արդյունքների հասնելու վրա: Այդ է ուղեղային կենտրոնների և ակադեմիական հետազոտությունների գործունեության արդյունքների հիմնական տարբերությունը [2]:

Ուշադրության է արժանի նաև Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Սթիվեն Բուշեի մոտեցումը, ով ձևակերպել է չափորոշիչներ, որոնց հիման վրա հետազոտական կազմակերպությունը բնորոշում է որպես ուղեղային կենտրոն.

- գործում է մշտական հիմունքներով,
- մասնագիտացված է քաղաքական ոլորտի համար հանրային կարևոր որոշումների արտադրության գործում,
- ունի աշխատակազմ, որն իր ամբողջ աշխատանքային օրը նվիրում է հետազոտություններին, արտադրում է ինքնատիպ գաղափարներ, իրականացնում է տեղեկատվության համակարգային վերլուծություն և տալիս է խորհրդատվություններ,
- համակարգային վերլուծության արդյունքները ինքնատիպ գաղափարների ձևով հասցվում են քաղաքական գործիչներին և հանրությանը,
- պատասխանատվություն չի կրում կառավարության գործունեության համար,
- ձգտում է անկախության մասնավոր շահերից և սեփական օրակարգի ընտրության մեջ իր հետազոտությունների շրջանակներում պահպանում է ազատությունը,
- հիմնական գործունեությունը չի հանգում կրթական ծառայությունների մատուցմանը և դիպլոմների հանձնմանը,

- ի տարբերություն զուտ կոմերցիոն կառույցների՝ ոչ վերջին հերթին, բացահայտ կամ ոչ բացահայտ նպատակը հանրային բարիքի արտադրությունն է [3]:

Հարկ է նշել, որ ուղեղային կենտրոն կամ անգլերեն՝ *think tank* հասկացությունը շրջանառության մեջ է հայտնվել Երկրորդ աշխարհամարտից հետո: Ներկայումս այդպես են անվանվում այն կազմակերպությունները, որոնց ուսումնասիրության և հետազոտական հետաքրքրությունների շրջանակներում են գտնվում պետության, հասարակության և առանձին կազմակերպությունների արտաքին և ներքին քաղաքականության, դրա մշակման և իրականացման վերաբերյալ բազմաուղրոտ հիմնախնդիրները: Ինչպես նշում է խնդրի հետազոտմամբ զբաղվող Ա. Սիմավորյանը. «Հայտնի իրողություն է, որ Արևմուտքում ուղեղային կենտրոնների աճի միտումները նպաստել են ակադեմիական շրջանակներից դուրս հումանիտար գիտական մտքի զարգացմանը և նոր որակ հաղորդել քաղաքագիտական-ռազմավարական մշակումներին» [4]:

2.2. ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հատկանշական է, որ ուղեղային կենտրոն հասկացությունը առաջին անգամ սկսեց օգտագործվել հանրահայտ RAND (ՌԵՆԴ) կորպորացիայի կողմից անցյալ դարի 40-ական թվականների վերջին: Այս եզրույթն աստիճանաբար յուրացվեց և իր կայուն տեղը գտավ համապատասխան մասնագիտական գրականության մեջ: Այդպես սկսեցին անվանվել այն կազմակերպությունները, որոնք կապված էին քաղաքական, տնտեսական, սոցիալական և ռազմական ոլորտներում գործնական մշակումների հետ:

Սակայն ժամանակակից ուղեղային կենտրոնների նախապատմությունն առավել խոր արմատներ ունի: Այսպես, ըստ Յու. Նիկիտինայի՝ առաջին վերլուծական կենտրոնը, որը գործում էր միջազգային հարաբերությունների և անվտանգության ոլորտում, որն ի դեպ, գործում է առ այսօր, Մեծ Բրիտանիայի Թագավորական Միացյալ ռազմական ինստիտուտն է (Royal United Services Institute): Վերջինս ստեղծվել է 1831թ.¹ որպես զինվորականների գիտական, արհեստավարժ ընկերակցություն: 19-րդ դարի երկրորդ կեսից ինտիտուտը ռազմական ռազմավարության ոլորտում հետազոտությունների, սցենարների մշակումների, կանխատեսումների և խորհրդատվությունների շնորհիվ ազդեցություն է ձեռք բերում [5]:

Ժամանակակից ուղեղային կենտրոններն անցել են ձևավորման ավելի քան հարյուրամյա ճանապարհ: Դեռևս 19-րդ դարի երկրորդ կեսին ԱՄՆ-ի ակադեմիական և համալսարանական շրջանակներում սկսեց արմատավորվել այն գիտակցությունը, որ գիտնականների և քաղաքական գործիչների միջև անհրաժեշտ է փոխադարձ կապ ապահովել: Վերջինիս իրականացման համար նախաձեռնվեց առաջին հերթին Մեծ Բրիտանիայի և Գերմանիայի՝ որպես առաջատար եվրոպական երկրների, փորձի ուսումնասիրությունը: Դրա արդյունքում ստեղծվեցին Սոցիալական գիտություն-

ների ամերիկյան ընկերակցությունը (1865), Տնտեսագիտության ամերիկյան ընկերակցությունը (1885), Քաղաքագիտության ամերիկյան ընկերակցությունը (1903), Ամերիկյան սոցիոլոգիական ընկերակցությունը (1905): Ուշագրավ է, որ ԱՄՆ-ում ստեղծված նշյալ կազմակերպությունների հիմնական տարբերությունը եվրոպականներից այն էր, որ այդ ընկերակցություններն իրենց առաջ խնդիր էին դրել ակտիվորեն համագործակցել քաղաքական գործիչների հետ և գիտական փորձաքննության արդյունքները ներառել առանցքային որոշումների կայացման գործընթացներում [6]:

Նույն տարիներին ԱՄՆ-ում ստեղծվում էին խոշոր բարեգործական հիմնադրամներ, որոնցից շատերը, օրինակ՝ Ռասել Սեյջի հիմնադրամը (1907), Քարնեգի կորպորացիան (1911), Ռոքֆելերի հիմնադրամը (1913), գիտական, փորձագիտական գործունեության ֆինանսավորման գործում մինչև այսօր առաջընթացի դեր են խաղում:

Ըստ էության՝ Ռասել Սեյջի հիմնադրամը, այդ եզրի արդի իմաստով, առաջին ուղեղային կենտրոնն էր ԱՄՆ պատմության մեջ: Սկզբնապես հիմնադրամի ղեկավարությունը ծրագրում էր ԱՄՆ սոցիալ-տնտեսական խնդիրների հետազոտության կազմակերպման համար դրամաշնորհներ տրամադրել՝ այդ աշխատանքների համար ներգրավելով երկրի առաջատար համալսարանների պրոֆեսորների: Սակայն 20-րդ դարի սկզբում համալսարանական շրջանակներում գիտության և դասավանդման միջև առաջնայնությունը տրվում էր դասավանդմանը: Ուստի իրենց նպատակն իրականացնելու համար կազմակերպիչները ստիպված էին գիտնականներին սեփական աշխատակազմում հավաքագրել [7]:

Ժամանակակից ուղեղային կենտրոնների ձևավորման հերթական կարևոր փուլն ամերիկյան վարչախմբի կառավարման և աշխատակազմի հավաքագրման մեթոդի փոփոխությունն էր: Այսպես, Մեծ դեպրեսիայի տարիներին ԱՄՆ նախագահ Ֆ.Դ. Ռուզվելտը նախընտրում էր փորձագետներին անմիջապես կառավարությունում աշխատանքի ընդունել: Դրան հակառակ՝ Հ. Թրումենը դավանում էր կառավարման վարչական ոճը: Վերջինիս նա-

խագահության տարիներին դաշնային կառավարության աշխատակազմի աստիճանական կրճատման գործընթաց սկսվեց: Բազմաթիվ փորձագետներ, որոնք նախորդ շրջանում ընդունվել էին աշխատանքի, դուրս էին բերվել աշխատակազմից: Այդ շրջանին են վերագրվում կառավարության կողմից ֆինանսավորվող ուղեղային կենտրոնների ստեղծումը. 1948թ. անվտանգության և ԱՄՆ շահերի պաշտպանության ոլորտում հետազոտությունների անցկացման համար ստեղծվել է ՌԵՆԴ կորպորացիան, 1961թ. հիմնադրվել է Հադսոնի ինստիտուտը, 1968թ.՝ Քաղաքի հիմնախնդիրների ինստիտուտը:

Հետաքրքրական է, որ երկար ժամանակ, հատկապես *սառը պայտերազմի* տարիներին, այս կառույցները հիմնականում զբաղվում էին անվտանգության և ԽՍՀՄ հետ ռազմավարական դիմակայման հարցերով, սակայն հետագայում նրանց մշակումների շրջանակը էականորեն ընդլայնվել է: Ընդ որում նրանց հետազոտական գործունեության արդյունքների հիմնական սպառողները պետական մարմինների պաշտոնատար անձինք են: ԱՄՆ-ում և Ֆրանսիայում՝ առավելապես գործադիր իշխանության համակարգի, իսկ Գերմանիայում՝ խորհրդարանական քաղաքական կուսակցությունների շրջանակներում [8]:

Անցյալ դարի 70-ական թվականների սկիզբը բնորոշվում է ԱՄՆ-ում ուղեղային կենտրոնների զարգացման որակապես նոր փուլով: Այդ կենտրոնների մեծ մասը, որոնք առաջացել են այս ընթացքում, էականորեն տարբերվում են իրենց նախորդներից: Եթե նախկինում այդպիսի կենտրոններն աշխատում էին առավել գլոբալ, զանգվածային և հանրային նշանակության խնդիրների լուծման, ապա այժմ վերջիններս կենտրոնացել են հիմնականում առավել նեղ, հաճախ քաղաքային կամ նահանգային հարցերի քննարկման վրա [9]:

2.3. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

Մեր օրերում ուղեղային կենտրոնները դառնում են ոչ միայն ներպետական, այլ նաև որոշ դեպքերում գլոբալ հասարակական-քաղաքական դերակատարներ, որոնց ազդեցությունը բավականին հեռու է զուտ գիտական կամ կրթական հաստատության վերաբերյալ հասարակության ունեցած ավանդական պատկերացումներից:

Ներկայումս, ինչպես նշված է ԱՄՆ Փենսիլվանիայի համալսարանի «Ուղեղային կենտրոններ և քաղաքացիական հասարակություն» ծրագրի տնօրեն Ջ. Մաքգանի (James G. McGann) 2013թ. տարեկան զեկույցում, աշխարհի 182 երկրում (մնացած երկրներում նման կենտրոնների գոյության մասին հայտնի չէ) հաշվվում է 6.826 ուղեղային կենտրոն (այսուհետ՝ ՈւԿ), որոնց շուրջ 28% գտնվում է ԱՄՆ-ում: Աղյուսակ 1-ում ներկայացված են ամենաշատ ՈւԿ ունեցող 15 երկրները:

Աղյուսակ 1

Առավել մեծ թվով ուղեղային կենտրոններ ունեցող երկրները

Երկիր	ՈւԿ-ների քանակը
ԱՄՆ	1828
Չինաստան	426
Միացյալ Թագավորություն	287
Հնդկաստան	268
Գերմանիա	194
Ֆրանսիա	177
Արգենտինա	137
Ռուսաստան	122
Ճապոնիա	108
Կանադա	96
Իտալիա	89
Հարավային Աֆրիկա	88
Բրազիլիա	81
Շվեդիա	77
Շվեյցարիա	71

Հատկանշական է, որ այդ հեղինակավոր զեկույցի համաձայն աշխարհի 10 լավագույն ՈւԿ-ից 6-ը ամերիկյան են [10], տե՛ս աղյուսակ 2:

Աղյուսակ 2

**Աշխարհի 10 լավագույն ուղեղային կենտրոնները՝
ըստ երկրների պարկանելության**

	ՈՒԿ անվանումը	Երկիրը
1.	Բրուքինգսի ինստիտուտ (Brookings International)	ԱՄՆ
2.	Չեթմ Հաուս (Chatham House)	Միացյալ Թագավորություն
3.	Հանուն միջազգային խաղաղության Քարնեգիի հիմնադրամ (Carnegie Endowment for International Peace)	ԱՄՆ
4.	Ռազմավարական և միջազգային հետազոտությունների կենտրոն (Center for Strategic and International Studies)	ԱՄՆ
5.	Ստոքհոլմի միջազգային խաղաղության հետազոտությունների ինստիտուտ (Stockholm International Peace Research Institute)	Շվեդիա
6.	Բրյուգել (Bruegel)	Բելգիա
7.	Արտաքին հարաբերությունների խորհուրդ (Council on Foreign Relations)	ԱՄՆ
8.	ՌեՆԴ կորպորացիա (Rand Corporation)	ԱՄՆ
9.	Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտ (International Institute for Strategic Studies)	Միացյալ Թագավորություն
10.	Վուդրո Վիլսոնի գիտնականների աջակցման միջազգային կենտրոն (Woodrow Wilson International Center for Scholars)	ԱՄՆ

Ըստ այդ զեկույցի՝ Հարավային Կովկասի երեք երկրների մեջ ՌԿ-ների քանակով առաջատար է հանդիսանում Ադրբեյջանը, որտեղ գործում են թվով 17 ՌԿ [11], Հայաստանում՝ 14, Վրաստանում՝ 13 ՌԿ [12]: Մեր մյուս հարևանները՝ Թուրքիան և Իրանը ունեն համապատասխանաբար 29 և 34 ՌԿ [13, 14]:

Այստեղ տեղին է նշել, որ ըստ այլ փորձագիտական տվյալների՝ Հայաստանում համանման կենտրոնների թիվն անցնում է երեք տասնյակի սահմանը [15]:

Հատկանշական է, որ ըստ նշյալ զեկույցի՝ Ադրբեջանը ոչ միայն գերազանցում է հարևաններին ՌԻԿ-ների բացարձակ քանակով, այլ նաև՝ ադրբեջանական 2 ՌԻԿ ներկայացված է աշխարհի լավագույն 150 ՌԻԿ-ների ցուցակում, որտեղ, ցավոք, չկա հայաստանյան որևիցե ՌԻԿ: Ադրբեջական ՌԻԿ-ներից այդ ցուցակում տեղ են գտել Ռազմավարական (123-րդ տեղ) և Տնտեսական հետազոտությունների կենտրոնները (132-րդ տեղ): Մեր հարևան Թուրքիան նույն դասակարգման մեջ ներկայացված է երեք կենտրոնով՝ Թուրքիայի տնտեսական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամ (74-րդ տեղ), Լիբերալ մտածողության ընկերակցություն (87-րդ տեղ) և Ռազմավարական հետազոտությունների և վերլուծությունների կենտրոն (142-րդ տեղ): Վրաստանում գործող Խաղաղության, Ժողովրդավարության և զարգացման կովկասյան ինստիտուտը եզրափակում է աշխարհի լավագույն 150 ՌԻԿ-ների ցանկը:

Ուշադրության է արժանի նաև այն, որ ՌԻԿ-ների մեծ մասը ստեղծվել են համալսարանների կողմից, ինչն ընդգծում է նրանց բարձր հետազոտական ներուժը և կապը ակադեմիական գիտության հետ: Բերենք 2013թ. լավագույն համալսարանական ՌԻԿ-ների լավագույն տասնյակը [16]: Տե՛ս աղյուսակ 3:

Ինչպես արդեն նշվեց, ՌԻԿ-ների զարգացման ոլորտում ներկայիս գործընթացներն առավելապես բնորոշվում են գլոբալից դեպի առավել նեղ հարցեր անցումով: Հատկանշական է նաև այն, որ ակադեմիական ՌԻԿ-ներն իրենց հետազոտություններում փորձում են գաղափարապես չեզոք դիրք և ֆինանսավորման բազմազան աղբյուրներ ունենալ, ուստի առավելապես համապատասխանում են անկողմնակալ գաղափարների և ինտելեկտուալ արտադրանք թողարկող կազմակերպության կոչմանը:

Աղյուսակ 3

Աշխարհի 10 լավագույն համալսարանական ուղեղային կենտրոնները

	Կենտրոնի անվանումը	Ուսումնական հաստատությունը	Երկիրը
1.	Գիտության և միջազգային հարաբերությունների Բելֆերի կենտրոն	Հարվարդի համալսարան	ԱՄՆ
2.	Հանրային քաղաքականության խումբ/IDEAS	Քաղաքագիտության և տնտեսագիտության Լոնդոնի դպրոց	Միացյալ Թագավորություն
3.	Միջազգային հետազոտությունների և ուսումնասիրությունների կենտրոն (CERI)	Սայնսիս Պո	Ֆրանսիա
4.	Հուվերի ինստիտուտ	Սթենֆորդի համալսարան	ԱՄՆ
5.	Մոլորակի ինստիտուտ	Կոլումբիայի համալսարան	ԱՄՆ
6.	Պաշտպանական հետազոտությունների կենտրոն (CDS)	Լոնդոնի թագավորական քոլեջ	Միացյալ Թագավորություն
7.	Հանրային քաղաքականության Բրուքինգս-Ցինգուա կենտրոն (BTC)	Ցինգուա համալսարան (Tsinghua University)	Չինաստան
8.	Միջազգային անվտանգության և համագործակցության կենտրոն (CISAC)	Սթենֆորդի համալսարան	ԱՄՆ
9.	ԲՐԻՔՍ քաղաքականության կենտրոն	Ռիո դե ժանեյրոյի Հայրապետական կաթոլիկ համալսարան (PUC-Rio)	Բրազիլիա
10.	Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտ (MGIMO)		Ռուսաստան

Գաղափարապես կողնորոշված ՌԻԿ-ները, որոնք շատ հաճախ գործում են բացառապես որևէ քաղաքական, կրոնական, տնտեսական կամ այլ տիպի կազմակերպության ֆինանսավորմամբ կամ ուղղակիորեն վերջիններիս կառույցն են, թեմատիկորեն կողմնորոշված են, գործում են որոշակի գաղափարական շրջանակներում, սպասարկում որոշակի քաղաքական գիծ, առաջ մղում կոնկրետ շահեր, իսկ ուսումնասիրությունները հաճախ կրում են քարոզչական բնույթ:

Հենց վերջին հանգամանքն էլ այժմ դարձել է արևմտյան ակադեմիական հանրության առավել ակտիվ քննարկվող հարցերից մեկը: Մտահոգության առիթ է դարձել նաև այն, որ այդ ՌԻԿ-ներն աստիճանաբար առավել շատ են սկսում օգտագործվել որոշ քաղաքական կուսակցությունների [17] և խոշոր բիզնեսի ներկայացուցիչների կողմից իրենց մասնավոր շահերին հասնելու համար: Այդ ՌԻԿ-ները հաճախ ստանձնում են հզոր PR-կենտրոնների դեր՝ կոնկրետ շահեր սպասարկելու և որոշակի քաղաքական գիծ պաշտպանելու համար:

Այլ է վիճակը համալսարանական հետազոտական կենտրոններում, որոնց գործունեությունը՝ ձևավորված գիտական ավանդույթների, ինստիտուտների և համակարգերի միջոցով, գտնվում է ակադեմիական հանրության հսկողության տակ: Արժանահավատության գործոնը, որն այս պարագայում առկա է համալսարանական հետազոտողների և ՌԻԿ-ների մոտ, բացարձակ կարևոր չէ գաղափարապես կողմնորոշված ՌԻԿ-ների համար, որոնք իրենց արտադրանքը մատակարարում են շահագրգիռ պատվիրատուներին:

Ժամանակակից ՌԻԿ-ների աշխատանքների արդյունավետ կազմակերպման գրավականը նրանց ճիշտ ընտրված կառուցվածքը և կադրերի ընտրության մեթոդաբանությունն է: Արևմուտքում ընդունված մոտեցման համաձայն՝ կենտրոնների կառավարումը կառուցվում է կորպորատիվ կառավարման սկզբունքների հիման վրա: Այսպես, խոշոր հետազոտական կենտրոնները գլխավորում է նախագահը կամ գործադիր տնօրենը, ով հաշվետու է

տնօրենների կամ դիտորդական խորհրդին: Վերջինիս կազմի մեջ մտնում են գործարարության, ակադեմիական շրջանակների ներկայացուցիչները, նախկին խորհրդարանականները, պետական ծառայողները, շատ հաճախ՝ այլ ՈւԿ-ների հետազոտողները: Կենտրոնի ղեկավարը, ով իր հերթին հաշվետու է տնօրենների խորհրդին, ֆինանսական և կադրային առանցքային հարցերով կայացնում է որոշումներ, վերադաս խորհրդում հանդես գալիս աշխատանքների կազմակերպման արդյունավետության բարձրացման, կադրային քաղաքականության, կենտրոնի կառուցվածքային փոփոխությունների, հետազոտությունների նոր ուղղությունների վերաբերյալ առաջարկություններով, ինչպես նաև այլ կազմակերպական հարցերով, հանդես գալիս կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններով և այլն:

Հետաքրքրություն են ներկայացնում հետազոտական կենտրոնների կադրերի ձևավորման սկզբունքները: Նրանցից շատերը պահպանում են գիտական հաստատությունների պաշտոնների ավանդական համակարգը՝ տարբեր մակարդակների գիտաշխատողներ, փորձագետներ, վերլուծաբաններ, հետազոտողներ և այլն: Բացի այդ, արևմտյան ՈՒԿ-ներում տարածված են մշտական և ժամանակավոր հաստիքների (արտահաստիքային աշխատակիցների - ասոցացված, հրավիրված հետազոտողներ, ոչ ամբողջական օրով զբաղվածներ, ժամանակավոր պայմանագրերով աշխատողներ և այլն) համադրության սկզբունքը: Տարբեր կենտրոններում նրանց հարաբերակցությունը կարող է էականորեն տարբերվել, ինչը կապված է ինչպես ինստիտուտի (կենտրոնի) չափերով, այնպես էլ տարվող կադրային քաղաքականությամբ:

Աշխարհի ՈՒԿ-ները կարելի է բաժանել նաև երեք տեսակի՝ խոշոր և բազմապրոֆիլ, խոշոր և մասնագիտացված, փոքր և մասնագիտացված:

Զբաղվածների քանակով առաջատարները Քաղաքի խնդիրների ինստիտուտը և ՌԵՆԴ կորպորացիան են, նրանցից յուրաքանչյուրում աշխատում է 1500 գիտաշխատող: Այնուհետև գալիս է Բրուքլինգսի ինստիտուտը և Միջազգային հարաբերու-

թյունների խորհուրդը, համապատասխանաբար՝ 229 և 203 աշխատակից [18]:

Հատկանշական է, որ, օրինակ, ամերիկյան քաղաքական գործընթացների վրա մշտապես (բնականաբար տարբեր տարիներին տարբեր չափերով) զգացվել է ՌԻԿ-ների ազդեցությունը: Այսպես, խիստ նկատելի էր պահպանողական ՌԻԿ-ների ազդեցությունը ԱՄՆ 40-րդ նախագահ Ռ. Ռեյգանի (1981-1989) տնտեսական քաղաքականության մշակման վրա: Ե՛վ պետական կարգավորման բարեփոխումների, և՛ հարկերի նվազեցման քաղաքականության, և՛ մոնետար քաղաքականության մշակման վրա, որը հետագայում վերածվեց, այսպես կոչված, հայտնի *ռեյգանոմիկայի* քաղաքականության, որի հիմնական թեզերն էին՝ պետական ծախսերի աճի դանդաղեցումը, հարկերի և տնտեսության մեջ պետական միջամտության կրճատումը, ինչպես նաև դրամային զանգվածի կրճատման ճանապարհով սղաճի նվազեցումը: Ռեյգանոմիկան դարձավ վառ օրինակ, թե ինչպես են ՌԻԿ-ներն արդյունավետորեն ազդում իշխող վարչախմբի տնտեսական քաղաքականության վրա: Այս ամենին բավական է ավելացնել նաև այն, որ Ջ. Բուշ կրտսերի նախագահության օրոք (2001-2009) ԱՄՆ կոնգրեսի կողմից մի շարք օրենքների մշակման գործում ակտիվորեն մասնակցել են նաև Ձեռնարկատիրության ամերիկյան ինստիտուտի և Բրուքինգսի ինստիտուտի փորձագետները:

ՌԻԿ-ների՝ թե՛ քանակով և թե՛ ներքին ու արտաքին քաղաքականության վրա իրենց ազդեցությամբ առաջատար ԱՄՆ-ում աստիճանաբար առավել շատ են ուշադրություն դարձնում այն հանգամանքին, որ երկրի քաղաքական համակարգի վրա էական ազդեցություն ունեցող կազմակերպությունները՝ ստանալով բազմամիլիարդանոց նվիրատվություններ և ազատված լինելով հարկերից, գտնվում են հանրային հսկողությունից դուրս [19]:

2.4. ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Բազմաթիվ ՌԻԿ-ներ ակտիվորեն մասնակցում են իրենց երկրի ԱԱ ապահովման գործում և օժանդակում են պետական մարմիններին այդ ոլորտում քաղաքականության մշակման և որոշումների կայացման գործում: Հատկապես աչքի են ընկնում Արևմուտքի և մասնավորապես ամերիկյան ՌԻԿ-ները: Նրանցից առանձնացնենք արդեն հիշատակված ամերիկյան ՌԵՆԴ կորպորացիան և Ռազմավարական և միջազգային հետազոտությունների կենտրոնը (CSIS): Դրանք, ինչպես նաև շատ այլ ՌԻԿ-ներ, խորհրդատվություն են մատուցում իրենց կառավարություններին անվտանգության տարբեր ասպեկտների վերաբերյալ: Համարձակվենք պնդել, որ 21-րդ դարում ՌԻԿ-ների ինստիտուտի կայացումը և ԱԱ համար պատասխանատու մարմինների հետ համապատասխան ՌԻԿ-ների փոխադարձ գործուն կապը, բազմաթիվ հարցերում համատեղ գործունեության համակարգումը պետք է դիտարկվի որպես ցանկացած պետության ԱԱ ապահովման արդյունավետության կարևոր ցուցիչ:

Այս ոլորտում ՀՀ-ում նույնպես առաջընթաց է նկատվում: Հայրենական ՌԻԿ-ներից կարող ենք առանձնացնել «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը, ՀՀ ՊՆ Դր. Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը և Կովկասի ինստիտուտը: Սակայն այսքանով չի սահմանափակվում համանման կենտրոնների ցանկը, և, իհարկե, առավել համեստ ծավալներով այս ոլորտում գործում են նաև այլ կենտրոններ, այդ թվում՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնը:

Ինչպես դիպուկ ձևակերպել է ՀՀ առաջատար ՌԻԿ-ներից մեկի՝ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գործադիր տնօրեն Գ. Հարությունյանը. «Արդի դարաշրջանում ազգային անվտանգությունն ավելի, քան երբևէ, պայմանավորված է առկա մտավոր ռեսուրսների քանակով և որակով, ինչպես նաև հասա-

րակության՝ այդ ռեսուրսներն ազգային շահերին համապատասխան կազմակերպելու և օգտագործելու կարողությամբ: Հայտնի է, որ բացի ակադեմիական բնույթի ինստիտուտներից և համալսարաններից մտավոր ռեսուրսների կազմակերպման կարևոր ձևաչափ են հատուկ հետազոտական կենտրոնները, այսպես կոչված think tank-երը [20]... Կասկած չի հարուցում, որ նաև (եթե ոչ՝ գլխավորապես) իր մտավոր ռեսուրսների և ՌԻԿ-ների զարգացած ենթակառուցվածքի շնորհիվ է ԱՄՆ-ը զբաղեցնում առաջատար ռազմաքաղաքական և տնտեսական դիրքեր աշխարհում» [21]:

Այդ համատեքստում հետաքրքրական է 2013թ. տվյալներով պաշտպանության և ԱԱ ոլորտում մասնագիտացած 10 լավագույն ՌԻԿ-ների ցանկը, որտեղ նույնպես առաջատարներն են ամերիկյան կենտրոնները [22]:

Աղյուսակ 4

Ազգային անվտանգության ոլորտում մասնագիտացված 10 լավագույն ուղեղային կենտրոնները

	<i>ՌԻԿ-ի անվանումը</i>	<i>Երկիրը</i>
1.	Ռազմավարական և միջազգային հետազոտությունների կենտրոն (CSIS)	ԱՄՆ
2.	ՌԵՆԴ կորպորացիա (RAND)	ԱՄՆ
3.	Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտ	Միացյալ Թագավորություն
4.	Բրուքինգսի ինստիտուտ	ԱՄՆ
5.	Չեթմ հաուս (CH)	Միացյալ Թագավորություն
6.	Հանուն միջազգային խաղաղության Քարնեգիի հիմնադրամ	ԱՄՆ
7.	Ստոքհոլմի միջազգային խաղաղության հետազոտությունների ինստիտուտ (SIPRI)	Շվեդիա
8.	Միավորված ծառայությունների թագավորական ինստիտուտ (RUSI)	Միացյալ Թագավորություն
9.	Նոր ամերիկյան անվտանգության կենտրոն (CNAS)	ԱՄՆ
10.	Ատլանտյան խորհուրդ	ԱՄՆ

Պատկերացում կազմելու համար, թե ինչ են իրենցից ներկայացնում նշյալ ՌԻԿ-ները՝ բերենք համառոտ տեղեկատվություն 2013թ. արդյունքներով անվտանգության ոլորտում լավագույնը ճանաչված՝ Ռազմավարական և միջազգային հետազոտությունների կենտրոնի (ՌՄՀԿ) վերաբերյալ: Այսպես, այս կենտրոնի առաքելությունն է ապագա տասնամյակների ռազմավարական խնդիրների տեսլականի ձևավորումը և ներկա գլոբալ խնդիրներին համարժեք լուծումների որոնումը: 2000թ.-ից սկսած կենտրոնը ղեկավարում է Ջոն Հեմրին (John J. Hamre), ով նախկինում զբաղեցնում էր ԱՄՆ պաշտպանության փոխնախարարի պաշտոնը: Կենտրոնի կառավարումը իրականացնում է հիմնադիրների խորհուրդը, որը ղեկավարում է նախկին սենատոր Սեմ Նանը (Sam Nunn): Կենտրոնի աշխատակազմն ընդգրկում է շուրջ 220 հետազոտող և աշխատակից, որոնք իրականացնում են ազգային և գլոբալ անվտանգության խնդիրների ուսումնասիրություններ, մշակում գլոբալիզացիայի դարաշրջանում քաղաքական ղեկավարման նոր մեթոդներ (տեխնոլոգիական և պետական քաղաքականության, միջազգային առևտրի, ֆինանսների և էներգետիկայի վերաբերյալ ծրագրեր): Հատկանշական է, որ կենտրոնի փորձագետները աշխատում են աշխարհի բոլոր տարածաշրջաններում:

ՌՄՀԿ կենտրոնակայանը գտնվում է Վաշինգտոնում: Կազմակերպության գործունեությունն ազատված է հարկերից:

ՌՄՀԿ կազմում աշխատում են քաղաքագիտության և գլոբալ քաղաքականության այնպիսի ազդեցիկ գործիչներ, ինչպիսիք են՝ Ջրիգն Բեգինսկին և Հենրի Քիսինջերը: Կենտրոնն առաջարկում է քաղաքական խնդիրների ոչ ստանդարտ լուծումներ՝

- քաղաքական ռիսկի գնահատում,
- տարածաշրջաններում իրավիճակի վերլուծություն,
- միջազգային անվտանգության և կայունության մշտադիտարկում,
- հայացք հորիզոնից այն կողմ (ներկա գործընթացների հետևանքների և զարգացման տարբեր սցենարների մշակում):

Միաժամանակ կազմակերպությունը աշխարհի տարբեր համալսարաններից ընտրված տաղանդավոր ուսանողների մոտ ձևավորում է առաջնորդության հմտություններ: Այսպես, ամեն տարի բազմաթիվ երիտասարդներ ուսումնառություն են ստանում ՌՄՀԿ-ում, որոնցից շատերը հետագայում բարձր պաշտոններ են ստանձնում կառավարությունում, գործարարության ոլորտում, համալսարանական շրջանակներում: Բացի այդ, կենտրոնը տարեկան կազմակերպում է շուրջ 1600 միջոցառում՝ դասախոսություն, սեմինար և գիտաժողով, հրատարակում է պարբերականներ [23]:

Աշխարհի առաջատար ՌԻԿ-ների կարևոր գործառույթներից է նաև ապագայի կանխատեսումների, տարբեր գործընթացների զարգացման սցենարների և սպասվելիք մարտահրավերներին համարժեք պատասխանների մշակումը: Ինչպես ճշմարտացիորեն նշում է քաղաքագետ Ս. Հովհաննիսյանը՝ ուժեղ պետություն ունի այն ազգը, որը նախապես գիտե, թե զարգացման ի՞նչ ուղի է ընտրել և ո՞ւր է գնում: Իսկ որպեսզի նա նախապես ամբողջական պատկերացում ունենա ուժեղ պետություն դառնալու մասին, պետք է ստեղծի իր հոգածության տակ առած ռազմավարական-ապագայաբանական, ռազմաքաղաքական հետազոտություններով զբաղվող կենտրոններ [24]:

Կանխատեսումը՝ որպես գիտելիքահենք գործընթաց, պայմանականորեն կարող է բաժանվել երեք հիմնական տեսակի՝ էքստրապոլյացիա, մոդելավորում և փորձաքննություն: Միևնույն ժամանակ, կանխատեսման մշակումների ընթացքում օգտագործվում են բազմաթիվ վիճակագրական, տնտեսական ցուցանիշներ, սոցիոլոգիական և այլ մեթոդներ: Դրանցից են Դեյֆին, գաղափարների կոլեկտիվ կուտակման մեթոդը, Ապագայի արհեստանոցը (Future Workshop), տրամաբանական և խաղային մոդելավորումը, կոնտենտ վերլուծությունը (Content Analysis) և այլն:

Ամփոփելով նշենք, որ վերջին տասնամյակներում ՌԻԿ-ների քանակի պերմանենտ աճի հանգամանքը թույլ է տալիս ենթադրել, որ ապագայում ևս այդ միտումները կշարունակվեն, ինչն իր հերթին ցույց է տալիս ամբողջ աշխարհում նման կազմակերպություն-

ների դերի ու նշանակության կարևորումը քաղաքական վերնախավի, ակադեմիական հանրության և գործարար շրջանակների կողմից: Ուստի դիպուկ է նկատվել, որ ներկայում ՈւԿ-ներն ընդունված է համարել *հինգերորդ իշխանություն* [25]:

Կարող ենք փաստել նաև, որ ժամանակակից ՈւԿ-ներն իրականացնում են կարևոր հասարակական գործառույթ. մի կողմից նրանք թողարկում են գիտական, ինտելեկտուալ արտադրանք, իսկ մյուս կողմից՝ խաղում են կարևոր քաղաքական դեր՝ արտացոլելով սոցիալ-քաղաքական մտքի տարբեր ուղղություններ և կամուրջ հանդիսանալով ակադեմիական գիտության ու կիրառական քաղաքականության միջև: Միաժամանակ, ոլորտի զարգացման շարժընթացը ցույց է տալիս, որ ՈւԿ-ները աստիճանաբար ստանձնում են երկրների քաղաքական համակարգի առանցքային բաղադրիչներից մեկի գործառույթը, որոնք ոչ միայն մշակում են ներկայիս արտաքին և ներքին, այդ թվում՝ համաչափ և անհամաչափ սպառնալիքներին դիմագրավման մեթոդները, այլ նաև՝ փորձում են կանխատեսել ապագան: Իսկ կանխատեսելով ապագան և դրա հնարավոր սցենարները, պատրաստ լինելով դրանց հետևանքներին մենք փոխում և ինչ-որ տեղ կերտում ենք այն:

ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ

- Ի՞նչ է ուղեղային կենտրոնը:
- Ինչպիսի՞ չափորոշիչներով է հետազոտական կազմակերպությունը բնորոշվում որպես ուղեղային կենտրոն:
- Ի՞նչ նախապայմաններ են ազդել ուղեղային կենտրոնների ձևավորման վրա, և զարգացման ինչպիսի՞ փուլեր են դրանք անցել:
- Որո՞նք են ժամանակակից ամենահեղինակավոր ուղեղային կենտրոնները:
- Ի՞նչն է նպաստել ժամանակակից ուղեղային կենտրոնների թվի մեծացմանը:
- Ի՞նչ համամասնությամբ են ուղեղային կենտրոնները բաշխված տարբեր երկրներում, և որն է անհամաչափ բաշխման հիմնական պատճառը:
- Ինչպիսի՞ համամասնություն ունեն Հարավային Կովկասի ուղեղային կենտրոններն՝ ըստ երկրների:
- Որո՞նք են առաջատար համալսարանական ուղեղային կենտրոնները:
- Ինչպե՞ս են ազդում ուղեղային կենտրոնները քաղաքական գործընթացների վրա:
- Ո՞րն է համալսարանական և ոչ համալսարանական ուղեղային կենտրոնների հիմնական տարբերությունը:
- Ի՞նչ մասնակցություն ունեն ուղեղային կենտրոնները ազգային անվտանգության ապահովման գործում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Диксон П., Фабрики мысли, М., 2004. С. 44-47.
2. Солодовников С., Черныш С., Мозговые центры запада, տե՛ս http://nash-sovremennik.ru/archive/2008/n12/233-237_Solodovnikov_Chernysh.pdf
3. Boucher, Stephen, et al., Europe and its think tanks; a promise to be fulfilled. An analysis of think tanks specialized in European policy issues in the enlarged European Union, Studies and Research No 35, October, Paris, Notre Europe, 2004. P. 2-3.
4. Միմավորյան Ա., Սփյուռքի վերլուծական հանրույթը որպես պետության ներուժ. միջազգային փորձը, «ԳԼՈՐՈՒՍ», թիվ 12 (45), 2013, էջ 19-20:

5. Никитина Ю.А., Международные отношения и мировая политика: Введение в специальность: Учеб. пособие для студентов вузов / Ю.А. Никитина. – М.: Аспект Пресс, 2009. С. 15.
6. Smith J.A., The Idea Brokers. Think tank and the rise of the new policy elite. N.Y.: The Free Press, 1993. P. 24-27.
7. Smith J.A., նշվ. աշխ., էջ. 41:
8. «Российская фабрика мысли» /под ред. М.В. Вилисова. М.: Научный эксперт, 2013. С. 8.
9. Кочетков Г.Б., Супян В.Б., «Мозговые центры» в США: наука как инструмент реальной политики, <http://www.ecfor.ru/pdf.php?id=2010/5/05>
10. James G. McGann, 2013 Global Go to Think Tanks Report and Policy Advice, 2013 Think Tanks and Civil Societies Program, International Relations Program University of Pennsylvania, Philadelphia, PA USA, <http://gotothinktank.com/dev1/wp-content/uploads/2014/01/GoToReport2013.pdf>
11. Ադրբեջանի ՈւԿ-ների վերաբերյալ տե՛ս Գալստյան Դ, Փաշայան Ա., Ադրբեջանի որոշ հետազոտական կենտրոնների գործունեությունը, «ԳԼՈՐՈՒՍ Ազգային անվտանգություն», թիվ 5 (9), 2009, էջ 49-58, ինչպես նաև Գալստյան Դ., Գեղամյան Վ., Նոր իրողություններ Ադրբեջանի հետազոտական կենտրոնների ոլորտում, «21-րդ դար», թիվ 4 (38), 2011, էջ 5-23:
12. Վրաստանի ՈւԿ-ների վերաբերյալ տե՛ս Վարդանյան Թ., Վրաստանի ուղեղային կենտրոններն ու ակադեմիական համակարգը, «ԳԼՈՐՈՒՍ Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն», թիվ 5, 2009, էջ 39-47:
13. Թուրքիայի ՈւԿ-ների վերաբերյալ տե՛ս Սիմավորյան Ա., Թուրքիայի ուղեղային կենտրոնների զարգացման նախադրյալները, «21-րդ դար», թիվ 6 (46), 2012, էջ 17-34:
14. Իրանի ՈւԿ-ների վերաբերյալ տե՛ս Սարուխանյան Ա., Իրանի «ուղեղային կենտրոնները», «ԳԼՈՐՈՒՍ Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն», թիվ 6, 2009, էջ 38-43:
15. Տե՛ս Սփյուռքի գիտավերլուծական հանրությունը. –Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2013, էջ 16:
16. James G. Mc Gann, նույն տեղում:
17. Կուսակցությունների ՈւԿ-ների մասին տե՛ս Акопян О.А., Зарубежные партийные фабрики мысли: технологии и методы рабо-

- ты, Национальный институт развития современной идеологии, М., 2010, <http://www.nirsi.ru/75>
18. Кочетков Г.Б., Сунян В.Б., նշվ. աշխ:
 19. Snider J.H., Strengthen Think Tank Accountability. Politico. February 3, 2009, տե՛ս <http://www.politico.com/news/stories/0209/18306.html>
 20. Հարությունյան Գ., «Ուղեղային կենտրոնները» և ազգային անվտանգությունը, «21-րդ դար», թիվ 1 (35), 2011, էջ 5:
 21. Նույն տեղում, էջ 6:
 22. James G. McGann, նշվ. աշխ.:
 23. Առավել մանրամասն տե՛ս www.csis.org
 24. Ազգային անվտանգության գաղափարախոսություն: (Ազգային անվտանգության հայեցակարգի հիմնադրույթների ուրվագիծ): Ուսումնական ձեռնարկ: Ս.Ս. Հովհաննիսյան: Հայաստանի պետ. ճարտ. համալս.: Երևան 2002, էջ 27:
 25. Տե՛ս Սիմավորյան Ա., Հայկական հետազոտություններ թուրքական ուղեղային կենտրոններում, «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 5, 2014, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=12769

ԳԼՈՒԽ 3

ԳԼՈՐԱԼԱՑՈՒՄ. ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԳԼՈՐԱԼԱՑՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ
- ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԳԼՈՐԱԼԱՑՈՒՄԸ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ
- ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԱՓՈԽՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ 21-ՐԴ
ԴԱՐԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ

3.1. ԳԼՈՐԱԼԱՑՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

*Սոցիալապես որքան արդար, այդքան
գորավոր է հայրենիքը...*

Գարեգին Նժդեհ

21-րդ դարի հարավոփոխ գործընթացները բնութագրվում են հասարակական կյանքի բոլոր ոլորտներն ընդգրկող մեծ վերափոխումներով, որում համընդհանուր ինտեգրացումը և տեղեկատվական ոլորտի աննախադեպ զարգացումն օբյեկտիվ նախադրյալներ են ստեղծում մարդկության հոգևոր ու նյութական ներուժի ինչպես միավորման, այնպես էլ՝ բաժանման համար:

Փորձագիտական հանրության մեջ տարածված է այն տեսակետը, որ ներկայում տեղի է ունենում լրկալ հանրայինների միավորում, այսպես կոչված՝ *մեգահանրային* մեջ: Խոսքը գնում է սոցիալական կազմակերպության արմատապես նոր տեսակի ձևավորման մասին, որը հիմնված է համակարգչային և տեղեկատվական, հաղորդակցական տեխնոլոգիաների լայն կիրառման վրա:

Գլոբալացումը (համընդհանրացում) տնտեսական, քաղաքական և մշակութային բազմակողմանի ինտեգրացման և համահարթեցման համաշխարհային գործընթաց է, որն իրենից ներկայացնում է անդրազգայնացման հիմքի վրա առանձին երկրների տնտեսությունների սերտ միահյուսման գործընթաց: Հենց այս հիմքի վրա տեղի է ունենում միասնական համաշխարհային ցանցային շուկայական տնտեսության ձևավորում և ազգային պետությունների ինքնիշխանության թուլացում:

Անհրաժեշտ է ընդգծել, որ ժամանակակից հասարակագիտության մեջ ձևավորվել է գլոբալացման և վերջինիս գործընթացների վերլուծության մի քանի մոտեցում: Ինչպես նշում են Յու. Վոլկովը և Ա. Լուբսկին. «Ընդհանուր առմամբ ինտելեկտուալ աշխարհը բաժանվել է երկու ճամբարի: Դրանցից մեկի ներկայացուցիչների կարծիքով՝ գլոբալացումն իր մեջ ներառում է մի քանի ասպեկտներ՝ մենթալ կամ մշակութա-գաղափարական, տարած-

քային, տնտեսական, տեղեկատվական-հաղորդակցական, էթնիկական, ինչպես նաև կազմակերպական (նկատի է ունեցվում, այսպես կոչված՝ Համաշխարհային կառավարության գործունեությունը): Գլոբալացման ներկա փուլի հիմնական բովանդակությունը աշխարհի միավորումն է, միասնական մոլորակային էգոյի (լատ. ego-ես) ձևավորման ավարտը, իսկ վերջնական նպատակը՝ պատերազմների և, ընդհանրապես, ցանկացած աշխարհաքաղաքական դիմակայության ավարտը: Մյուս ճամբարի ներկայացուցիչները՝ գլոբալացման հակառակորդները, հայտարարում են, որ գլոբալացումը գործնականում վերափոխվում է, հակառակը՝ հոգևոր և ինտելեկտուալ տոտալ ստրկության, ինքնիշխանության և ազգային ինքնության կորստի: Որոշ գիտնականներ ընդհանրապես գլոբալացումը դիտարկում են որպես *քաոսի դարաշրջան, նոր համաշխարհային անկարգություն*» [1]: Տեղին է մեջբերել Ս. Սիլվեստրովի դիտարկումը, ով գլոբալացումը բնութագրում է որպես «...անշրջելի գործընթաց, համաշխարհային զարգացման անշրջելի ճակատագիր. գլոբալացումը չի կարող լինել լավ կամ վատ» [2]:

Շարունակելով գլոբալացման կողմնակիցների և հակառակորդների դիտարկումների ներկայացումը՝ տեղին է մեջբերել նաև Վ. Լիսիչկինի և Լ. Շելեպինի դիտարկումը, ըստ որոնց գլոբալիզմը օգտագործվում է որպես գլոբալ դիկտատուրայի *կամուֆլյաժ* [3]: Իսկ Է. Ազրոյանցի կարծիքով՝ գլոբալացումը՝ որպես այդպիսին, պատմական գործընթացի նպատակն է: Նրա շարժընթացն որոշվում է ինտեգրացման և ապահինտեգրացման միտումների դիմակայությամբ: Գլոբալացման գործընթացի ժամանակակից փուլը կարող է բնորոշվել որպես միջազգայնացման փուլ [4]:

Ինչպես նշում են Փ. Հերսթը և Գ. Թոմփսոնը. «Գլոբալիզացիայի ծայրահեղական վարկածը միտում ունի զինաթափելու քաղաքականություն մշակողներին և խաթարելու ազգային տնտեսությունների կառավարման ռազմավարական մոտեցումները. նման դատողությունները միանգամայն ճիշտ են նաև *միջազգային մրցունակությանը* վերաբերող քննարկումների պարագայում» [5]:

Գրականության մեջ կարող ենք հանդիպել նաև գլոբալացման երևույթի փոքր ինչ այլ բացատրությունների: Այսպես, ըստ Մ. Օրլովի՝ գլոբալացման մասին առաջին մոտեցումը սահմանում է աշխարհում տնտեսական հարաբերությունների նոր որակի արդյունքը: Այդ մոտեցման համաձայն՝ գլոբալացումը տնտեսական զարգացման ինտենսիֆիկացումն է, որը դրականորեն է ազդում հասարակության այլ ոլորտների վրա: Նոր երևույթ էր տարածության և ժամանակի սեղմման և կենտրոնացման միտումը, որը գործում է որպես տնտեսության հեղափոխման արտադրողականության գործոն: Այս տեսակետից գլոբալացումն ընկալելու համար առանցքային են գիտատեխնիկական առաջընթացի իմաստով կառուցողական որակական փոփոխությունները, ամբողջ աշխարհում ժողովրդավարության ամրապնդումը, մարդկանց բարեկեցության, նրանց մշակութային մակարդակի բարձրացումը և այլն [6]: Իսկ ըստ Պ. Տիգանկովի՝ գլոբալացումը, նախօրոք հայտնի արդյունքներով, գծային և միակողմանի ուղղված գործընթաց չէ, ինչպես նաև արդի համաշխարհային զարգացման միակ մոդելը չէ: Նրան դիմակայում են հակադիր, պետության վրա նրա ազդեցությունը սահմանափակող՝ ռեգիոնալացման, ֆրագմենտացման, սուվերենացման և այլ միտումները [7]:

Մեկ այլ կարծիքի համաձայն՝ գլոբալացումն ավանդական քաղաքական կարգի քանդում է, որը հիմնված է պետական ինքնիշխանության և ազգային-մշակութային ինտեգրացման սկզբունքների վրա: Այս ուղղության ներկայացուցիչներին առավելապես անհանգստացնում է քաղաքական կառավարման ավանդական գործիքների արագընթաց թուլացումը և առաջացող իշխանության վակուումը: Արդյունքում աշխարհը սկսում է զարգանալ ինքն իրեն՝ խույս տալով դրանց խելամտորեն կարգավորելու և ուղղորդելու փորձերից: Այսպես, Ու. Բեկը, իր *ռիսկի հասարակություն* հայեցակարգի շրջանակներում, գլոբալացումը բնորոշում է որպես հասարակությունների ապաքաղաքականացման և ապակարգավորման գործընթաց [8]:

Անշուշտ, գլոբալացումը հնարավոր չէր լինի առանց տեխնոլոգիաների բուռն առաջընթացի, առաջին հերթին՝ էլեկտրոնիկայի, հաղորդակցության և տրանսպորտի ոլորտներում: Առանձնապես պետք է ընդգծել միկրոպրոցեսորային տեխնիկայի, թվային տեխնոլոգիաների, հաղորդակցության միջոցների արագ զարգացումը: Արդյունքում ի հայտ եկան գլոբալ տեղեկատվական միջավայրի ձևավորման համար անհրաժեշտ պայմաններ: Տեխնոլոգիաների առաջընթացը էականորեն կրճատել է երկրագնդի մասշտաբով տեղեկատվության կուտակման, մշակման և փոխանցման գինը, ինչը չէր կարող չանդարդառնալ տնտեսական աճի ցուցանիշների վրա: Տարածության կրճատումը և տեղեկատվության արագ փոխանցումը ազդել են իշխանական հարաբերությունների բնույթի վրա, ինչպես պետությունների ներսում, այնպես էլ՝ միջազգային մակարդակում: Լսարանի մոտ հնարավորություն է առաջացել հետևել իրադարձություններին իրական ժամանակում, դառնալ դրանց մասնակիցը: Ընդհանուր առմամբ, համակարգչի հնարավորությունների միավորումը հեռուստահաղորդակցական ցանցերին սեղմում է ժամանակը և տարածությունը, նվազեցնում ազգային սահմանների նշանակությունը, անհատներին տալիս գլոբալ հանրությանը հաղորդակցվելու, միանալու զգացողություն [9]:

3.2. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳՆՈՐԱԼԱՑՈՒՄԸ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Կասկածից վեր է, որ ներկայում գլոբալացման գործընթացում վերջինիս տնտեսական բաղադրիչն ունի առանցքային նշանակություն: Ինչպես նշում է Գ. Դրոբոտը՝ Երկրորդ աշխարհամարտից հետո ընկած դարաշրջանը բնութագրվում է տնտեսական փոխկապվածության ազդեցության աճով, որը 1980-ականներին ձեռք բերեց «Համաշխարհային տնտեսության գլոբալացում» անվանումը: Համապատասխանաբար ընդարձակվեց նաև ԱԱ հասկացությունը, որն իր մեջ ներառեց տնտեսական ասպեկտը [10]: Հատկանշական է նաև Վ. Կիրակոսյանի կարծիքը, ըստ որի. «Գլոբալացումը ավելին է, քան գլոբալ տնտեսության ձևավորումը: Վերջինս ենթադրում է երկրների ընդգրկումը աշխատանքի միջազգային բաժանման, համաշխարհային առևտրական և ֆինանսական համակարգերում» [11]: Միաժամանակ, տնտեսական գլոբալացումն աստիճանաբար ձևավորում է այնպիսի միասնական տնտեսական համակարգ, որն ի վիճակի է աշխատել իրական ժամանակի ռեժիմում և ամբողջ երկրագնդի մասշտաբով: Վերջինս բնութագրվում է ինչպես ազգային տնտեսությունների փոխկապվածության մեծացմամբ, այնպես էլ՝ կապիտալի, տեխնոլոգիաների, ապրանքների և ծառայությունների պետական սահմանների միջով շարժման արագության մեծացմամբ: Շ.Սահակյանի դիտարկմամբ. «Տնտեսական ինտեգրացման և գլոբալացման հետևանքով աշխարհը վերածվել է գլոբալ շուկայի: Վերազգային ընկերություններն այդ սկզբունքով էլ մոտենում են աշխարհին՝ այն դիտելով որպես մեկ ամբողջություն, որպես մեկ շուկա, թեպետ իրական կյանքն ուրիշ կանոններ ու մոտեցումներ է թելադրում» [12]:

Տնտեսության վրա գլոբալացման ազդեցության վերաբերյալ բնութագրական է ամերիկյան հայտնի քաղաքագետ Հ. Քիսինջերի դիտարկումը. «Պատմության մեջ (երկրագնդի վրա) առաջին անգամ ի հայտ է եկել միասնական տնտեսական համակարգ: Բո-

լոր մայրցամաքների շուկաներն անդադար փոխգործակցում են միմյանց հետ: Հաղորդակցության միջոցները թույլ են տալիս կապիտալին անհապաղ արձագանքել նոր հնարավորություններին կամ ակնկալիքների նվազմանը: Ճկուն վարկային գործիքներն ապահովում են կապիտալի աննախադեպ լիկվիդայնությունը: Գլոբալացումն օժանդակում է հարստության սրընթաց աճին և տեխնոլոգիական առաջընթացի արագացմանը, աներևակայելի ցանկացած նախկին դարաշրջանում: Եվ, հիմնվելով առաջընթացը փոխկապվածության վրա, նա խաթարում է ազգային պետության դերը՝ որպես հասարակության բարեկեցության միակ գործոն, չնայած Միացյալ Նահանգների համար դա արդարացի է շատ ավելի նվազ չափով, քան շատ այլ տարածաշրջանների համար» [13]:

Ավելորդ չէ նշել, որ գլոբալացման գործընթացը զգալի է ոչ միայն տնտեսական, հաղորդակցական և մշակութային ոլորտներում, այն նկատելի է նաև սոցիալ-քաղաքական ոլորտում:

Ամերիկացի հայտնի սոցիոլոգ Ի. Վալերստայնը ստեղծել է համաշխարհային կապիտալիստական համակարգի հայեցակարգ, ըստ որի՝ աշխարհահամակարգի միջուկի երկրները (ոսկե միլիարդ) գերակայում են երկրորդ և երրորդ շրջայի երկրների վրա, պարտադրում վերջիններիս իրենց շահավետ քաղաքականությունը, առաջին հերթին՝ տնտեսության մեջ, և հակառակվում են առավել քիչ հաջողակների՝ իրենց ակումբ ընդունմանը: Բայց նրա դիտարկմամբ. «...սա դեռ կայացած հստակ կանոններով գլոբալացված աշխարհ չէ, մենք միայն թևակոխել ենք անցումային դարաշրջան, երբ կապիտալիստական աշխարհ-համակարգն ընդհանուր առմամբ կվերափոխվի ինչ-որ այլ բանի: Ապագան, որը բացարձակապես կանխավ որոշված և անայլընտրանք չէ, կորոշվի այս անցումով (և այս անցումում), որի հանգուցալուծումը բոլորովին պարզ չէ» [14]:

Խոսելով գլոբալ սոցիալական փոփոխություններից՝ նախ և առաջ անհրաժեշտ է ընդունել, որ վերջին տասնամյակների ընթացքում տեղի է ունեցել սոցիալական իրականության մեծ մասի կորուստ, այսպես կոչված *երկրորդ աշխարհի*՝ սոցիալիզմի նախ-

կին երկրների աշխարհի: Ներկայում գործում է երկու աշխարհի մակրոսոցիալական մոդելը. առաջին աշխարհի՝ զարգացած երկրների և երկրորդ աշխարհի՝ մնացած բոլորը: Հետազոտողները այս մոդելը հաճախ անվանում են «Հյուսիս-Հարավ»: Անհրաժեշտ է նաև նշել, որ երկրորդ աշխարհի վերացումից հետո փոխվել է գլոբալ էթիկայի բնույթը: Եթե նախկինում մակրոէթիկան կառուցվում էր խաղաղ գոյակցության սկզբունքի վրա, որը վերջին հիսուն տարվա ընթացքում ընդունել էր սառը պատերազմի ձևը, ապա հյուսիսի և հարավի հարաբերությունների էթիկան առավել հաճախ է կառուցվում և նկարագրվում՝ որպես սառը պատերազմ: Այդ գլոբալ էթիկական համակարգը բնորոշվում է հետևյալ միտումներով.

- առաջին աշխարհի պարտադրումը երկրորդին՝ տնտեսական և, եթե անհրաժեշտ է, ռազմաքաղաքական գերիշխանության և ենթակայության հարաբերությունների,
- հարուստների և աղքատների միջև խորացող անհավասարություն, աշխարհում նվազագույն նյութական կենսական ռեսուրսներին տիրապետող բնակչության աճ,
- հոգևոր անհավասարության աճ. հարուստների և աղքատների միջև արժանահավատ տեղեկատվություն ստանալու հնարավորության խզվածքի մեծացում,
- գերակայող համաշխարհային կրոնական համակարգերի միջև աղետալիորեն ուժեղացող անտագոնիստական միտումներ,
- սոցիալական արդարության սկզբունքի գործողության նվազեցումը և սեռերի, տարիքային խմբերի, ռասաների և այլնի միջև սոցիալական անհավասարության աճ,
- գլոբալ սոցիալական արտոնություններում և պարտավորություններում ազգերի և պետությունների միջև անհամապատասխանությունը, սոցիալական քաոսի և կարգ ու կանոնի զուգակցում,
- տնտեսական աճի և կյանքի որակի միջև կորելյացիայի բացակայություն,

- քաղաքական ինստիտուտների և պետությունների սոցիալական գործառույթների նվազման ֆոնի վրա սոցիալական ընչազրկության աճ [15]:

Այսպիսով, ժամանակակից աշխարհում տեղի ունեցող գլոբալացման գործընթացն ի հայտ է բերում ինչպես նոր հնարավորություններ, այնպես էլ՝ նոր մարտահրավերներ: Ինչպես նշվեց, ժամանակակից մարտահրավերների շարքին պետք է դասել առանձին հասարակությունների ներսում, ինչպես նաև աշխարհի զարգացած և մյուս երկրների միջև ահագնացող չափերի հասնող սոցիալ-տնտեսական մշտապես մեծացող բևեռվածության մեծացումը: Այսպես, միայն 2012թ. տվյալներով աշխարհի 100 ամենահարուստ մարդիկ իրենց ընդհանուր ունեցվածքն ավելացրել են 241 միլիարդ դոլարով՝ հասցնելով 1.9 տրիլիոն դոլարի [16]: Ինչպես նշել է Բերթելսմանի հիմնադրամի (Bertelsmann Stiftung) տնօրեն Աարտ դե Գեուսը (Aart De Geus). «Մենք պետք է ընդունենք, որ գլոբալացումը միայն ավելացնում է հարուստների և աղքատների միջև անդունդը»: Այս հիմնադրամի իրականացված հետազոտությունը, որն անց է կացվել 42 երկրում, պարզել է, որ 1999-2011թթ. ընթացքում տնտեսապես զարգացած երկրներում մեկ շնչի վրա ընկնող ՀՆԱ-ն տարեկան ավելացել է 1000 եվրոյով, իսկ անցումային տնտեսության երկրներում, ինչպիսիք են՝ ՌԴ-ն, ՀԱՀ-ը, Բրազիլիան, Մեքսիկան, Հնդկաստանը և Չինաստանը՝ ավելացումը եղել է 100 եվրոյից պակաս: Գլոբալ տնտեսությունից առավել օգտվել են Ֆինլանդիան, Դանիան, Ճապոնիան: Գերմանիայում, որը հայտնվել է ցուցակի չորրորդ հորիզոնականում, 1999-2011 թթ. մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն ամեն տարի ավելացել է 1240 եվրոյով [17]:

Այս փաստն արձանագրում են նաև առաջատար երկրների ղեկավարները: Այսպես, ՌԴ նախագահ Վ. Պուտինը 2012թ. հայտնի նախընտրական հոդվածում նշում էր, որ գեներացվող բարեկեցությունն անհավասարաչափ է բաշխվել և բաշխվում առանձին երկրների և տարածաշրջանների միջև: Եվ դա նվազեցում է գլոբալ կայունությունը, սանձազերծում հակամարտություններ, նվա-

զեցնում համաշխարհային հանրության հնարավորությունը պայմանավորվել սուր, սկզբունքային հարցերի շուրջ [18]:

Ինչպես նշում է ամերիկացի հայտնի ֆինանսիստ և *բաց հասարակության* տեսության ջատագով Ջ. Սորոսը. «Գլոբալ կապիտալիստական համակարգը աշխարհի երկրներին դրել է անհավասար պայմանների մեջ: Հարուստների և աղքատների միջև անդունդը մեծանում է: Իսկ համակարգը, որը ոչ մի հույս չի տալիս և չի օժանդակում պարտվածներին, դրդում է նրանց անել ապակառուցողական քայլեր՝ թելադրված հուսահատությամբ, և դիսկ է ստեղծում պայթեցվելու ներսից» [19]: Հատկանշական է նաև ֆրանսիացի հայտնի աշխարհագրագետ, պատմաբան, ֆրանսիական աշխարհաքաղաքականության հիմնադիրներից Էլիզե Ռեկլյուի (Jacques Élisée Reclus)՝ ավելի քան մեկ դար առաջ արված դիտարկումը. «Ներկայում խոսք անգամ չի կարող լինել ամբողջ աշխարհի առաջընթացի մասին: Մեկի բարգավաճումը տեղի է ունենում մյուսների զրկանքների գնով: Դա է մեր կողմից գովերգված կիսաքաղաքակրթության առավել ցավոտ կողմը, որն այլ կերպ չի կարելի անվանել, քանի որ այն բարիք է բերում միայն երկրի բնակչության մի մասին: Չնայած միջինացված ձևով մարդիկ ոչ միայն առավել ակտիվ և առավել եռանդուն են դարձել, այլ նաև առավել երջանիկ, քան այն ժամանակ, երբ մարդկությունը՝ բաժանված ցեղերի և տոհմերի, իրեն չէր գիտակցում որպես մեկ միասնություն, այնուամենայնիվ, բարոյական խզվածքը արտոնյալ շերտերի և աղքատների կենսամակարդակների միջև շատ ավելի մեծ է դարձել: Դժբախտները դարձել են առավել դժբախտ. իրենց չքավորությանն ավելացել են նախանձն ու ատելությունը՝ սաստկացնելով նրանց ֆիզիկական տառապանքներն ու հարկադիր ինքնազսպումը» [20]:

Այս համատեքստում տեղին է մեջբերել Ավստրալիայի ԱԱ ռազմավարության մեջ տեղ գտած դրոյթը, ըստ որի՝ ազգի ընդհանուր անվտանգությունն անխզելիորեն կապված է տնտեսական կայունության, կառավարման արդյունավետության և սոցիալական միասնականության հետ [21]:

3.3. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԱՓՈԽՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ 21-ՐԴ ԴԱՐԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ

Որպես 21-րդ դարի առանցքային մարտահրավեր՝ հարկ է նշել պետության՝ նրա ավանդական հասկացությամբ, գոյության սպառնալիքը: Ինչպես նշում են Ս. Շահինյանը և Վ. Սողոմոնյանը. «Գլոբալացումը ենթադրում է ազգային պետությունների դերի նվազեցում և վերացում, այստեղից էլ՝ ժողովրդավարությունը դառնում է դատարկ հնչյուն, իսկ մարդու իրավունքների պաշտպանության մասին խոսելն իսկ՝ ավելորդ: Գլոբալացումը ենթադրում է ընդհանուր չափանիշներ և չափորոշիչներ, ինչպես նաև ընդհանուր, համաշխարհային մշակութային դաշտ, որը, ինչքան էլ համամարդկային ու հումանիստական լինի, միևնույն է, հակասության մեջ է ազգային մշակութային նկատմամբ և ձգտելու է նվաճել նրանց զբաղեցրած հոգևոր դաշտը» [22]:

Ժամանակակից հետազոտողների մեծամասնությունը նշում է, որ ոչ բոլոր երկրներն են կարողանում հաջողությամբ ներգրավվել նոր գլոբալ տնտեսական տարածության մեջ: Գլոբալացման հետ կապված տեղեկատվական, ֆինանսական և այլ գործընթացները կրճատում են ներքաղաքական իրավիճակի հսկողության և կառավարման ազգային կառավարությունների հնարավորությունները: Ինչպես նշում է հետազոտող Տ. Վասիլևան՝ անցած հազարամյակի վերջին համաշխարհային հանրության սրընթաց կերպափոխումը արմատապես փոխել է փոխկապվածությունը տարածքային առումով սահմանափակ պետությունների և շուկաների միջև: Տարածքային հսկողության միջպետական համակարգը, որը ղեկավարում էր քաղաքական համակարգը վերջին երեք հարյուր տարիներին, իր տեղն առավել շատ զիջում է այլ *հակադարձ-քային* իրականության, երբ երկրները բաժանող աշխարհագրական սահմաններն առավել շատ լրոզվում են տարածաշրջանային և գլոբալ շուկաների տրամաբանությամբ: Շուկաները դադարել են լինել տարածքային առումով սահմանափակ, և ակնհայտորեն առկա է պետությունների քաղաքական սահմանների և շուկաների

տնտեսական սահմանների միջև աճող անհամատեղելիությունը: Տնտեսական շուկաների ռեգիոնալացումը և գլոբալացումը ինտեգրացման բնորոշ գծերն են, և պետությունների փորձերը՝ դժվարացնել կամ կարգավորել ապրանքների, մարդկանց, գաղափարների հոսքը, լավագույնը անցանկալի է, իսկ վատագույնը՝ անհնարին: Ամբողջ մոլորակի վրա պետությունները, մտադրված կամ իրենց կամքին հակառակ, իրենց իշխանությունը զիջում են ֆինանսական ինստիտուտներին և հրաժարվում են ի շահ ամբողջ հասարակության տնտեսության կարգավորման իրենց իրավունքից: Այդ ժամանակ անդրազգային կորպորացիաները, որոնք պատել են աշխարհը, կրոնական կազմակերպությունները, նոր մեծամտացած էթնիկ խմբերը և այլ գործող անձինք, ռեսուրսների և ազդեցության համար պայքարում մարտահրավեր են նետում պետություններին: Տնտեսական գլոբալացումը ոչ միայն նվազեցնում է ազգային պետությունների նշանակությունը, այլև վտանգում է ազգային ինքնիշխանության և անկախության հիմքերը: Հատկապես կարևոր է պետության լեգիտիմության համար նրա անկարողությունը իրականացնելու իր պարտավորությունները՝ որպես ազգային անվտանգության երաշխավոր [23]:

Մեկ այլ տեսակետի համաձայն՝ ժամանակակից ազգային պետությունը, որպես կազմակերպության ստանդարտ, ինքն է իրենից ներկայացնում գլոբալացման ձև: Այսպես, Բ. Աքսֆորդի դիտարկմամբ՝ չնայած նրան, որ աշխարհը ֆրագմենտացված և բաժանված է ինքնիշխան վարչատարածքային միավորումների, վերջիններս իրենք են գիտակցաբար կառուցված աշխարհակարգի մաս [24]:

Քննարկվող հարցի համատեքստում հատկանշական է նաև Մ. Մարգարյանի և Վ. Հարությունյանի հետևյալ դիտարկումը. «...ազգ-պետությունները, որոնց սահմաններն առաջացել են տարածքների և ռեսուրսների համար մղվող պերմանենտ պատերազմների արդյունքում, սպառեցին իրենց գերիշխող նշանակությունը՝ պայմանավորված նաև XX դարի վերջի այնպիսի ֆենոմենով, ինչպիսին գլոբալացումն է: Վերջինս դիտարկելով որպես

սոցիալ-տեխնոլոգիական և ժողովրդավարացման երրորդ ավիքի հեղափոխության ֆենոմենի բնական արդյունք՝ ակնհայտ է դառնում, որ այն, արտահայտելով հետարդիական աշխարհակարգի տնտեսական, քաղաքական և սոցիալական կառուցվածքի փոփոխությունները, պայմանավորում է որակական նոր փոփոխությունների համակարգի ստեղծման անհրաժեշտություն» [25]:

Ինչպես իր հայտնի հոդվածում ժամանակին նշել է ՀՀ նախկին վարչապետ Տ. Սարգսյանը. «Պետականությունն այն տեսքով և այն պատկերացմամբ, որ առկա է այսօր և համապատասխանում է հասարակության ինդուստրիալ տիպին, մոտենում է իր վախճանին: Նրան փոխարինելու են գալիս հասարակության կազմակերպման որակապես նոր՝ ցանցային ձևեր, ինչը ենթադրում է ինքնակազմակերպման հիման վրա մարդկանց ազատ միավորում որոշակի ցանցում, որտեղ մտավոր զարգացման մակարդակն ապահովում է իշխանության ընկալումը ոչ թե որպես հարկադրանքի ձև, այլ որոշակի պարտավորությունների և պատասխանատվության գիտակցված հանձնառություն, որը նպաստում է անհատի առավել լիարժեք ինքնարտահայտմանը» [26]:

Վերոնշյալի համատեքստում տեղին է մեջբերել Հայաստանի առաջին հանրապետության առաջին վարչապետ, ականավոր պետական, քաղաքական գործիչ Հովի. Քաջազնունու խոսքերը. «Այսօր, քանի դեռ գոյութիւն ունի պետական բաժանումների ու պետական հակամարտութիւնների դրութիւնը՝ ամէն մի ազգ հարկադրուած է իր սեփական պետութիւնը կազմելու, որովհետեւ այլ կերպ չի կարող ունենալ իր Տունը, իր Հայրենիքը: Ապապետական ապագայում հայրենիքները, ազգային մշակոյթի օջախները կարիք չեն ունենայ պետական մեխանիզմի՝ իրենց կենսատու կրակը միշտ վառ պահելու համար» [27]:

Ամփոփելով նշենք, որ գերակայող վերապետական ձևերը զլոբալ տեղեկատվական հասարակության արգասիքն են: Իրականություն է դառնում նաև այն, որ ավանդական քաղաքական տարածության կործանման պայմաններում իշխանությունն աստիճանաբար ստանում են բոլորովին նոր դերակատարներ, ինչպի-

սիք են անդրազգային կորպորացիաները, միջազգային ու ոչ կառավարական կազմակերպությունները, որոնց գործողություններն ու շահերը շատ հաճախ ընդհանուր հսկողությունից դուրս են: Այստեղ տեղին է նշել Մ. Լալայանի դիտարկումը, ըստ որի՝ քանի դեռ չի գտնված քաղաքական կազմակերպման առավել արդյունավետ ձև, քան պետությունը, ազգերի ներդաշնակ գոյակցության ապապետական ապագան կմնա երազ, որը հաճախ դառնալու է գաղափարախոսական խայծ ուժեղների ձեռքին (ինչպես օրինակ՝ համայնավարական ապագան)՝ թույլերին ապակողմնորոշելու համար [28]:

Փաստ է, որ գլոբալացման գործընթացներն անխուսափելիորեն կերպափոխում են պետության ավանդական ինստիտուտը: Աշխարհաքաղաքական ներկա գործընթացներում պետության ավանդական ինստիտուտը շեշտակիորեն կորցնում է իր կշիռը, միաժամանակ՝ նոր, ավանդական պետության, այսպես կոչված՝ այլընտրանքային արդյունավետ ձևը դեռևս չի նշմարվում: Հատուկ անհանգստություն է առաջացնում նաև ազգային պետությունների թուլացման գործընթացն այնպիսի տարածաշրջաններում, որտեղ արդեն գոյություն ունեցող բազմաթիվ հիմնախնդիրների համատեքստում նման միտումը կարող է հանգեցնել լարվածության մեծացմանը: Կասկածից վեր է, որ աշխարհի քարտեզի վրա նման տարածաշրջան է հանդիսանում նաև Հարավային Կովկասը:

ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ

- Ի՞նչ է գլոբալացումը և ինչպե՞ս է այն բնորոշվում:
- Ինչպիսի՞ դրական և բացասական հետևանքներ ունի գլոբալացումն աշխարհի և առանձին երկրների վրա:
- Ո՞րն է գլոբալացման առանցքային բաղադրիչը:
- Անվտանգության համատեքստում ինչպիսի՞ խնդիրներ է առաջադրում համաշխարհային տնտեսության գլոբալացումը:
- Ինչպիսի՞ սոցիալական վերափոխումների է հանգեցրել գլոբալացումը:
- Ինչպիսի կերպափոխումների են ենթարկվել պետությունները 21-րդ դարում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Волков Ю., Основы социологии и политологии: учебное пособие/ Ю.Г. Волков, А.В. Лубский. М.: Альфа-М: ИНФРА-М, 2011. С. 188.
2. Сильвестров С., Глобальная модернизация: последствия для человека и общества // Общество и экономика, 2000, №5-6. С. 224.
3. Лисичкин В.А., Шелепин Л.А., Россия под властью плутократии. История черного десятилетия, М., 2003. С. 26.
4. Азроянц Э.А., Глобализация как научная проблема // Полигнозис, № 4, 2000. С. 106.
5. Հերսթ Փոլ Ք., Գլոբալացման հարցերի շուրջ /Հերսթ Փ. և Թոմփսոն Գ. Եր., «Հայկական հանրագիտարան» հրատ. 2004, էջ 133:
6. Орлов М.О., Социальная динамика в эпоху глобализации (этические проблемы управления) // Власть. 2007, № 12. С. 64-65.
7. Цыганков П.А., Взаимовлияние внешней политики и общественного мнения: история, теории, воздействие глобализации // Внешняя политика: вопросы теории и практики: материалы научного семинара: [сборник] под ред. П. А. Цыганкова. – М.: КДУ, 2009. 232 с.: табл. – (Серия: «Научные семинары», «Круглые столы», «Дискусии»). – Вып. IX. С. 155.
8. Бек У., Общество риска. На пути к другому модерну. Пер. с нем. М.: Прогресс-Традиция, 2000.
9. Иванов В. Н., Назаров М. М. Массовая коммуникация в условиях глобализации // Социс. 2003. С. 20-21.

10. Дробот Г. А., Экономическая безопасность стран догоняющего развития в условиях глобализации (на примере России) // Внешняя политика: вопросы теории и практики: материалы научного семинара: [сборник] под ред. П. А. Цыганкова. – М.: КДУ, 2009, 232 с.: табл. – (Серия: «Научные семинары», «Круглые столы», «Дискуссии»). – Вып. IX. С. 198.
11. Կիրակոսյան Վ.Լ., Համաշխարհային տնտեսությանը ՀՀ ինտեգրման ուղիները, Եր., Հեղինակային հրատարակություն, 2007, էջ 35:
12. Սահակյան Շ., Մարքեթինգը գլոբալ տնտեսությունում (Դասախոսություն), Եր., «Տնտեսագետ», 2009, էջ 28:
13. Киссинджер Г. Нужна ли Америке внешняя политика?/ Пер. с англ. под ред. В.Л. Иноземцева, М., Ладомир, 2002. С. 235.
14. Валлерстайн И. Глобализация или переходная эпоха? // Красные холмы. М., 1999. С. 122.
15. Левашов В. К. Общество и глобализация // Социс. 2005, № 3. С. 15-16.
16. Տե՛ս «2012-ին աշխարհի 100 ամենահարուստ մարդկանց ունեցվածքն ավելացել է 241 մլրդ դոլարով» (02/01/13), <http://www.tert.am/am/news/2013/01/02/world-100-rich/>
17. Տե՛ս «Исследование: Германия значительно выиграла от глобализации» (24/03/2014), <http://dw.de/p/1BV3S>
18. Տե՛ս «Россия сосредотачивается — вызовы, на которые мы должны ответить» (16/01/2012), <http://izvestia.ru/news/511884>
19. Сорос Дж. Открытое общество. Реформируя глобальный капитализм, М., 2001. С. 20-21.
20. Моро-Дефарж Ф. Введение в геополитику. М., 1996. С. 131.
21. Strong and Secure: A Strategy for Australia's National Security, 2013. P. 4. Տե՛ս http://www.dpmc.gov.au/national_security/national-security-strategy.cfm
22. Գլոբալիզացիայի (համաշխարհայնացման) հակասությունները, Եր., Հանգսակ-97, 2003, էջ 17-18:
23. Васильева Т. А. Трансформация функций института государства в условиях глобализации // Власть. 2007, № 10. С. 11.
24. Axford B. Globalization // Understanding Contemporary Society: Theories of the Present, 2000. P. 247.

25. Մարգարյան Մ., Հարությունյան Վ., Պետության ինստիտուտի կերպավորումը հետարդիականության անցման գործընթացում, «Հանրային կառավարում», N 2, 2013, էջ 112:
26. Սարգսյան Տ., Պետության վախճանը, «21-րդ դար», թիվ 1 (19), 2008, էջ 22-23:
27. Քաջազնունի Յով., Ազգ և Հայրենիք, Եր., «Հայրենիք» Ակումբ, 2008, էջ 177:
28. Լալայան Մ., Ազգային գաղափարախոսության խնդիրների շուրջ, «Հայրենիք» ակումբ, Եր., 2008, էջ 60:

ԳԼՈՒԽ 4

ԳԼՈՐԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

- ԳԼՈՐԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ
- ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՆ ՈՒ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ
- ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ
- ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻՈՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

4.1. ԳԼՈՐԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԵՎ ՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

*Հմուտ պատերազմողն օտար բանակը
հպարակեցնում է առանց ճակատամարտի...*

Սուն Յգի

Բազմաթիվ գիտնականներ 21-րդ դարասկզբի հասարակությունը դիպուկ անվանում են *ռիսկի հասարակություն*: Ռիսկի իրավիճակն արդիականացավ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում արձանագրված հեղափոխական գործընթացներով, որով մարդկային քաղաքակրթությունը թևակոխեց պատմական զարգացման որակապես նոր փուլ:

Ինչպես նշում են Յու. Ջուբոկը և Վ. Չուպրովը. «Հասարակության վերափոխման ինովացիոն բաղադրիչը հանդիսանում է ռիսկի օբյեկտիվ նախադրյալը: Վերափոխման գործընթացում մարդկության ակտիվությամբ պայմանավորված՝ ռիսկերի տեսակարար կշիռը, այսինքն՝ առավելապես ներքին բնույթի, մեծանում է: Հետևաբար, մոդեռնացման հետևանքով առաջացած սպառնալիքների նկատմամբ մարդու համակարգային անպաշտպանությունը Ու. Բեկի կարծիքով հենց ինովացիոն ռիսկն է որը վերափոխվող հասարակությունում ձեռք է բերում համակարգային, համալիր բնույթ» [1]:

Արդի հասարակությունում գլոբալ տեղեկատվական-հաղորդակցային միջավայրը, հաղորդակցության զանգվածային, այդ թվում՝ նոր սերնդի միջոցները ի հայտ են բերում որոշակի ռիսկեր:

Գրականության մեջ առկա են բավականաչափ ուշադրության արժանի աշխատանքներ, որոնք վերաբերում են սոցիալական տարածության ճարտարապետության վրա էլեկտրոնային հաղորդակցությունների ազդեցությանը: Այդ հայեցակարգերում հանրությունը ներկայացված է որպես շփման աշխարհ, որտեղ նոր տեղեկատվական միջոցները դառնում են մարդու կողմնորոշման և միմյանց հետ մարդկանց փոխգործակցության կարևորագույն գործիքներից մեկը [2]:

Տեղեկատվական-համակարգչային տեխնոլոգիաների առաջընթացի պայմաններում սոցիալական կազմակերպման նոր ձևերի հայեցակարգային վերլուծության հոգևոր հայրն է կանադացի գիտնական Մ. Մաքլուհանը (Marshall McLuhan)՝ իր *գլոբալ գյուղի* տեսությամբ, որում նկարագրում է, թե ինչպես է երկրագունդը էլեկտրոնային կապի միջոցների արդյունքում սեղմվում մինչև գյուղի չափերի [3], ինչպես է հնարավոր դառնում աշխարհի ցանկացած կետից ցանկացած մայրցամաք տեղեկատվության ակնթարթային փոխանցումը [4]:

«Գլոբալ գյուղ» եզրի տակ Մաքլուհանը նկատի ուներ սոցիալական կազմակերպության նոր ձև, որն առաջանում է, երբ գերարագ էլեկտրոնային լրատվամիջոցները կապում են աշխարհը մեկ հսկայական սոցիալական համակարգում: Նրան հետաքրքրում էր լրատվության ազդեցության հիմնախնդիրները զգայական օրգանների վրա: Նա լրատվամիջոցները հայտարարեց մարդու շարունակությունը և պնդում էր, որ վերջիններս ժամանակի և տարածության մեջ բառացիորեն ընդարձակել են տեսողությունը, լսողությունն ու շոշափումը: Էլեկտրոնային լրատվամիջոցները սովորական մարդու համար բացում են նոր հորիզոններ և թույլ տալիս միաժամանակ լինել ամենուր: Հաղորդակցության էլեկտրոնային միջոցներն արմատապես վերափոխել են մարդկային շփման ամբողջ համակարգը: Մաքլուհանը կարծում էր, որ էլեկտրոնային տեխնոլոգիաները (տիեզերական կապը, դյուրակիր տեսաձայնագրությունը) ստեղծել է սոցիալական շփման նոր հարթություն, որում հավասարվում են աշխարհագրությամբ և տնտեսությամբ առաջացած շեղումները և անհամաչափությունները՝ նպաստելով հասարակության տարբեր շերտերի և ժողովուրդների միջև փոխադարձ հասկացողության մակարդակի բարձրացմանը [5]:

Մեր կարծիքով՝ ցանցային հասարակության և սոցիալական տարածության վիրտուալացման երևույթի վերլուծությունը բավականին օբյեկտիվ և բազմակողմանի ներկայացված է Մ. Կաստելիի աշխատանքներում: Վերջինիս *ցանցային հասարակության* տեսության համաձայն՝ տեղեկատվական-հաղորդակցային ցանցերի տարածումը հանգեցնում է նոր տիպի հասարակության առաջաց-

ման, որում առաջնային նշանակություն ունեն տարբեր ուղղություններով՝ հորիզոնական և ուղղահայաց, տարբեր երկրների ներսում և ամբողջ աշխարհի մասշտաբով, հասարակական կյանք թափանցող տեղեկատվական հոսքերը: Ցանցը անվանելով տեղեկատվական դարաշրջանի կազմակերպական տարատեսակ՝ Մ. Կաստելլը կարծում է, որ նրա տեխնոլոգիական հիմքի դերը իրականացնում են համակարգչային ցանցերը և, առաջին հերթին, համացանցը, որը համարվում է ժամանակակից հասարակության առանցքային տեխնոլոգիան: Հաղորդակցությունների իրականացման հնարավորության և արագության բազմակի ավելացման շնորհիվ համացանցը լուծում է ժամանակակից հասարակության կարևորագույն խնդիրներից մեկը, որը կայանում է տեղեկատվության ահռելի ծավալի գեներացման, մշակման և մշտական հոսքի փոխանցման մեջ: Ինչպես նշում են Մ. Կաստելլը և Է. Կիսելյովան. «Ցանցերը կապիտալիստական տնտեսության համար հարմար գործիքներ են՝ հիմնված նորացման, գլոբալացման և ապակենտրոնացված համակենտրոնացման վրա, աշխատավորների և ֆիրմաների աշխատանքի համար՝ հիմնված շարժունության և ադապտիվության վրա, մշակույթի համար՝ անվերջ ապակառուցումով և վերակառուցումով, քաղաքականության համար՝ ուղղված արժեքների և հասարակական տրամադրությունների ակնթարթային մշակմանը, և սոցիալական կազմակերպության համար՝ ուղղված տարածության ճնշմանը և ժամանակի ոչնչացմանը» [6]: Միաժամանակ, ըստ Կաստելլի՝ տեղեկատվական հասարակությունն ընդամենը ընդգծում է հասարակության մեջ տեղեկատվության կարևորությունը, սակայն տեղեկատվությունը, նրա կարծիքով, ամենալայն իմաստով (որպես գիտելիքի փոխանցում), ծայրահեղ նշանակություն է ունեցել բոլոր հասարակություններում, ներառյալ՝ միջնադարյան Եվրոպան: «Տեղեկատվային» եզրը նրա մոտ ցույց է տալիս սոցիալական կազմակերպության յուրահատուկ ձևի պարագան, որում տվյալ պատմական շրջանում ի հայտ եկող նոր տեխնոլոգիական պայմանների շնորհիվ տեղեկատվության գեներացումը (կուտակումը), մշակումն ու փոխանցումը դարձան իշխանության և արտադրողականության հիմնարար աղբյուրներ [7]:

4.2. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՆ ՈՒ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես նշում է ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության հարցերով նախկին խորհրդական Հենրի Քիսինջերը՝ սովորական են դարձել տեղեկատվական դարաշրջանի՝ որպես պատմության մեծ, նույնիսկ մեծագույն մտավոր հեղափոխության մասին խոսակցությունները և նրա սոցիալական, տնտեսական ու քաղաքական կողմերի վրա սևեռվելը: Հազվադեպ, սակայն քննարկվում է նաև նրա ազդեցությունը միջազգային հարաբերությունների վրա, բացառությամբ թերևս ժամանակակից հաղորդակցության միջոցների գլոբալ հնարավորությունների մասին փաստումների: Ընդ որում, այստեղ նկատի են առնվում միայն թվեր և տեղեկատվության փոխանցման արագությունը: Բայց միջազգային հարաբերությունները, հետևաբար՝ նաև պատմության ընթացքը, կախված են ոչ միայն տեղեկատվություն ունեցող մարդկանց քանակից. առավել կարևոր են նրա ընկալման եղանակները: Քանի որ հասանելի տեղեկատվության ծավալը սովորաբար գերազանցում է նրա մշակման հնարավորությունները, բնականաբար խորանում է տեղեկատվության ու գիտելիքի, առավել ևս՝ գիտելիքի և իմաստության միջև խզումը [8]:

Բացի այդ, ձևավորվող գլոբալ աշխարհակարգը տարբերվում է նախորդներից ինչպես ի հայտ գալու հանգամանքներով, այնպես էլ՝ մի շարք այլ էական գծերով: Հայտնի է, որ պետության հզորության ավանդական ցուցիչների հետ մեկտեղ, ինչպիսիք են տարածքը, բնական ռեսուրսները, մարդկային կապիտալը, տնտեսության զարգացման մակարդակը, գիտական ներուժը, զինված ուժերի մարտունակությունն ու ռազմատեխնիկական հագեցվածությունը և այլն, գլոբալացումն առաջին պլան է մղում ուժի նոր գործոններ: Մասնավորապես, այսօր բացառիկ դեր է հատկացվում տեղեկատվությանը, հաղորդակցությանը և տեղեկատվական տեխնոլոգիաներին: Դրա հետ կապված ի հայտ է եկել տեղեկատվական անվտանգության ապահովման խնդիրը, որը կարող է

դիտարկվել տարբեր ասպեկտներով և վերլուծության տարբեր մակարդակներում՝ համաշխարհային քաղաքական համակարգից մինչև առանձին անհատ [9]:

Տեղեկատվական անվտանգություն հասկացությունը հասարակության տեղեկատվական միջավայրի պաշտպանվածության վիճակն է, որն ապահովում է նրա ձևավորումը և զարգացումը՝ ի շահ քաղաքացու, հասարակության և պետության:

Տեղեկատվական անվտանգությունը տեղեկատվության մշակման, բաշխման, ստացման, օգտագործման և տարածման ոլորտում պաշտպանվածությունն է, նրա օբյեկտիվության ապահովումը, պետական գաղտնիքի և գաղտնիության ռեժիմի պահպանումը, նամակագրության գաղտնիությունը և այլն [10]:

Գիտության, տեխնիկայի, արտադրության ոլորտներում արժատական փոփոխություններով բնութագրվող պոստինդուստրիալ կամ տեղեկատվական հասարակության ներկայիս դարաշրջանում, պետությունները բախվել են ժամանակակից գլոբալ համակարգային խնդիրների լուծման անհրաժեշտությանը: Դրանցում առանցքայիններից է տեղեկատվական անվտանգության խնդիրը, որը ներթափանցում է մարդու կենսագործունեության բոլոր ոլորտները:

Տեղեկատվական անվտանգության սպառնալիքները համարվում են ամենավերջին սերնդի սպառնալիքներից մեկը: Վերջինս սպառնալիքների բազմագործոնային համակարգ է, որն ուղղված է առանձին քաղաքացիների, կորպորացիաների, բանկերի, ինչպես նաև՝ պետական կառույցների դեմ: Նման սպառնալիքների աղբյուր են էլեկտրոնային հաշիվների հանցագործ կողոպտիչները, ցանցահենները, որոնք մրցում են տնտեսական և պետական բարդ էլեկտրոնային ցանցեր և ծրագրեր ներթափանցման մեջ: Այն փաստը, որ քաղաքացիների, երկրների և պետությունների կենսագործունեության մեծ մասը կառավարվում է կիրբեռնետիկ ցանցերի և ծրագրերի միջոցով, էականորեն բարձրացնում են նրանց խոցելիությունը կիրբեռնարձակումների նկատմամբ: Նման ցանցերի աշխատանքի մեջ ներթափանցումը, որոնք

կառավարում են, օրինակ, էներգամատակարարման համակարգերը, կարող է հանգեցնել արտակարգ իրավիճակների, որոնք համեմատվում են խոշոր տեխնոգեն աղետի հետ: Այդպիսի հնարավորությունները ծայրահեղ գրավիչ են ահաբեկիչների համար: Առավել հաճախ են դառնում առանց թույլտվության ԱԱ կառույցների ցանցեր ներթափանցման և տարբեր վիրուսներով վարակման դեպքերը [11]:

Անհատի շահերը տեղեկատվական ոլորտում ներառում են մարդու և քաղաքացու՝ օրենքով չարգելված գործունեության իրականացման, ֆիզիկական, հոգևոր և մտավոր զարգացման համար օգտագործվող տեղեկատվության հասանելիության սահմանադրական իրավունքի իրագործումը, ինչպես նաև շրջակա միջավայրի փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը և անձնական անվտանգությունն ապահովող տեղեկատվության պաշտպանությունը:

Հասարակության շահերը տեղեկատվական ոլորտում ներառում են անձի շահերի ապահովումն այդ ոլորտում, ժողովրդավարության ամրապնդումը, իրավական-սոցիալական պետության կառուցումը, հասարակական համաձայնության և հանդուրժողականության հաստատումը, ինչպես նաև հասարակության և նրա տարբեր հատվածների հոգևոր և պատմամշակութային ժառանգության պահպանումը, ազգային արժեքների և ավանդույթների վերարտադրությունն ու զարգացումը, ազգային ինքնության հիմնասյուների՝ բարոյահոգեբանական կերտվածքի, լեզվի և ազգային եկեղեցու դերի ամրապնդումը, պետության, սփյուռքի միասնության տեղեկատվական կապի ապահովումը: Այս համատեքստում հետաքրքիր է հոգեբան Կ. Նալչաջյանի կարծիքը, ըստ որի՝ ազգային հոգեբանության նվազման և ինքնագիտակցության թուլացման հետևանքով այսօր Հայաստանը կանգնած է ազգային ինքնության վերացման սպառնալիքի առջև, որը նաև պատճառ է արտագաղթի, մշակութային, կրթական արժեքների թուլացման [12]:

Պետության շահերը տեղեկատվական ոլորտում ներառում են համազգային տեղեկատվական դաշտի ձևավորման, նրա ենթակառուցվածքների ներդաշնակ գործառման և զարգացման, սահմանադրական կարգի, երկրի ինքնիշխանության և տարածքային ամբողջականության անխախտելիության, քաղաքական, տնտեսական և սոցիալական կայունության, օրինականության և իրավակարգի ապահովման նպատակով անձի և քաղաքացու տեղեկատվության ստացման և օգտագործման բնագավառում նրա սահմանադրական իրավունքների և ազատությունների իրականացման, ինչպես նաև հավասարազոր և փոխշահավետ միջազգային համագործակցության զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

Իրենց ընդհանուր ուղղվածության տեսանկյունից պետության տեղեկատվական անվտանգության սպառնալիքները դասակարգվում են հետևյալ տիպերի.

1. սպառնալիքներ՝ ուղղված մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքներին և ազատություններին հոգևոր կյանքի և տեղեկատվական գործունեության բնագավառում, նրանց անհատական, խմբային և հասարակական գիտակցության ձևավորմանը,
2. սպառնալիքներ՝ ուղղված երկրի պետական քաղաքականության տեղեկատվական ապահովմանը,
3. սպառնալիքներ՝ ուղղված հայրենական տեղեկատվական ռեսուրսների զարգացմանը, դրանց արտադրանքի ներքին շուկայի բավարարմանը և համաշխարհային շուկա արտահանմանը, ինչպես նաև հայրենական տեղեկատվական միջոցների կուտակման, պահպանման և արդյունավետ օգտագործման ապահովմանը,
4. սպառնալիքներ՝ ուղղված երկրի տեղեկատվական և հեռահաղորդակցային ռեսուրսների և համակարգերի անվտանգությանը:

Տեղեկատվական հեղափոխությունը աննախադեպ հնարավորություն է ստեղծել համաշխարհային տեղեկատվական ցան-

ցերի ձևավորման, արագ և առավել մեծ ծավալներով աշխարհի ցանկացած անկյուն անհրաժեշտ տեղեկատվության տարածման համար: Այդ գործընթացներն աննախադեպ հնարավորություն են ստեղծում անհրաժեշտ քարոզչության միջոցով հասարակական տրամադրության, գիտակցության և վարքի զանգվածային մանիպուլյացման և անձնական տեղեկատվության առցանց վերահսկողության համար, որը վեր է ածվում ժամանակակից հզորագույն գեների:

Ժամանակակից պատերազմների վարման միջոցներից են հոգեբանական, տեղեկատվական ներազդման միջոցները՝ ուղղված հակառակորդ կողմի հոգեբանական կայունության խարխլմանը, ավանդական կենսաձևի, ավանդույթների քայքայմանը, արժեքային կողմնորոշումների փոփոխմանը, ինչպես նաև ազգային գիտակցության խարխլմանը [13]: Ինչպես նշում է ս.գ.դ., ք.գ.դ. Ա. Դուգինը. «Ցանցի ներդրումը աշխարհի երկրներին, ժողովուրդներին, բանակներին ու կառավարություններին զրկում է ամեն տեսակ ինքնուրույնությունից, ինքնիշխանությունից, վերածում նրանց կոշտ կառավարվող, ծրագրավորված մեխանիզմների, ինչը նշանակում է համամոլորակային ուղղակի վերահսկողություն, նոր տիպի համաշխարհային տիրապետություն, երբ կառավարման են ենթակա ոչ թե առանձին սուբյեկտները, այլ նրանց բովանդակությունը, գործողությունները, մտադրությունները և այլն: Ըստ էության՝ և՛ թշնամիները, և՛ չեզոք դիրք գրաված ուժերն ակնհայտորեն ենթարկվում են պարտադրված սցենարներին, գործում ոչ իրենց կամքով: Դա ճակատամարտի շահում է՝ մինչ այն սկսելը: Ցանցային պատերազմի նպատակն է համաշխարհային մասշտաբով պատմական գործընթացների բոլոր մասնակիցների վրա բացարձակ վերահսկողության սահմանումը» [14]:

Առաջին անգամ *տեղեկատվական պատերազմ* եզրը ներմուծվել է 1985 թ. տեղեկատվական պատերազմի տեսաբան չինացի Շեն Վեյգուանգի կողմից (Shen Weiguang): Այս խնդրի վերաբերյալ առաջին պաշտոնական փաստաթղթերից է ԱՄՆ պաշտպանության նախարարության «Տեղեկատվական պատերազմ»

հրահանգը (1992թ.): 1993թ. Շտաբների ղեկավարների կոմիտեի հրահանգում արդեն ներկայացված էին տեղեկատվական պատերազմի վարման սկզբունքները: ԱՄՆ ռազմական շրջանակներում տեղեկատվական պատերազմների տակ հասկացվում են այնպիսի գործողություններ, որոնք ձեռնարկվում են ազգային ռազմական ռազմավարությանն օժանդակելու նպատակով՝ հակառակորդի տեղեկատվության և տեղեկատվական համակարգերի վրա ներազդման միջոցով տեղեկատվական գերիշխանության հասնելու համար՝ սեփական տեղեկատվության և տեղեկատվական համակարգերի անվտանգության և պաշտպանության համաժամանակյա ապահովմամբ [15]: Տեղեկատվական պատերազմ եզրույթը սկսվեց ակտիվ շրջանառվել 1991թ. «Փոթորիկ անապատում» գործողությունից հետո, երբ նոր տեղեկատվական տեխնոլոգիաներն առաջին անգամ կիրառվեցին որպես պատերազմի վարման միջոց:

Ինչպես նշում է տեղեկատվական անվտանգության հայտնի փորձագետ Ի. Պանարինը՝ մարդկության պատմության ամբողջ ընթացքում տեղեկատվական պատերազմը եղել է համաշխարհային քաղաքականության հիմնական միջոցը: Աշխարհում՝ հոգևոր, քաղաքական, ֆինանսական և տնտեսական իշխանությանը հասնելու գերակայող միջոցը [16]:

Իսկ ըստ Մ.Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի Տեղեկատվական անվտանգության ինստիտուտի վերլուծաբան, տեխնիկական գիտությունների դոկտոր Ս. Ռաստորգուևի՝ տեղեկատվական պատերազմը պետությունների պայքարն է՝ տեղեկատվական տեխնոլոգիայի և տեխնիկական միջոցների կիրառմամբ: Դրանք թույլ են տալիս առաջ բերել անհրաժեշտ տեսարաններ, գաղափարներ, տարածել և ներդնել դրանք ականջներում, աչքերում, սրտերում: Տեղեկատվական պատերազմները գործում են մեր բոլորի դեմ, ընդհանրապես մարդկության դեմ, անկախ այն բանից՝ բարիկադի որ կողմում է գտնվում մեզանից որևէ մեկը: Տեղեկատվական պատերազմները խարխուլում

են այն հիմքը, որի վրա կանգնած է մարդկային քաղաքակրթությունը [17]:

Այսպիսով, 21-րդ դարասկզբում ակնհայտորեն երևաց գլոբալ ցանցայնացման և վիրտուալացման գործընթացների բացասական կողմերը: Առավել մեծ վտանգ է ներկայացնում կիբեռհանցավորության և կիբեռսպառնալիքների աճը, ինչը սպառնում է պետությունների, հասարակությունների և անհատների կայուն կենսագործունեությանն ու բնականոն զարգացմանը: Ըստ ամերիկյան RAND կորպորացիայի հրապարակած «Կիբեռանվտանգության սպառնալիքների բնութագիրը. արագ համեմատական վերլուծություն» հետազոտության. «Պետությանը սպառնացող կիբեռհանցագործություններ կարելի է համարել դերակատարներին, որոնք ցուցաբերում են ռազմավարական վարք ու կարողություն: Նրանք նախանշում են կիբեռտարածքներ՝ վնասելով մարդկանց, տեղեկատվությունը, որոշակի գործողությունների, շրջակա միջավայրին և/կամ գույքին: Պարտադիր չէ, որ կիբեռսպառնալիքները լինեն հեղափոխական բնույթի» [18]:

Նշյալ երևույթները, լինելով վերջին տասնամյակների ծնունդ, գտնվում են վերլուծաբանական և փորձագիտական հանրության ուսումնասիրությունների կենտրոնում և ԱԱ ապահովման գործում ներգրավված մարմինների մտահոգության առարկան են: Այդ է փաստում նաև ամբողջ աշխարհով ուժգնացող պայքարը համանման երևույթների դեմ: Այսպես,

▪ ըստ լրատվամիջոցների կողմից տարածված հաղորդագրության՝ 2013թ. ԱՄՆ ռազմական գերատեսչությունը հաստատել է կիբեռանվտանգության դեմ պայքարին ուղղված ծախսերի ավելացման որոշում: Այս ոլորտի համար ծախսերն առաջիկա տարիներին կաճեն շուրջ 5 անգամ: Այսկերպ՝ գերատեսչությունը հույս ունի ապահովել ԱՄՆ կառավարության համակարգչային համակարգի անվտանգությունը, արտասահմանյան հարձակումներից: Բացի այդ, էապես ավելանալու է պաշտպանական գերատեսչության համապատասխան բաժնի աշխատակիցների թիվը՝ ներկայիս 900 աշխատակցից հասցնելով 4.000-ի [19]:

▪ 2013թ. հունվարի 11-ին Հաագայում իր աշխատանքն սկսեց կիբեռահանցավորության դեմ պայքարի Եվրոպական կենտրոնը, որի նպատակն է այդ գործում միասնականացնել ԵՄ երկրների ջանքերը: Վերջինս Եվրոպոլի կառուցվածքային ստորաբաժանում է: ԵՄ տվյալներով ամեն օր ցանցում կատարվող հանցագործությունների զոհեր են դառնում շուրջ մեկ միլիոն մարդ, որի համախառն վնասը հասնում է տարեկան 300 մլրդ եվրոյի: Նշենք նաև, որ կիբեռահանցագործությունների առյուծի բաժինը մնում է անպատիժ: Ինչպես նշել է ԵՄ ներքին հարցերով հանձնակատար Սեսիլիա Մալմստրոյմը. «Կիբեռահանցագործները ներթափանցում են մեր համակարգիչները, կոտրում են բանկային հաշիվները և մանիպուլյացնում ֆինանսական գործառնություններով... Խարդախների համար բռնվելու ռիսկը փոքր է, իսկ եկամուտը՝ մեծ» [20]:

▪ 2014թ. հունվարի 21-ին Ֆրանսիայի պաշտպանության նախարար Ժան-Իվ Լե Դրիան (Jean-Yves Le Drian) հայտարարել է, որ որպես ռազմավարական առաջնահերթություն գործարկվելու է կիբեռհարձակումներին հակազդման ծրագիր, որի արժեքն է 1,5 մլրդ եվրո: Նրա խոսքով, պաշտպանության նախարարության դեմ իրականացվող կիբեռհարձակումների հաճախականությունը վերջին երկու տարիներին ավելացել է 4 անգամ: Մասնավորապես, 2011թ. արձանագրվել է համակարգչային էական պատահարների 195 դեպք, իսկ 2013թ.՝ 780: Արդյունքում փորձում են կաթվածահար անել կառավարական սերվերների աշխատանքը կամ ոչնչացնել տեղեկատվական և հրամանատարական համակարգերը: Պաշտպանության նախարարության կիբեռստորաբաժանումների անձնակազմն առաջիկա տարիներին գրեթե կկրկնապատկվի (մինչև 450 աշխատակից), իսկ հետազոտությունների ծավալը այդ ոլորտում կավելանա երեք անգամ [21]:

▪ Ճապոնիայի կառավարությունը մտադիր է զինված ուժերի կազմում ստեղծել կիբեռանվտանգության հատուկ զորքեր և էականորեն ընդլայնել համակարգչային համակարգերի անվտանգությունը: ԶՈՒ նոր ստորաբաժանումները պետք է ներառեն հա-

մակարգչային ցանցերի ծրագրավորողներին և փորձագետներին, որոնք, առաջին հերթին, պետք է պահպանեն պետական և պաշտպանական համակարգերը ցանցահենների գործողություններից: 2015թ. նախատեսվում է ձևավորել նաև կառավարությանն առընթեր Կիբեռնետիկ անվտանգության կենտրոն: Վերջինս պետք է համակարգի այս ոլորտի ամբողջ քաղաքականությունը՝ ներառյալ մասնագետների պատրաստումը: Ենթադրվում է, որ կառավարության օգնությամբ՝ ներթափանցումից և կոտրումից համակարգիչների և կապի ցանցերի պաշտպանության ծառայությունների շուկան 2020թ. կկրկնապատկվի (ներկայում այն գնահատվում է 6-7 մլրդ ԱՄՆ դոլար): Ճապոնիան արդեն դարձել է անհայտ ցանցահենների զոհ, որոնք որոշ ժամանակով իրենց վերահսկողության տակ էին վերցրել ծանր մեքենաշինության «Mitsubishi Heavy Industries» կորպորացիայի տեղեկատվական ցանցերը, որը, մասնավորապես, զբաղվում է ռազմական և տիեզերական տեխնիկայի արտադրությամբ: Բացի այդ, արձանագրվել են նաև խորհրդարանի պատգամավորների համակարգիչների կոտրելու դեպքեր [22]:

- Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը (ՀԱՊԿ), որի անդամ է նաև ՀՀ-ն, նույնպես մտադիր է ստեղծել կիբեռանվտանգությամբ զբաղվող կենտրոն, որը կապահովի ՀԱՊԿ անդամ երկրների տեղեկատվական անվտանգությունը: Ինչպես նշել է ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Ն. Բորդյուժան՝ կազմակերպությունը վերջին ժամանակներում անդամ երկրների տարածքում ի հայտ է բերել մեծ քանակությամբ ապակառուցողական կայքեր [23]:

Այս ոլորտում իրավիճակը մտահոգիչ է նաև ՀՀ-ում: Ինչպես նշում է «Նորավանք» ԳԿՀ փորձագետ Ս. Մարտիրոսյանը. «Ադրբեջանական և թուրքական հաքերներն ամսական կոտրում են մի քանի տասնյակ, հաճախ նույնիսկ մի քանի հարյուր հայկական կայք: Հիմնականում այդ կայքերի վրա հարձակումները չեն ունենում լուրջ հետևանքներ, քանի որ դրանք հասարակական կամ պետական ազդեցիկ տեղեկատվության կրող չեն հանդիսա-

նում: Սակայն վերջին տարվա ընթացքում հարձակումների ենթարկվեցին մի շարք կայքեր, որոնք պատկանում են անհատական տվյալներ կրող կազմակերպությունների: Հարձակման էր ենթարկվել, օրինակ, հեռախոսային և ինտերնետ կապ տրամադրող օպերատորի կայքը» [24]:

Գաղտնիք չէ, որ ժամանակակից տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների բնորոշիչ գծերից են անդրսահմանայնությունը, ավանդական միջպետական սահմանների բացակայությունը, աննախադեպ արագությունը, ինչպես նաև երկակի օգտագործման հնարավորությունը՝ ինչպես՝ խաղաղ, այնպես էլ՝ ռազմական նպատակներով, ինչպես՝ ի բարօրություն, այնպես էլ՝ ի չարս: Ինչպես նշում է տեղեկատվական անվտանգության ոլորտում միջազգային համագործակցության հարցերով ՌԴ Նախագահի հատուկ ներկայացուցիչ Ա. Կրուտսկիխը՝ հենց այդ պատճառով համապատասխան տեխնոլոգիաների ներդրումը միաժամանակ հանգեցնում է ինչպես պետության հզորության ավելացմանը, այնպես էլ՝ տեղեկատվական-էլեկտրոնային ներգործությունից նույն պետությունների խոցելիության բարձրացմանը [25]:

Միաժամանակ, ակնհայտ է դառնում, որ ձևավորվող գլոբալ տեղեկատվական-հաղորդակցային միջավայրը թելադրում է ԱԱ ապահովման նկատմամբ ավանդական մոտեցումների վերանայման անհրաժեշտություն: Չնայած դրան՝ պետք է համաձայնել ամերիկյան աշխարհաքաղաքական մտքի ամենաազդեցիկ ներկայացուցիչներից Ջ. Բժեգինսկու տեսակետի հետ, ըստ որի. «Այսօր բացարձակ ազգային անվտանգության հասկացությունը ոչ ավելին է, քան առասպել: Գլոբալացման դարաշրջանում լիակատար անվտանգությունը և տոտալ պաշտպանությունը անիրականանալի է» [26]:

Ակնհայտ է, որ տեղեկատվական հեղափոխության ուղիղ քաղաքական հետևանքը՝ միջազգային հարաբերությունների կերպափոխման գործընթացի արագացումն է: Ինչպես պնդում են որոշ հետազոտողները՝ համացանցի անդրսահմանային տարածական կառուցվածքը (և նրա հետ կապված խնդիրները) հակա-

սության մեջ են մտնում սահմանների հետ, որոնցում սովոր են գործել ազգային պետությունները: Նոր տեղեկատվական ծառայությունները և գործունեության տեսակներն առավել նվազ չափով են ենթակա դառնում կառավարություններին:

Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների աճի հետ կապված՝ սկզբունքորեն այլ է դառնում ազգային և միջազգային անվտանգության ապահովման խնդիրը: Տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների ահռելի ներուժի՝ ռազմաքաղաքական գերակայության ապահովման, ուժային դիմակայության, շանտաժի նպատակներով կիրառման սպառնալիք է ի հայտ գալիս: Նորագույն տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների հաշվին ռազմական ներուժի ավելացումը հանգեցնում է ուժերի գլոբալ և տարածաշրջանային հարաբերակցության փոփոխմանը, ավանդական և ի հայտ եկող իշխանության կենտրոնների միջև լարվածությանը: Տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաները հարցականի տակ են դնում դասական աշխարհաքաղաքականության դրույթները, քանի որ նման տեխնոլոգիաները հանգեցնում են *հեռավորությունների մահվանը*: Վերափոխվում են նաև տարածության մասին պատկերացումները և նրանց վրա հիմնված տեղեկատվական ոլորտում ազգային աշխարհաքաղաքական շահերի ապահովման հայեցակարգերը [27]:

Տեղեկատվական տեխնոլոգիաները սկզբունքային փոփոխություններ են մտցնում տնտեսական կյանքում: Ամերիկյան գիտնական, տնտեսագիտության ոլորտում 1991թ. Նոբելյան մրցանակի արժանացած Ռոնալդ Բոուզը (Ronald Harry Coase) ենթադրություն է արել, որ կազմակերպության չափը որոշվում է տեղեկատվության հավաքման արժեքով: «Խոշոր կազմակերպական բիզնես-կառույցները ստեղծվում էին, որպեսզի նվազեցնեն այդ արժեքը»: Հետևաբար, «ակնհայտ է գլոբալացման գործընթացների կառավարման նոր գործիքների անհրաժեշտությունը, որոնք հենված կլինեն ժամանակակից տեղեկատվական ներուժի վրա» [28]:

Հատկանշական է, որ տեղեկատվական անվտանգության ապահովման խնդիրը առկա է եղել նաև նախկինում՝ դեռևս

ԽՍՀՄ տարիներին, սակայն առավել արդիական է դարձել հետխորհրդային շրջանում՝ պայմանավորված Արևմուտքից նախկին ԽՍՀՄ հանրապետությունների, կամ ինչպես նրանց հաճախ անվանում են՝ հետխորհրդային տարածքի երկրների՝ առավել ակնհայտ դարձող տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների ոլորտում ետ մնալու և պատասխանատու մարմինների կողմից, այսպես կոչված՝ արդյունաբերական հասարակության ժամանակաշրջանին բնորոշ գործիքակազմի կիրառման փաստով: Այս համատեքստում հետաքրքիր է հնչում լայն շրջանառության մեջ մտած *հետխորհրդային տարածք* հասկացության վերաբերյալ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գործադիր տնօրեն Գ. Հարությունյանի կողմից առաջ քաշված հիմնավոր ենթադրությունը. «Զի կարելի լրիվ բացառել այն վարկածը, որ հետխորհրդային տարածք եզրի գործադրումն ու տարածումը մեդիադաշտում յուրօրինակ, այսպես կոչված մեն է, որը սոցիալական հոգեբանության մեջ մեկնաբանվում է որպես իմաստային ուղղորդիչ դրույթ, որը մի գիտակցությունից փոխանցվում է մյուսին և ձևավորում է որոշակի, սույն պարագայում՝ բացասական ընկալում» [29]: Անշուշտ, նման եզրերի (մեմերի) լրատվական դաշտ սպրդելը և դրանց բացասական իմաստ հաղորդելը այլևս նորություն չէ, ինչը նույնպես պետք է դիտարկել հասարակական գիտակցության մեջ որոշակի կարծրատիպերի ներդրման և համապատասխան քարոզչական արդյունքի ապահովման համատեքստում: Այսպես, այսօր արդեն ցանկացած երևույթին բացասական իմաստային ծանրաբեռնվածություն հաղորդելու համար բավական է նրան ավելացնել «սովետական/խորհրդային» բառը, ինչը միանգամից կասոցացվի հետադիմության, հնության, անփութության, անկազմակերպվածության և տարաբնույթ այլ բացասական երևույթների հետ՝ անտեսելով այդ ժամանակներում գոյություն ունեցող դրական երևույթները:

4.3. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ

Փաստ է, որ գլոբալ տեղեկատվական հասարակության կայացումը նպաստում է պետական սահմաններից բավականին հեռու առանձին երկրների ազգային շահերի տարածմանը, ինչը միջազգային քաղաքականության այլ սուբյեկտների համար շղթայաբար առաջ է բերում բազմաբնույթ մարտահրավերներ և սպառնալիքներ: Այսօր, ՋԼՄ կողմից ահաբեկչական գործողությունների, պատերազմների, բնական, տեխնածին, հումանիտար և բազմաբնույթ այլ աղետների վերաբերյալ տեղեկատվության լայնածավալ լուսաբանումը, միաժամանակ՝ հեռուստատեսությամբ, համացանցով և այլ միջոցներով հրամցվող ուղղորդված և, հաճախ, քարոզչական բնույթ ունեցող տեղեկատվությունը հասարակության մեջ մեծացնում է սոցիալական անորոշության, անպաշտպանվածության զգացումը, նպաստում քայքայման, վախի և խուճապի մթնոլորտի ուժգնացմանը, մանիպուլյացնում մարդկանց գիտակցությունը, պարտադրում որոշակի մտքեր, գաղափարներ, իդեալներ, աշխարհայացք, կարծրատիպեր և սոցիալական վարք: Արդեն կայացած փաստ է այն, որ տեղեկատվական դաշտում հետզհետե մեծանում է համացանցի տեսակարար կշիռը՝ իր հետ մի շարք առավելությունների հետ մեկտեղ ծնելով նոր խստ՝ համացանցային կախվածություն: Այսպես, գիտնականների հետազոտությունների համաձայն՝ համացանցը ոչ թե պարզապես կախվածություն, այլ նաև խումհար է առաջացնում: Համացանցից կախում ունեցող մարդկանց՝ *օֆլայն* կյանքն ամբողջովին համադրելի է *էքսփրազի* հետխումհարային սինդրոմին: Չնայած նրան, որ համացանցի ներգործության մեխանիզմը հստակ չի բացահայտվում, սակայն հայտնի է դարձել, որ ցանցում երկար ժամանակ անցկացնելը հոգեբանական խնդիրներ է առաջացնում [30]: Եթե այս համատեքստում դիտարկենք այն, որ տարեց տարի թոփչբաձև մեծանում է համացանցի և դրա շրջանակներում սոցցանցերի օգ-

տատերերի քանակը, ապա պատկերը առավել ամբողջական է դառնում: Այսպես, Հայաստանում «Facebook» սոցիալական կայքից օգտվողների թիվը գերազանցում է կես միլիոն ցուցանիշը, իսկ «Odnoklassniki.ru», «Mail.ru» և «Мой Мир» ցանցերի միասնական լսարանը հասնում է 1,5 միլիոնի [31]: Այստեղ չենք կարող շրջանցել նաև այն փաստը, որ կյանքի և հարաբերությունների նման արագ վիրտուալացումը, օգտատերերի՝ այդ միլիոնավոր բանակի կողմից կեղծ իրականության կերտումը նույնպես հանգեցնում է բացասական հետևանքների, մասնավորապես դեպրեսիաների և հոգեկան խանգառումների տեսքով. «Facebook-դեպրեսիա» տերմինն արդեն գրեթե պաշտոնական է դարձել օտարերկրյա հոգեբույժների համար: 2011թ. ԱՄՆ-ում հրապարակվել են մի շարք գիտահանրամատչելի հոդվածներ, որոնցում ասվում է, որ ցածր ինքնագնահատականով մարդիկ կարող են ընկնել երկարատև դեպրեսիայի մեջ՝ համեմատելով իրենց կյանքն այլոց կյանքի հետ: Սոցկայքի օգտատերերը կարող են նաև ժամեր անցկացնել համակարգչի առաջ՝ փորձելով ապացուցել իրենց ընթերցողներին (իսկ ամենակարևորը՝ իրենք իրենց), որ իրենց կյանքը պակաս հազեցած չէ [32]: Ապացուցված փաստ է նաև, որ սոցցանցերի օգտագործումը կարող է ազդել մարդու հոգեկան վիճակի վրա՝ առաջացնելով անհանգստության և ոչ ադեկվատ պահվածք [33]:

Ըստ 2010թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հրապարակված «Տեղեկատվություն բոլորի համար» համաշխարհային ամենամյա զեկույցի՝ բազմաթիվ սոցիոլոգներ գտնում են, որ համացանցի և բջջային հեռախոսների տարածումը հետագայում ևս քայքայելու է հանրության հիմքերը, և՛ ընտանիքի, բարեկամների, և՛ ընկերների հարաբերությունները՝ մարդկանց միջև փոխկապվածությունը դարձնելով մակերեսային: Համացանցի նման կործանարար ուղղվածության պատճառով հետազոտություններ էին իրականացվում (առավելապես ԱՄՆ-ում), որոնք ցույց տվեցին, որ *համաշխարհային սարդոստայնը* նախկինի պես մեկուսացնում է իր օգտատերերին և քայքայում սոցիալական փոխկապվածությունները,

քանի որ համացանցում անցկացնելով ժամանակը՝ մարդիկ առավել քիչ են շփում ունենում բարեկամների, հարազատների, ընկերների և հանրության հետ: Հարմարավետությունը, որն ապահովում է էլեկտրոնային փոստը՝ որպես մարդկանց միջև հարաբերությունների կառուցման և պահպանման միջոց, ոչինչ չարժե, եթե այն չի կարողանում ապահովել այնպիսի մթնոլորտ, որն առաջանում է, երբ դուք միասին գնում եք մի բաժակ սուրճ կամ մի գավաթ գարեջուր ըմպելու: Դա նշանակում է, որ համացանցը կարող է լինել վերջին մեկուսացնող տեխնոլոգիան, որը մահացու հարված կհասցնի հասարակությանը, որն արդեն իսկ թուլացել է ավտոմեքենաների և հեռուստատեսության ի հայտ գալու հետևանքով: Փորձագետները (հիմնականում՝ հոգեբանները) վստահեցնում են, որ համացանցի կիրառումը կարող է աստիճանաբար հանգեցնել անպատասխանատու և հատվածականացված հասարակության ի հայտ գալուն [34]:

Ինչպես նշում է ՀՀ ԱԱԾ գիտաուսումնական կենտրոնի պետ Ա. Քինակցյանը. «Ժամանակակից տեղեկատվական (հետինդուստրիալ) հասարակության պայմաններում հոգևոր և մշակութային կյանքի համար ավելի վտանգավոր սպառնալիքի է վերածվել քայքայիչ, կազմալուծող տեղեկատվական ներգործությունը: Այսպիսով, թեև նախկինում հոգևոր և մշակութային անվտանգությունն օրգանապես փոխկապակցված է եղել, սակայն դրանք հանդես են եկել զուտ որպես թշնամական ոտնձգությունների թիրախ: Այնինչ գլոբալացման արդի պայմաններում հոգևոր և մշակութային արժեքները կարող են տուժել ոչ միայն նպատակային գործողություններից, այլև տարաբնույթ հախուռն, հակադաստիարակչական, հաճախ մարդկային ստոր բնազդներն անթաքույց գովերգող, հասարակությանը հիմնական այժմեական հիմնախնդիրներից շեղող, սոցիալական հակասությունները խորացնող տեղեկատվական հոսքերից: Այդ իսկ պատճառով ներկայումս հոգևոր-մշակութային անվտանգությունն առավել հաճախ դիտարկվում է անհատի, հասարակության և պետության ընդհանուր տեղեկատվական անվտանգության համատեքստում» [35]:

Նշյալի համատեքստում բավականին բնութագրական է նաև հոգեբան Կ. Նալչաջյանի դիտարկումը. «Վերջին ժամանակներս տարբեր տեսակի ցնցումների, փոփոխությունների, ճգնաժամերի հետևանքով արժեքային կողմնորոշումների ուժեղ անկում է տեղի ունեցել: Բարձր արժեքները՝ հայրենասիրությունը, կրթության նկատմամբ վերաբերմունքը, հետ գնացին, ավելին՝ շատացան, հոգեբանների լեզվով ասած, շուկայականի տիպի մարդիկ» [36]:

Վերլուծելով աշխարհում գլոբալ ցանցային հասարակության ձևավորման գործընթացները և դրանցից ի հայտ եկող մարտահրավերները՝ պետք է փաստել, որ դրանց պատասխանելու արդյունավետ ճանապարհը համալիր վերափոխումն է, մեր կառավարման համակարգի, այդ թվում՝ անվտանգության մարմինների, ակադեմիական գիտության համապատասխանեցումը արդի պահանջներին: Անշուշտ, պետք է արձանագրել նաև, որ անկախության վերականգնումից ի վեր ՀՀ-ում այդ ուղղությամբ բավականին աշխատանքներ իրականացվել են և առավել մեծ թափ են հավաքել վերջին տասնամյակում՝ հատուկ ծառայությունների կառուցվածքային և մասնագիտական համապատասխանեցման, համապատասխան կադրերի պատրաստման և վերապատրաստման, մասնագիտացված վերլուծական կենտրոնների ստեղծման ձևով և այլն: Որպես ոլորտում իրականացված վերջին դրական քայլերից մեկը՝ կարելի է նշել Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի կառուցվածքում Ազգային անվտանգության սպառնալիքների վերլուծության և գնահատման կենտրոնի ստեղծումը [37], որն, անշուշտ, ողջունելի նախաձեռնություն է: Սակայն, փաստ է նաև, որ ոլորտում կան դեռ բազում չլուծված և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրներ: Այս համատեքստում բավական տեղին է հնչում «Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն Գ. Հարությունյանի՝ Ցանցային հետազոտությունների ինստիտուտ (ՑՀԻ, Research Net Institute) ստեղծելու առաջարկը, որի նպատակը կլիներ Հայաստանի և Սփյուռքի փորձագիտական-վերլուծաբանական հանրության ներուժի համադրումով Հայաստանի գիտահետազոտական համակարգի արդիականացումը [38]:

Այսպիսով, 21-րդ դարն իրավամբ կարելի է բնորոշել որպես հակոտնյա արժեքների, աշխարհընկալումների և կենսաձևերի ակտիվացած դիմակայության ժամանակաշրջան: Ինչպես դիպուկ բնորոշել է անցյալ դարի հայ իմաստասիրական մտքի խոշոր ներկայացուցիչ Հայկ Ասատրյանը. «Արժեքների պայքարը տարբեր հոգեբանական տիպերի ճշմարտութեանց պայքար է...» [39]:

Ուստի, ակնհայտ է դառնում, որ քաղաքակրթությունների բախումների, արժեքների դիմակայության, քարոզչական և ցանցային պատերազմների այս փոթորկոտ ժամանակներում արդյունավետ պայքարի եղանակը մշտական վերազինումն է, արդիականացումը, ժամանակին համընթաց ճշգրիտ քայլերի իրականացումը, Հայաստանի և Սփյուռքի քաղաքական, ֆինանսական, գիտական և վերլուծական ներուժի համախմբումը և, վերջապես, անվտանգության ապահովման հետարդյունաբերական գործիքակազմին տիրապետող մասնագետների պատրաստումն է:

4.4. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻՈՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

Քարոզչական ներգործությունը տեղեկատվական-հոգեբանական ներգործության տեսակ է: Հաշվի առնելով այն, որ մեկ հարցի շրջանակներում հնարավոր չէ անդրադառնալ և նկարագրել մանիպուլյացիոն հնարքների բոլոր տարատեսակները, ուստի կփորձենք անդրադառնալ դրանցից առավել տարածվածներին, որոնք համապատասխան փորձագիտական շրջանակներում հայտնի են որպես *քարոզչության այբբենարան*:

1. *Պիտակավորում* (name calling). այս հնարքի էությունը վիրավորական մակդիրների և անվանումների ընտրության և դրանց կիրառման մեջ է: Նման պիտակները շրջապատի և հասարակության մեջ առաջ են բերում բացասական զգացումներ. պիտակավորվողը սկսում է ասոցացվել ստոր, անարդար և հասարակայնորեն անընդունելի արարքների հետ: Այս հնարքը կիրառվում է հասարակության մեջ անձին, կազմակերպությանը, գաղափարը կամ սոցիալական որևէ այլ երևույթ վարկաբեկելու համար:

2. *Պայծառ ընդհանրացում* (glittering generality). հնարքի էությունը կայանում է սոցիալական որոշակի երևույթի, գաղափարի, կազմակերպության, սոցիալական խմբի կամ կոնկրետ անհատի անվանման փոխարինումն առավել դրականորեն տրամադրող անվանումով: Հնարքի կիրառումը թույլ է տալիս մարդկանց մոտ դրական զգացմունքներ ստեղծող հասկացությունները, ինչպիսիք են՝ ազատություն, հայրենասիրություն, համագործակցություն, խաղաղություն, երջանկություն, սեր, հաջողություն, առողջություն և այլն, շահարկելու միջոցով որոշակի դրական կերպար ձևավորել:

3. *Փոխանցում* կամ *Տրանսֆեր* (transfer). հնարքի էությունը սա է. մեծամասնության համար աննկատ կերպով, գնահատելի և հեղինակություն ունեցող երևույթները վարպետորեն փոխարինվում են հաղորդակցության աղբյուրի կողմից հրամցվողներով: Գոյություն ունի նաև բացասական տրանսֆեր՝ սոցիալապես դա-

տապարտելի երևույթների, բացասական ընկալվող հասկացությունների, իրադարձությունների, գործողությունների, փաստերի և մարդկանց հետ ասոցացման միջոցով: Կիրառվում է կոնկրետ անձանց, գաղափարների, իրավիճակների, սոցիալական խմբերի և կազմակերպությունների վարկաբեկման համար:

4. *Հղումը հեղինակությունների, Վկայություն կամ Վկայում (testimonial)*. կիրառվում է հասարակության մեջ բարձր հեղինակություն ունեցող կամ հակառակը՝ բացասականորեն ընկալվող անհատների խոսքերին հղում անելու միջոցով: Որպես կանոն՝ այդ խոսքերը ներառում են դատապարտող կամ հավանություն տվող գնահատականներ, դատողություններ՝ որոշակի մարդկանց, գաղափարների, իրադարձությունների, ծրագրերի, կազմակերպությունների վերաբերյալ: Այսպիսով, մարդու մոտ՝ որպես մանիպուլյացիոն ներգործության օբյեկտի, ձևավորվում է համապատասխան դրական կամ բացասական կարծիք, զգացումներ, մոտեցումներ և վերաբերմունք:

5. *Ժողովրդականության խաղ (plain folks)*: Այս հնարքով փորձ է կատարվում լսարանի մոտ ձևավորել վստահելի հարաբերություններ: Գաղափարը հետևյալն է. տվյալ անհատի կամ կազմակերպության գաղափարները, առաջարկությունները լավն են, քանի որ պատկանում են հասարակ ժողովրդին:

6. *Խաղաթղթերի վերախառնում կամ Խաղաթղթերի նենգադարսում (card sticking)*: Հնարքի գաղափարը նպատակադրված կերպով բացառապես դրական կամ բացառապես բացասական փաստերի և եզրահանգումների ներկայացման մեջ է՝ լռության մատնելով հակառակ փաստերը: Հիմնական նպատակը՝ միակողմանի ընտրության և փաստերի, վկայությունների եզրահանգումների ներկայացման միջոցով գրավիչ դարձնել որևիցե ծրագիր, գաղափար, տեսակետ, կամ հակառակը՝ ցույց տալ վերջիններիս անընդունելի լինելը:

7. *Ընդհանուր վագոն, Ընդհանուր հարթակ կամ Երաժշտախմբով ֆուրգոն (band wagon)*: Այս հնարքի կիրառման էությունն այնպիսի դատողությունների և ասույթների ընտրության մեջ է,

որոնք բոլորի մոտ միանման վարք են ձևավորում: Օրինակ՝ հայտարարությունը կարող է սկսվել հետևյալ խոսքերով. «Բոլոր նորմալ մարդիկ հասկանում են, որ...» կամ «Ոչ մի առողջ դատողությամբ մարդ չի առարկի, որ...» և այլն: «Ընդհանուր հարթակի» միջոցով մարդու մոտ վստահություն է ներշնչվում, որ խումբը կամ հանրությունը, որի հետ ինքն իրեն նույնականացնում է, կամ որի կարծիքը նրա համար էական է, ընդունում է կոնկրետ արժեքները, գաղափարները, ծրագրերը, կիսում է առաջարկվող տեսակետը: «Բոլորին» հղումը հաշվի է առնում, որ մարդիկ, որպես կանոն, հավատում են մեծամասնության կարծիքի ճշմարտացիությանը և այդ պատճառով, բնականաբար, ցանկանում են լինել վերջինիս հետ: Այս պարագայում տեղի է ունենում հայտարարության մեջ զետեղված գնահատականների և տեսակետների անքննադատ ընդունում:

Այլ հնարքներ.

1. *Ծաղրանք*: Այդ տեխնիկայի օգտագործման ժամանակ ծաղրի կարող են ենթարկվել ինչպես որոշակի մարդիկ, այնպես էլ հայացքներ, գաղափարներ, ծրագրեր, կազմակերպություններ և դրանց գործունեությունը, մարդկանց տարատեսակ միավորումներ, որոնց դեմ պայքար է ընթանում: Ծաղրի օբյեկտի ընտրությունը իրականացվում է՝ կախված նպատակներից և որոշակի տեղեկատվական-հաղորդակցական իրավիճակից: Տվյալ հնարքի ազդեցությունը հիմնված է այն բանի վրա, որ առանձին արտահայտություններ և մարդու վարքի տարրերը ծաղրելու ժամանակ նրան վերագրվում է հումորային և անլուրջ վերաբերմունք, ինչն ինքնաբերաբար կարող է տարածվել նաև նրա այլ արտահայտությունների ու հայացքների վրա: Տվյալ հնարքի հմուտ, ոչ մեկանգամյա օգտագործման դեպքում հնարավոր է որոշակի անհատի իմիջի ձևավորումը՝ որպես անլուրջ և ոչ կոմպետենտ մարդ, որի առաջարկություններն ու արտահայտությունները արժանի չեն ուշադրության: Այսպիսով, տվյալ մոտեցումը հանդես է գալիս որպես ընկալման ծրագրավորված կարծրատիպերի ձևավորման մեխանիզմ:

Պետք է ընդգծել ծաղրանքի մեթոդի բարձր գործունակությունը, որը կարող է հանդես գալ և՛ որպես տեխնիկա, և՛ որպես հաճախ մանիպուլացնող տեխնոլոգիա: Դրա բարձր արդյունավետությունը, մասնավորապես, կապված է քիչ գիտակցական, անգիտակցական և ենթագիտակցական հոգեբանական երևույթների ոլորտի վրա ազդեցության հետ, ազդեցության անուղղակիության հետ, որի վրա հենված է անհատի հոգեբանական պաշտպանությունը: Այնտեղ, որտեղ ուղիղ քննադատությունը և բացասական ազդեցությունը արգելափակվում են հոգեբանական պատնեշներով, հումորային տեսքով ազդեցության անհատի պաշտպանական ռեակցիաները կտրուկ նվազում են:

2. *Ժխտողական խմբերի դասակարգման մեթոդ:* Այս մեթոդի օգտագործման տեխնիկան, անկախ գաղափարների և հայացքների բնույթից, միատեսակ է: Յուրաքանչյուր դեպքում հաստատվում է, որ հայացքների տվյալ ամբողջությունը հանդիսանում է միակ ճիշտը: Բոլոր նրանք, ովքեր կիսում են այդ հայացքները, որոշակի արժեքային որակներով են օժտված և ավելի լավն են հայացքները չկիսողներից (հաճախ հակառակ կամ քարոզչությունից սկզբունքորեն տարբեր): Օրինակ՝ հավատացյալ մարդիկ առավել ազնիվ են, բարեսիրտ և այլն: Այսպիսով դրական վերաբերմունք է ձևավորվում մարդկանց որոշակի խմբի նկատմամբ, որոնք իբրև տիրապետում են արժեքավոր որակների և բացասական վերաբերմունք հակառակորդ խմբի, օրինակ՝ ինչ-որ այլն կրոնական դավանանքին պատկանող խմբի նկատմամբ և այլն:

3. *Նշանաբանների (լոգունգների կրկնում) կամ Կաղապարային (շաբլոնային) արտահայտությունների կրկնում:* Այդ տեխնիկայի կիրառման արդյունավետության պայմանն ամենից առաջ համապատասխան լոգունգն է, այսինքն, հարաբերականորեն կարճ արտահայտությունը՝ ձևակերպված այնպես, որ ուշադրություն գրավի և ազդի ընթերցողի կամ ունկնդրի երևակայության ու զգացմունքների վրա: Վերջինիս կառուցման ժամանակ կիրառվում են հոգեբանական-լեզվաբանական ընթացակարգեր, և մասնավորապես, կիրառվող բառերում խորհրդանշական հնչյուններ

րով ծանրաբեռնվածություն: Լոզունգը պետք է հարմարեցվի մարդկանց խմբի հոգեկանի առանձնահատկություններին, որոնց վրա պատրաստվում են ազդել: Լոզունգների կրկնման հնարքի օգտագործումը ենթադրում է, որ ունկդիրը կամ ընթերցողը չկենտրոնանա լոզունգում օգտագործվող առանձին բառերի նշանակության վրա, ոչ էլ ամբողջ սահմանման ճշգրտության վրա:

4. *Ջգացմունքային հարմարեցում:* Այս տեխնիկան կարելի է սահմանել որպես տրամադրության ստեղծման միջոց որոշակի տեղեկատվության միաժամանակ փոխանցմամբ: Տրամադրությունը մարդկանց խմբի կողմից պայմանավորված է լինում տարբեր միջոցներով (համապատասխան արտաքին միջավայրը, օրվա որոշակի ժամին, լուսավորություն, թեթև ոգևորող միջոցներ, տարատեսակ թատերական ձևեր, երաժշտություն, երգեր և այլն): Այս ֆոնին փոխանցվում է համապատասխան տեղեկատվություն, սակայն ձգտում են, որ այն երկար չլինի: Հոգեբանության մեջ գոյություն ունի հատուկ հասկացություն՝ ֆասցինացիա, որով բնորոշում են ընկալվող նյութի արդյունավետության բարձրացման պայմանները շնորհիվ՝ ուղեկցող ֆոնային ներգործությունների: Առավել հաճախ այդ տեխնիկան օգտագործվում է թատերականացված ներկայացումներում, խաղային և շուր-ծրագրերում, կրոնական (պաշտամունքային) միջոցառումներում և այլն:

5. *Տեղեկատվության առաջնորդ մեդիափորձների (միջնորդների) միջոցով:* Տվյալ տեխնիկան, ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, հիմնվում է այն բանի վրա, որ զգալի տեղեկատվության ընկալման և, մասնավորապես, որոշակի արժեքների, հայացքների, գաղափարների, գնահատումների գործընթացը, հաճախ երկաստիճան բնույթ է կրում: Սա նշանակում է, որ մարդու վրա արդյունավետ տեղեկատվական ազդեցությունը հաճախ իրականացվում է ոչ թե հաղորդակցության զանգվածային միջոցներից, այլ իր համար կարևոր, հեղինակային մարդկանց կողմից:

Այս երևույթն իր արտացոլումն է գտել հաղորդակցության երկաստիճան հոսքի մոդելում, որը մշակվել է ԱՄՆ-ում՝ 50-ական թթ. կեսերին, Փոլ Լազարսֆելդի (Paul Felix Lazarsfeld) կողմից:

Նրա կողմից առաջարկված մոդելում զանգվածային-հաղորդակցական գործընթացում առանձնացված երկաստիճանությունը հաշվի է առնվում, առաջին հերթին, փոխազդեցություն կոմունիկատորի և հեղինակավոր միկրոսոցիալ մակարդակի միջև՝ որպես կարծիքների առաջնորդների կամ միկրոսոցիալ խմբերի անդամների մեդիատորների միջև փոխազդեցություն:

Տարբեր իրավիճակներում և տարբեր սոցիալական խմբերի և շերտերի համար մեդիատորների դերում կարող են հանդես գալ ոչ ֆորմալ առաջնորդները, քաղաքական գործիչները, կրոնական դավանանքի ներկայացուցիչները, մշակութային, գիտության, արվեստի գործիչները, սպորտսմենները, ռազմական գործիչները և այլն:

ԶԼՄ-ների տեղեկատվա-հոգեբանական ազդեցության պրակտիկայում դա հանգեցրեց մի կողմից նրան, որ տեղեկատվական-քարոզչական և գովազդային հաղորդագրությունները դարձան առավել կողմնորոշված դեպի միկրոսոցիալական խմբի առջնորդները, իսկ մյուս կողմից՝ դրանցում սկսվեցին օգտագործվել մարդիկ, որոնց կարծիքները կարևոր են այլոց համար: Կինոաստղերի և այլ հայտնի մարդկանց ընտրությունը գովազդային-քարոզչական բնույթի հաղորդումների փոխանցման համար, մասնակցությունը ընտրական արշավներում պայմանավորված է ամենից առաջ նրանով, որ նրանք ունեն երկրպագուների բավականին մեծ լսարան, որոնցից շատերը հակված չեն իրենց կուռքի կոմպետենտությանը գնահատական տալու ոչ միայն քաղաքական, այլ նաև այլ հարցերում, որոնց վերջիններս գնահատական են տալիս, կամ իրականացնում են գովազդային առաջխաղացում (օրինակ՝ ապրանքների, որոնցից նրանք անձնապես չեն էլ օգտվում և այլն): Որպես օրինակ կարելի է բերել հայտնի ֆրանսիացի կինոդերասան Ալեն Դելունի ուղևորությունը 1998թ. Կրասնոյարսկ՝ Ա. Լեբեդին նահանգապետի թեկնածուի պաշտոնում աջակցության համար:

Մանիպուլյատիվ էֆեկտը ուժեղանում է զվարճալի ծրագրերի, հարցազրույցների և քաղաքական առաջնորդներին ընթա-

ցող իրադարձությունների ուղղակի և անուղղակի գնահատումների հաշվին, ինչը նպաստում է մարդու հոգեկանի ենթագիտակցական մակարդակում ցանկալի ազդեցություն գործելու հարցում:

6. *Երևակայական ընկրություն*: Տվյալ տեխնիկայի էությունն այն է, որ ունկնդիրներին և ընթերցողներին որոշակի հարցի վերաբերյալ հաղորդվում է մի քանի տեսակետ, սակայն առավել հարմար լույսի տակ ներկայացնելու համար այն, որը ցանկանում են լսարանի կողմից ընդունելի լինի: Դրա համար սովորաբար կիրառվում են ևս մի քանի լրացուցիչ հնարքներ:

Առաջին հերթին՝ քարոզչական նյութերում այսպես կոչված երկկողմանի հաղորդագրությունների ներառումը, որոնք պարունակում են որոշակի տեսակետի դեմ և կողմ փաստարկները: Երկկողմանի հաղորդագրությունները կարծես թե նախազգուշացնում են ընդդիմախոսի փաստարկները և դրանց հմուտ քննադատության դեպքում նպաստում դրանց դեմ որոշակի իմունիտետի ստեղծմանը:

Երկրորդ՝ որոշվում է բացասական և դրական տարրերի չափաբաժինը: Ինչպես արդեն վերևում նշել ենք, որպեսզի դրական գնահատականն առավել ճշմարտանման լինի, նկարագրվող տեսակետի բնութագրիչում պետք է ավելացնել մի փոքր քննադատություն, իսկ քննադատող տեսակետի արդյունավետությունը մեծանում է գովասանքի տարրերի առկայության դեպքում:

Երրորդ՝ իրականացվում է արտահայտությունների ուժեղացման կամ թուլացման փաստարկների ընտրություն: Եզրահանգումները չեն մտնում ներառվում հաղորդագրությունների տեքստի մեջ: Դա պետք է անեն նրանք, ում համար նախատեսված է տեղեկատվությունը:

Չորրորդ՝ տեղի է ունենում համեմատական նյութերի վերլուծություն իրադարձությունների, երևույթների կարևորության, միտումների ցուցադրության, մասշտաբայնության ուժեղացման համար: Բոլոր օգտագործվող քննադատական նկատառումները, փաստացի տվյալները, համեմատական նյութերը ընտրվում են

այնպես, որպեսզի անհրաժեշտ եզրակացությունը բավականին ակնհայտ լինի:

7. *Տեղեկատվական ալիքի նախաձեռնում:* Մեծ խմբերի վրա տեղեկատվական ազդեցություն գործելու արդյունավետ տեխնիկաներից է երկրորդային տեղեկատվական ալիքի նախաձեռնումը: Դրա էությունն այնպիսի քարոզչական գործողությունների անցկացումն է, որ այն ստիպում է լուսաբանել վերջինիս զանգվածային հաղորդակցության միջոցներով: Հնարավոր է տարբերակ, երբ ոչ թե գործողության բովանդակությունը, այլ դրա լուսաբանումն առաջատար զանգվածային հաղորդակցության միջոցներում այնպես է արվում, որ ստիպում է զգալի մեծ քանակությամբ զանգվածային հաղորդակցության միջոցների մեկնաբանել սկզբնական հաղորդակցությունները՝ այդպիսով բազմակի անգամ ուժեղացնելով տեղեկատվա-հոգեբանական ազդեցության հզորությունը: Տեղի է ունենում տեղեկատվական հաղորդագրության տարածում այլ ՋԼՄ-ներով, այսինքն ստեղծվում է այսպես կոչված առաջնային տեղեկատվական ալիք: Այս հնարքի կիրառման հիմնական նպատակն էլ երկրորդային տեղեկատվական ալիքի ստեղծումն է միջանձնային շփման մակարդակում համապատասխան քննարկումների, գնահատումների, մեկնաբանությունների, համապատասխան խոսակցությունների առաջացման նախաձեռնության միջոցով: Այս ամենը թույլ կտա հասնել և ուժեղացնել նպատակային լսարանի վրա տեղեկատվա-հոգեբանական ազդեցության էֆեկտը: Ներկայում մենք ականատես ենք լինում կոնկրետ անձերի կամ իրադարձությունների նկատմամբ ուշադրություն գրավելու բազմաթիվ արհեստական ձևերի, այդ թվում սկանդալների՝ որպես տեղեկատվական ալիքների ստեղծման ձևի: Արվեստի ներկայացուցիչների համար դա բարձրագույն հայտարարություններն են բեմից հեռանալու մասին: Որոշակի անձինք, որ ցանկանում են երևալ քաղաքականության մեջ, փորձում են որոշակի գործողությունների, արտահայտությունների, էկզոտիկ ծիսակատարության կամ այլ ձևով, որը քիչ թե շատ երևացող իրադարձություն կդառ-

նա, իշխանության հետ սանձազերծել ինչ-որ երևացող բախում կամ վեճ:

Նման մեթոդների ակտիվ օգտագործման օրինակ կարելի է բերել Ռուսաստանի դեմոկրատ-ազատական կուսակցության առաջնորդ Վ. Ժիրինովսկու պարբերական գործողությունները (հրապարակային ձեռնարկներ, սկանդալներ և այլն), «Յարլոկո»-ի առաջնորդ Գ. Յավլինսկուն, որը պարբերաբար հանդես է գալիս «սենսացիոն բացահայտումներով»: Նման օրինակների պակաս չկա նաև հայաստանյան քաղաքական, հասարակական դաշտում:

Չի կարելի ասել, որ վերևում նշված եղանակները և հնարքները թույլ են տալիս ամեն ինչում համոզել մարդկանց մեծ մասին: Սակայն կասկած չկա, որ դրանց միջոցով կարելի է հասնել նշանակալի արդյունքների, հատկապես, եթե դա արվում է մանրակրկիտ պլանավորված և երկարաժամկետ ծրագրով բարձր որակավորում ունեցող կոմպետենտ մասնագետների ներգրավմամբ: Մանիպուլյատիվ հնարքների կիրառումը՝ ներառյալ դրանց համալիր և զանգվածային կիրառումը, ավելի փոքր ազդեցություն ունի տեղեկացված, հիմնավոր հայացքների համակարգ ունեցող լսարանում, ինչպես նաև մանիպուլյացիոն ազդեցության տեխնիկան և նպատակաուղղված սոցիալ-հոգեբանական պաշտպանության որոշակի փորձի տիրապետող մարդկանց վրա:

8. *Բամբասանքը*¹ որպես տեղեկատվական հակամարտության տեխնոլոգիա: Տվյալ տեխնոլոգիայի օգտագործումն իմաստ ունի առանձնացնել, քանի որ այն իրականացվում է տարբեր հնարքների համալիր օգտագործման արդյունքում: Գոյություն ունեն նաև մի շարք նախադրյալներ, որոնք նպաստում են մարդկանց շրջանում բամբասանքների առաջացմանն ու տարածմանը: Բամբասանքների առաջացման ու տարածման հոգեբանական մեխանիզմները վաղուց են արժանացել հետազոտողների ուշադրությանը: Որպես կանոն՝ սուտ տեղեկատվության կիրառման էֆեկտը կարճաժամկետ բնույթ է կրում, հիմնականում այն շրջա-

նում, երբ քարոզչական ազդեցությունն իրականացվում է տեղեկատվության պակասի պայմաններում:

Բամբասանքների կենսունակությունն ու դրանց նկատմամբ ընկալունակությունը զգալի չափով որոշվում է նրանով, որ դրանք մարդու տեղեկատվական պահանջմունքի բավարարման հասանելի, այսինքն՝ մարդու վարքի սոցիալական կողմնորոշման և կազմակերպման համար անհրաժեշտ տեղեկատվական պահանջմունքի միջոց են: Զգայական բացասական անհանգստություններն ուղեկցում են մարդուն, եթե նա չունի տեղի ունեցող իրադարձությունների մասին տեղեկատվություն, այսինքն, երբ նա գտնվում է յուրատիպ տեղեկատվական անորոշության, տեղեկատվության պակասորդի իրավիճակում: Հենց այդ տեղեկատվության դեֆիցիտն էլ բամբասանքի օգնությամբ չեզոքացվում է: Այսպիսով, մարդը սուբյեկտիվորեն իրեն տեղեկացված է զգում, սակայն միևնույն ժամանակ նրա վարքը սկսում է օբյեկտիվորեն կախվածության մեջ ընկնել որոշակի բամբասանքներից: Բամբասանքների առաջացման հոգեբանական հիմք է հանդիսանում, մասնավորապես, բանավոր միմյանց միջև փոխանցման ժամանակ տեղեկատվության խեղաթյուրումը: Ընդ որում, որքան երկար է շղթան, որքան մեծ թվով մարդիկ են մասնակցում տեղեկատվության պաշտոնական աղբյուրներից արժանահավատ տվյալներով չամրապնդված տեղեկությունների փոխանցմանը, այնքան զգալի են խեղաթյուրվում այդ տեղեկությունները:

Մասնագետների կողմից անցկացված փորձարկումները ցույց են տվել, որ այս խեղաթյուրումների բնույթն անմիջականորեն կապված է մարդկանց ունեցած սոցիալական կարգավորումներով, այսպես կոչված նախադիսպոզիցիոն գործոններով. մարդը ենթագիտակցորեն պատրաստ է ընկալելու առաջին հերթին այն, ինչ ինքը սպասում է: Բացի այդ, խեղաթյուրումը նաև որոշվում է մարդկային ընկալման առանձնահատկություններով ու մեխանիզմներով և հաղորդակցման ընթացքում մարդկանց միջև հարաբերություններով [40]:

ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ

- Բնորոշեք գլոբալ տեղեկատվական միջավայրը:
- Ներկայացրեք ցանցային հասարակության էությունը և բնորոշ գծերը:
- Սովորաբար կիբեռտարածությունում դրսևորվող ինչպիսի՞ երևույթների դեմ են ուղղվում պետության ջանքերը:
- Բնորոշեք տեղեկատվական անվտանգության էությունը:
- Ներկայացրեք տեղեկատվական ոլորտում պետության, հասարակության և անհատի շահերի համախումբը:
- Ինչպե՞ս են դասակարգվում պետության տեղեկատվական անվտանգության սպառնալիքները՝ իրենց ընդհանուր ուղղվածության տեսանկյունից:
- Բնորոշեք տեղեկատվական հեղափոխությունը:
- Ներկայացրեք տեղեկատվական հեղափոխության հետևանքները և մասնավորեցրեք դրանց ազդեցությունը պետության անվտանգության համակարգի վրա:
- Ի՞նչ է տեղեկատվական պատերազմը և ինչպիսի՞ դրսևորումներ այն ունի:
- Ի՞նչ է սոցիալական ապակազմակերպումը:
- Ներկայացրեք տեղեկատվական հակամարտության և մանիպուլյացիոն հիմնական տեխնոլոգիաները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Зубок Ю.А., Чупров В.И., Социальная регуляция в условиях неопределенности. Теоретические и прикладные проблемы в исследовании молодежи, М., 2008. С. 42–43.
2. Михайлов В.А., Михайлов С.В. Особенности развития информационно-коммуникационной среды современного общества // Актуальные проблемы теории коммуникации: сб. науч. тр. СПб.: Изд-во СПбГПУ, 2004. С. 34-52.
3. McLuhan, Marshall, Understanding Media. (Gingko Press, 2003). P. 6.
4. McLuhan, Marshall, Letters of Marshall McLuhan. (Oxford University Press, 1987). P. 254.
5. St'u McLuhan M., The Gutenberg Galaxy: The Making of Typographic Man. Toronto: Univ. of Toronto Press, 1962.

6. Кастельс М., Киселева Э. Россия и сетевое общество // Россия в конце XX века: Тез. докл. Междунар. конф., М., 1998. С. 37.
7. Кастельс М., Становление общества сетевых структур // Новая постиндустриальная волна на Западе. Антология / Под редакцией В.Л. Иноземцева. М.: Academia, 1999. С. 423.
8. Киссинджер Г., Нужна ли Америке внешняя политика? / Пер. с англ. под ред. В.Л. Иноземцева, М.: Ладомир, 2002. С. 321.
9. Говорухина К.А., Информационно-коммуникационные технологии в контексте глобализации и информационной безопасности, «Вестник» ПАГС, N 4 (25), 2010. С. 28.
10. Литвинов В. Основы национальной безопасности России, М., 2011. С. 73.
11. Кулагин В.М., Современная международная безопасность: учебное пособие/ В.М. Кулагин. –М.: КНОРУС, 2012. С. 85.
12. Տե՛ս «Հայաստանը կանգնած է ազգային ինքնության վերացման սպառնալիքի առջև. Կարիներ Նալչաջյան» (15/12/12), <http://www.tert.am/am/news/2012/12/15/national-identity/>
13. Ռազմական սոցիոլոգիա. Ուսումնական նյութերի ժողովածու /պրոֆ. Լ.Հ. Հարությունյանի խմբագրությամբ, Եր., 2005, էջ 148:
14. Дугин А., Мир охвачен сетевыми войнами, տե՛ս http://nvo.ng.ru/concepts/2005-11-25/4_netwars.html
15. Основы национальной безопасности: учеб. пособие для студ. высш. проф. учеб. заведений / [Л.А. Михайлов]-М.: Издательство центр «Академия», 2008. С. 92.
16. Панарин И. Н. Информационная война и коммуникации / Горячая линия – Телеком, 2014. С. 6.
17. «Информационные войны – угроза для цивилизации» (23/10/2013), <https://lgz.ru/article/-42-6435-23-10-2013/informatsionnye-voyny-ugroza-dlya-tsivilizatsii/>
18. Robinson N., Gribbon L., Horvath V., Robertson K. Cyber-security threat characterisation, Rand Corporation, 2013. P. 5, http://www.rand.org/content/dam/rand/pubs/research_reports/RR200/RR235/RAND_RR235.pdf
19. Տե՛ս «Պենտագոնը մտադիր է 5 անգամ ավելացնել կիրեռանվտանգության ուղղված ծախսերը» (28/01/13), <http://www.tert.am/am/news/2013/01/28/cyber-security/>
20. Хассельбах К., Рюттингер М. «В ЕС открылся центр по борьбе с киберпреступностью» (11/01/13),

- <http://csef.ru/index.php/ru/aktualno/4342-v-es-otkrylsya-tsentr-po-borbe-s-kiberprestupnostyu>
21. Տե՛ս «France Military To Up Defenses Against Cyberwar» (21/01/2014), <http://www.defensenews.com/article/20140121/DEFREG01/301210027/France-Military-Up-Defenses-Against-Cyberwar>
 22. Տե՛ս «Япония создает кибервойска» (21/05/2013), <http://vpk-news.ru/news/16008>
 23. «Страны ОДКБ создают центр по противодействию киберинцидентам» (10/04/2014), http://ria.ru/defense_safety/20140410/1003345958.html
 24. Մարտիրոսյան Ա., Տվյալների պաշտպանության խնդիրները Հայաստանում, «ԳԼՈՐՈՒՍ», թիվ 3 (36), 2013, էջ 58-59:
 25. Крутских А.В., Научно-технологическая составляющая современных международных отношений // Современные международные отношения и мировая политика. М., 2005. С. 201.
 26. Бжезинский Зб. Выбор. Глобальное господство или глобальное лидерство/ Пер. с англ.- М.: Междунар. отношения, 2010. С. 30.
 27. Говорухина К.А., նշվ. աշխ., էջ 30-31:
 28. Фридман Т., Плоский мир: краткая история XXI века. М., 2007. С. 43.
 29. Հարությունյան Գ., ԵԱՄ. տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրները և ինտեգրման հնարավոր սցենարները, «21-րդ ԴԱՐ», թիվ 1, 2013, էջ 7:
 30. «Исследование: интернет воздействует на мозг как наркотик» (20/02/13), <http://russian.rt.com/article/4627>
 31. Մարտիրոսյան Ա., Համացանցի ներթափանցումը Հարավային Կովկաս (03/10/13), http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=12347#4_b
 32. «Ոգեբույժները նշել են «Facebook-դեպրեսիայի» նշանները» (03.12.12), <http://www.tert.am/am/news/2012/12/03/facebook-depressia/>
 33. «Исследование: социальные сети делают человека неадекватным» (10/07/2012), <http://www.vesti.ru/doc.html?id=846107>
 34. Политика информационного общества. Ежегодный всемирный доклад Программы ЮНЕСКО «Информация для всех» за 2009г. / Под ред. А. Раба. Перевод с англ.. М.: МЦБС, 2010. С. 43.
 35. Քինակցյան Ա., Հոգևոր-մշակութային անվտանգությունը որպես տեղեկատվական անվտանգության բաղադրիչ, «Բանբեր» ԵՊՀ, գիտական հանդես, 3/134, 2011, էջ 22:

36. «Ի՞նչ նոր սերունդ է գալիս քաղաքական դաշտ»,
<http://7or.am/am/news/view/16406/>
37. ԱԱԽ պաշտոնական կայք, <http://nsc.am/index.php?id=580>
38. Հարությունյան Գ., Հայաստանին ուղղված մարտահրավերները գլոբալացվող աշխարհում, «21-րդ դար», թիվ 6(46), 2012թ., էջ 14:
39. Ասատրյան Հ., Հատընտիր, Եր., Ամարաս, 2004, էջ 74:
40. Панарин Н.Н., Информационная война, PR и мировая политика. Курс лекций.– 2-е изд., стереотип. – М.: Горячая линия-Телеком, 2014. С. 194-202.

ԳԼՈՒԽ 5

ՌԱԶՄԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

- ՌԱԶՄԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ
- ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ
- ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ
- ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ
ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻՈՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

5.1. ՌԱԶՄԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Si vis pacem, para bellum...

Ռազմական անվտանգությունը՝ ռազմական ուժի կիրառման կամ դրա կիրառման սպառնալիքի հետ հետ կապված, արտաքին և ներքին ռազմական սպառնալիքներից կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածության վիճակն է, որը բնորոշվում է նման սպառնալիքների բացակայությամբ կամ նրանց դիմակայելու հնարավորությամբ [1]:

Ռազմական անվտանգությունը ԱԱ առանցքային բաղկացուցիչներից է, որն իր մեջ ներառում է հետևյալ ոլորտները՝

- պետական սահմաններ,
- զինված ուժեր,
- ռազմակրթություն ու ռազմագիտություն,
- ռազմական արդյունաբերություն, և այլն:

Պետության ռազմական անվտանգության հայեցակարգային մանրակերտը (մոդելը) ներկայացված է գծապատկեր 2-ում:

Ռազմական անվտանգությունը որոշվում է պետության զինված ուժերի կողմից անվտանգության շահերի ապահովման հնարավորությամբ: Ռազմական անվտանգության արտաքին կողմը դրսից ռազմական ուժի կասեցման կամ հակազդման ունակությունն է, ինչը կախված է զինված ուժերի պատրաստության մակարդակից և վիճակից, տարածաշրջանում հավաքական անվտանգության համակարգի ձևավորումից և ռազմաքաղաքական դաշինքներում պետությունների անդամակցումից:

Տվյալ ոլորտի գլխավոր նպատակը ազգային պաշտպանության վրա ռացիոնալ ծախսերի պայմաններում սպառնալիքներին համարժեք արձագանքման հնարավորության ապահովումն է: Այս համատեքստում նշենք, որ ԱԱ ապահովման, այդ թվում՝ ռազմական անվտանգության ապահովման համար անհրաժեշտ օպտի-

մալ ծախսերի չափ է համարվում երկրի ՀՆԱ-ի մոտ 3% չափով կատարվող ծախսերը: Այս շեմի գերազանցումը բացասաբար է ազդում պետության տնտեսական վիճակի վրա: Վերջինիս վառ օրինակն է համարվում ԿԺԴՀ-ն, որը ռազմական նպատակներով ծախսում է ՀՆԱ-ի ¼-ից ավելին: Մյուս կողմից՝ ՀՆԱ-ի 3%-ից էականորեն ցածր կատարվող ռազմական ծախսերը դրականորեն են ազդում երկրի տնտեսության վրա, սակայն հաճախ դատապարտում է նման երկրներին կախվածության ռազմական տեսակետից առավել հզոր դաշնակից երկրներից: Վերջին պարագան ամբողջովին տարածվում է, ասենք, Ճապոնիայի և մի շարք եվրոպական երկրների վրա, որոնց ռազմական կարիքների համար ծախսվում է ՀՆԱ-ի մինչև 1%-ը [2]:

Պատերազմները և զինված բախումները կանխելու համար ներկայումս նախապատվությունը տրվում է քաղաքական, դիվանագիտական, տնտեսական և այլ ոչ ռազմական միջոցներին:

Ռազմական վտանգը միջազգային և միջպետական հարաբերությունների մի վիճակ է, երբ այդ հարաբերությունները բնութագրվում են ռազմական ուժի կիրառման սպառնալիքով: Այդ վտանգը միշտ հանդես է եկել որպես այն ուժերի քաղաքականության հետևանք, որոնք ձգտում են իրենց քաղաքական, տնտեսական, տարածքային և այլ նպատակներին հասնել զինված պայքարի միջոցներով:

Ներկա գործընթացների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երկրների միջև տարվող ավանդական համաչափ պատերազմներին փոխարինման են գալիս անհամաչափ հակամարտությունները: Միաժամանակ, քաղաքակրթական զարգացման ժամանակակից փուլի առանձնահատկությունների, ինչպես նաև ռազմական ոլորտում որակական փոփոխությունների վերլուծությունը հնարավորություն է ընձեռում ենթադրել պատերազմների տեսակների առաջացման հնարավորությունը, որոնք կարելի է դասակարգել հետևյալ կերպ՝

- ըստ սոցիալական աղբյուրների (միջքաղաքակրթական և ներքաղաքակրթական),


- ըստ բնույթի (արտաքին՝ միջպետական, և ներքին՝ քաղաքացիական),
- ըստ մասշտաբի (համաշխարհային, տարածաշրջանային և տեղային),
- ըստ կործանարարության (միջուկային, ժամանակակից սպառազինությունների զանգվածային կիրառմամբ և այդ սպառազինությունների սահմանափակ կիրառմամբ),
- ըստ քաղաքական-իրավական և էթիկական հատկանիշի (ագրեսիվ-հարձակվողական և պաշտպանողական, որը կոչված է պաշտպանել հայրենիքը արտաքին ոտնձգություններից):

ՈԱԶՄԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Արտաքին և ներքին սպառնալիքներից երկրի ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությանը և բնակչությունը պաշտպանելու կարողությունն է:

ՌԱ նպատակը. արտաքին սպառնալիքներից պետական շահերի պաշտպանությունը:

ՌԱ չափանիշները. զինված ուժերի պահպանում այն վիճակում, որը կապահովի սահմանների պաշտպանունակությունը:



Գծապատկեր 2. Պեղծության ռազմական անվտանգության հայեցակարգային մանրակերպը (մոդելը)

5.2. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Ցանկացած տարածաշրջանի անվտանգության առաջնային և վճռական նախապայմաններից է զինված հակամարտությունների և ռազմական բախումների կանխումը: Պետք է արձանագրել, որ ներկայում միջազգային անվտանգության վիճակի վրա բազմագործոն ազդեցությունների հետևանքով, համաշխարհային հանրությունն ու ազգային պետությունները սպառնալիքների նկատմամբ առավել խոցելի են դառնում: Միջազգային անվտանգության վիճակն իր հերթին չի կարող չարտահայտվել տարածաշրջանային անվտանգության վրա: Ինչպես նշում է Վ. Կուլագինը. «Միջազգային անվտանգության գլոբալ խնդիրներն աստիճանաբար առավել շատ են արտացոլվում տարածաշրջանային անվտանգության համակարգերում: Սակայն տարբեր տարածաշրջաններում նրանք միանման չեն արտահայտվում: Տարածաշրջանային գործընթացների վրա ազդեցություն է ունենում առաջատար տերությունների դրսից պրոյեկտվող քաղաքականությունը: Սակայն այս կամ այն տարածաշրջանում հատուկ նշանակություն ունեն յուրահատուկ լոկալ բնույթի խնդիրները, որոնք գլխավորապես կամ բացառապես բնորոշ են կոնկրետ տարածաշրջանին» [3]:

Հարավային Կովկասն աշխարհի այն տարածաշրջաններից է, որը բնորոշվում մի շարք սառեցված հակամարտություններով (Լեռնային Ղարաբաղ, Աբխազիա, Հարավային Օսիա) և էսկալացիոն ներուժով օժտված այլ միջէթնիկական խնդիրներով՝ աջարական, թալիշական, ջավախահայության հարց և այլն: Պետք է արձանագրել նաև, որ համաշխարհային հանրության աչքում Հարավային Կովկասը և ընդհանրապես՝ Կովկասը, վերափոխվել է վտանգի պոտենցիալ աղբյուրի, ինչը ստիպում է նրան առավել մեծ ուշադրություն դարձնել տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացներին և առկա ռիսկերի վերլուծությանը: Այս համա-

տեքստում ուշադրության է արժանի քաղաքագետ Լ. Շիրինյանի դիտարկումը. «Անկասկած է, որ Հայաստանի զարգացման, նոր աշխարհակարգի հաստատման տագնապահարույց մեր օրերում նրա անվտանգության ապահովման համար անհրաժեշտ է.

ա) պատկերացնել համապատասխան ուժային կենտրոնների, երկրների ռազմավարական շահագրգռությունները Հարավային Կովկասում, որտեղ գտնվում են հայկական երկու պետական կազմավորումն ու Ջավախքը,

բ) իրատեսության շրջանակներում սահմանել (ուրվագծել) «Հ երկրառազմավարության գերակայությունները» [4]:

Պատմության բոլոր փուլերում Կովկասյան տարածաշրջանը՝ պայմանավորված իր աշխարհագրական դիրքով և բնական հարստություններով, մշտապես գտնվել է տարբեր ուժային կենտրոնների հետաքրքրությունների կիզակետում: Ինչպես նշում է հայտնի քաղաքագետ Կ.Ս. Գաջիևը. «...Կովկասը դարձավ ռազմական դիմակայության սահմանագիծ, նախ՝ Բյուզանդիայի և Պարսկական կայսրության, այնուհետև՝ Բյուզանդիայի, արաբների և թյուրքերի, իսկ նոր ժամանակներում՝ Ռուսաստանի և Օսմանյան Թուրքիայի ու Սեֆևիդյան Իրանի, նրանց միջև բազմաթիվ պատերազմների թատերաբեմ» [5]:

Խնդրի վերլուծության համատեքստում հատկանշական է նաև Թեհրանում «Ալիք» հայկական թերթի հիմնադիր Ի. Թադևոսյանի՝ դեռևս նախորդ դարի 30-ական թվականներին գրված հոդվածում տեղ գտած դիտարկումը. «...Կովկասում խաչվում և բախվում են Ռուսաստանի, Թուրքիայի, Անգլիայի, Գերմանիայի և Իտալիայի տնտեսական և քաղաքական շահերը: Կովկասը, գտնվելով Ռուսաստանի՝ Մերձավոր Արևելքի ժողովուրդների կյանքի և ճակատագրի վրա տնտեսական և քաղաքական տիրապետության ձեռք բերման ճանապարհին, Ռուսաստանի՝ հարավային տաք Հնդկական օվկիանոսի ափերին հասնելու ճանապարհին՝ վերջին երկու հարյուրամյակում հատուկ կարևոր տեղ էր զբաղեցնում Ռուսաստանի արտաքին քաղաքականությունում 1828թ. առ այսօր» [6]:

Ներկայում նույնպես, ինչպես ճշմարտացիորեն նշում է Ս. Սեմեդովը՝ Կովկասի դերն ու նշանակությունը՝ որպես Հյուսիսի և Հարավի, Արևմուտքի և Արևելքի միջև հարմար կապող տրանսպորտային հանգույց, նշանակալի է: Սակայն, տարածաշրջանի ենթակառուցվածքները զարգացած չեն, էթնիկական և միջպետական հակամարտությունները չեն խթանում երկրների միջև սերտ համագործակցությանը: Խողովակաշարային և տրանսպորտային համակարգերը, որոնք ստեղծվել են ԽՍՀՄ տարիներին, արդեն չեն համապատասխանում գլոբալացվող աշխարհի պահանջներին: Կովկասի նշանակությունը համաշխարհային տիրությունների ազգային ռազմավարություններում առավել բարձրանում է: Կովկասը ռազմավարական հենակետ է, տեսահարթակ և բարձրություն, որից լավ դիտարկվում է ինչպես Կենտրոնական Ասիան, այնպես էլ չինազանդվող Աֆղանստանը և Իրանը [7]:

Այստեղ կարող ենք փաստել, որ, այո, երբեմն փոխվում են դերակատարները, իսկ էությունը՝ ոչ: Կովկասյան տարածաշրջանում Ռուսաստանի հետապնդած նպատակների համատեքստում բնութագրական է նաև Ն. Պոկրովսկու դիտարկումը. «...Ինքնակալությունը Կովկաս է եկել երկու խնդիրներով. գրավել ռուս կալվածատիրոջ համար կովկասյան բերրի հողերը և ապահովել ռուս վաճառականին առևտրային ուղիներով» [8]:

Հարկ է ընդգծել, որ Կովկասը (այդ թվում՝ Հարավային Կովկասը)՝ որպես բարդ և բազմաշերտ համակարգ, իրենից ներկայացնում է բազմաթիվ ազգերի, կրոնների և մշակույթների խճանկար: Տարածաշրջանում աշխարհաքաղաքական ներկա իրավիճակը վերլուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ այն առանցքային տեղ է գրավում Եվրասիայում, ինչն էլ բացատրում է այստեղ բազմաթիվ ուժային կենտրոնների ակտիվությունը և ուղղակիորեն անդրադառնում տարածաշրջանում քաղաքական դերակատարների միջև հակոտնյա կամ բարեկամական հարաբերությունների ձևավորման վրա: Ինչպես նշում է Ս. Կորնեյը. «Կովկասում կենտրոնացվող ռազմավարական արգելափակումը չի կարող ամբողջությամբ գիտակցվել՝ առանց առավել լայն՝ Եվրասիայի

մասշտաբով ռազմավարական արգելափակման մեջ նրա դերը գնահատելու» [9]:

Դ. Էվլագովի գնահատմամբ՝ Կովկասի համար Եվրասիական տերությունների հակամարտությունը տեղի էր ունենում տարածաշրջանում ներքին միավորող ուժի բացակայության, էթնիկական և կրոնական խայտաբղետության, պառակտվածության, մշտական երկպառակության առկայության պայմաններում, որոնք նկատելիորեն թուլացնում էին տարածաշրջանը, ինչով էլ՝ մեծացնում արտաքին միջամտության համար հնարավորությունները [10]:

Փաստ է, որ սառը պատերազմի ավարտից հետո ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակը և տեղեկատվական, համակարգչային տեխնոլոգիաների ոլորտում արձանագրված անսախադեպ առաջընթացը հանգեցրին մի կողմից՝ գլոբալ հասարակության, իսկ մյուս կողմից՝ *միաբևեռ աշխարհակարգի* ձևավորմանը՝ ԱՄՆ-ի ակնհայտ գերակայությամբ:

Սակայն ակնհայտ է, որ 21-րդ դարում աշխարհաքաղաքական գործընթացները ձեռք են բերում բոլորովին նոր բնույթ և որակապես այլ բովանդակություն՝ անցում կատարելով *բազմաբևեռ աշխարհակարգին*: Չնայած դրան՝ նոր աշխարհակարգին անցումը դեռևս չի նվազեցնում (առավել ևս՝ վերացնում), դիսկառնորեն գործոնները, որոնց մեջ առանձնանում են գլոբալ ահաբեկչական, այդ թվում՝ կիբեռաահաբեկչական սպառնալիքները, որոնք առանձին և խորը վերլուծության ու բազմակողմանի քննարկման կարիք ունեն: Սակայն համառոտ նշենք հետևյալը. իրավիճակը, երբ ԱՄՆ ապահովման պետական համակարգը գլոբալացման գործընթացների հետևանքով արդեն նախկինի պես արդյունավետ չէ, վտանգավոր սողանքներ է ստեղծում, որից կարող են օգտվել տարբեր տեսակի արմատական, ծայրահեղական և ահաբեկչական խմբավորումները:

Անհրաժեշտ է ընդգծել, որ գլոբալացումը լրջորեն վերափոխել է հին աշխարհակարգը՝ թափանցիկ դարձնելով ազգային սահմանները և նոր որակ ու բովանդակություն հաղորդելով յուրա-

քանչյուր երկրի ԱԱ ապահովման խնդիրներին: Այս հիմնախնդիրը հատուկ սրություն է ձեռք բերում նաև Հարավային Կովկասի տարածաշրջանում՝ տարածաշրջանի պատմական, տնտեսական, սոցիալական, մշակութային և քաղաքական առանձնահատկություններով պայմանավորված:

Գաղտնիք չէ, որ Հարավային Կովկասն արտաքին ուժերի մրցակցության և դիմակայության դաշտի է վերածվել, որոնցից յուրաքանչյուրը տարածաշրջանում հետապնդում է իր շահերը և ունի սեփական նպատակները: Այս համատեքստում հարկ է մեջբերել հատված ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի պետ, ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդական, ք.գ.դ., գեներալ-մայոր Հ. Քոթանջյանի՝ 2012թ. փետրվարի 2-ին Ջ. Մարշալի անվան կենտրոնի շրջանավարտների Հայկական Ասոցիացիայի, Եվրոպական անվտանգության ուսումնասիրման կենտրոնի և ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան կողմից համատեղ կազմակերպված «Հարավային Կովկաս՝ նոր մարտահրավերներ» թեմայով սեմինարին ունեցած զեկույցից. ««Արաբական գարնան» դժվար կանխատեսելի զարգացումը, Իրանի միջուկային ծրագրի շուրջ միջազգային լարվածության աճը, իսլամական աշխարհի նկատմամբ Թուրքիայի *նոր-օսմանականության* արտաքին քաղաքականության կերպափոխումը, Կենտրոնական Ասիայում անվտանգային դինամիկայի զարգացման հեռանկարների բարդացումը՝ կապված Աֆղանստանից դաշնադրային զորքերի նախատեսվող դուրսբերման հետ, ինչպես նաև Եվրոպական Միության աշխարհառազմավարական տարածքում համակարգային ճգնաժամի խորացումը այն հիմնական արտաքին գործոններն են, որոնք ազդում են Հարավային Կովկասում անվտանգային միջավայրի փոփոխությունների դինամիկայի վրա: Հարավային Կովկասում անվտանգության պահպանման գործում որոշակի դեր է կատարում միջազգային անվտանգության համակարգում Հայաստանի, Վրաստանի և Ադրբեյջանի ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ չափումներով ներգրավվածության դինամիկան: Այստեղ որպես դրական

գործոն պետք է նշել հարևանների համեմատությամբ Հայաստանի՝ ավելի մեծ հավասարակշռվածությունը, որը նա ցուցաբերում է իր անվտանգային կողմնորոշումների բազմազանության պահպանման և ՆԱՏՕի ու ՀԱՊԿ-ի, Ռուսաստանի ու ԱՄՆ-ի, այլ համաշխարհային ուժային կենտրոնների, այդ թվում՝ Չինաստանի և Հնդկաստանի, ինչպես նաև Եվրոպայի ու Մեծ Մերձավոր Արևելքի երկրների հետ անվտանգային համագործակցության զարգացման ասպարեզում: Դրա հետ մեկտեղ, հարկ է նշել, որ Հարավային Կովկասում անվտանգության դինամիկայի վրա ազդում է հենց հարավկովկասյան պետությունների միջև ձևավորված այն հարաբերությունների բարդ համակարգը, որն արտացոլում է Ռուսաստանի, Թուրքիայի և Իրանի նկատմամբ նրանց չհամընկնող անվտանգային շահերը: Ռազմավարական հետազոտությունների մեծ թվով կենտրոններ նշում են Մերձավոր Արևելքում ավերիչ տարածաշրջանային պատերազմի բռնկման հավանականության աճը՝ մի պատերազմի, որի ուղեծրում անխուսափելիորեն կհայտնվի նաև Հարավային Կովկասը: Տարածաշրջանային իրադրության նման աղետալի զարգացման դեպքում Հայաստանի ազգային անվտանգության համար հիմնական սպառնալիք եղել և մնում է Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի հնարավոր ագրեսիան» [11]:

Խնդրի քննարկման և Հայաստանի անվտանգության ռիսկերի վերլուծության համատեքստում ուշադրության է արժանի նաև «Նորավանք» ԳԿՎ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավարի տեղակալ Ս. Սարգսյանի դիտարկումը, ով, վերլուծելով Կովկասյան և Կենտրոնասիական տարածաշրջանում Ռուսաստանի և Չինաստանի առջև կանգնած առկա և հեռանկարային մարտահրավերները, առանձնացնում է դրանցից հիմնականը.

- ծայրահեղական և ահաբեկչական խմբավորումների գործունեության ակտիվացումը ՌԴ Հյուսիսային Կովկասում՝ միջազգային իսլամիստական ահաբեկչական կազմակերպությունների կողմից գաղափարախոսական, նյութատեխ-

նիկական և ֆինանսական աջակցության ցուցաբերման պարագայում,

- լիամասշտաբ մարտական գործողությունների վերսկսումը Ղարաբաղյան հակամարտության գոտում,
- լարվածության կտրուկ սրացումը և ռազմական գործողության իրականացումը Իրանի Իսլամական Հանրապետության դեմ: Հարավկովկասյան տարածաշրջանի համար ակնհայտ բացասական հետևանքներից բացի, դա խիստ զգալի հարված կհասցնի նաև ՉԺՀ տնտեսությանը. Իրանը չինական շուկա նավթ մատակարարող նշանակությամբ երրորդ երկիրն է,
- ջիհադական տրամադրությունների տարածումը Կենտրոնական Ասիայի պետություններում. որպես առավել հավանական սցենար՝ հնարավոր է տարածաշրջանի կամ նրա մի մասի թալիբանացումը, որի հեռանկարներն ավելի իրական կդառնան կոալիցիայի զորքերի՝ 2014թ. նախատեսված դուրսբերումից հետո,
- Աֆղանստանից և Կենտրոնական Ասիայից թմրանյութերի տեղափոխման ծավալների պահպանումը և անգամ ավելացումը,
- թուրքամետ տրամադրությունների ուժեղացումը էթնիկ թյուրքերով բնակեցված շրջաններում (ինչպես ՌԴ տարածքում, Կենտրոնական Ասիայի պետություններում, այնպես էլ ՉԺՀ ՍՈՒԾ-ում)*,
- *արաբական հեղափոխությունների* տարածումը իսլամամետ և իսլամիստական շարժումների ակտիվացման տեսքով ՌԴ որոշ շրջաններում, Հարավային Կովկասի տարածաշրջանում (հիմնականում՝ Ադրբեջանում, ինչպես նաև՝ Վրաստանի ադրբեջանաբնակ շրջաններում), Կենտրոնա-

* ՉԺՀ ՍՈՒԾ – Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Սինցյան-Ույղուրական ինքնավար շրջան:

կան Ասիայի պետություններում, ինչպես նաև՝ Չինաստանում,

- տարածաշրջանի բոլոր երկրների անվտանգությանն սպառնացող տեղեկատվական բնույթի սպառնալիքներ՝ սերտորեն կապված ամենատարբեր ռազմաքաղաքական մարտահրավերների հետ [12]:

Հայաստանի ԱԱ ապահովման տեսանկյունից հատուկ մտահոգության առարկա է նաև Ադրբեջանում քարոզվող հայաստացության քարոզչությունը, Հայաստանին պարտադրվող սպառնալիքների մրցավազքը, հայկական մշակութային հուշարձանների ոչնչացումը, պատմական փաստերի ակնհայտ կեղծումը և այլ բացասական և տարածաշրջանում լարվածությունը մեծացնող երևույթները: Առկա են նաև մի շարք այլ գործոններ, որոնք նվազեցնում են Արցախյան հակամարտության խաղաղ հանգուցալուծման լավատեսական ակնկալիքները [13]: Ինչպես նշում է Կովկասի ինստիտուտի փոխտնօրեն, քաղաքագետ Ս. Մինասյանը. «Լեռնային Ղարաբաղը վերջին ժամանակներս փորձում է դուրս գալ միջազգային մեկուսացումից և մասնակցել տարածաշրջանային նախագծերին: Փաստորեն, Ղարաբաղի մեկուսացումը միջազգային հանրությունից ընդամենը հեռացնում է Ադրբեջանի հետ հաշտվելու հեռանկարը՝ ղարաբաղցիների մեջ ձևավորելով «պաշարված ամրոցի» սինդրոմը և փոխզիջումների հանդեպ բացասական վերաբերմունքը, որն ապագայում կարող է խորանալ: Ստեփանակերտի նոր օդանավակայանի բացման պարագայում քաղաքացիական ինքնաթիռների դեմ ուժ կիրառելու պաշտոնական Բաքվի սպառնալիքները, Ռամիլ Սաֆարովի և Աքրամ Այլիալիի աղմուկ հանած պատմությունները նույնպես ղարաբաղյան հասարակության և ԼՂՀ քաղաքական ընտրանու մեջ խորացնում են հակամարտության զարգացման ներկա փուլում Ադրբեջանի հետ փոխզիջումների հնարավորության մասին կասկածները» [14]:

Հայաստանի ԱԱ, մասնավորապես՝ ռազմական անվտանգության ապահովման գործում ծանրակշիռ դերակատարություն ունի հայ-ռուսական երկկողմ և ՀԱՊԿ շրջանակներում համագոր-

ծակցությունը: Հայաստանը միակ ՀԱՊԿ անդամ երկիրն է տարածաշրջանում, այստեղ է տեղակայված նաև ՌԴ զինված ուժերի 102-րդ ռազմաբազան, որը մշտապես զսպիչ դեր է կատարել, հատկապես, Հայաստանի նկատմամբ ագրեսիվորեն տրամադրված մյուս հարևանի՝ Թուրքիայի նկատմամբ: Վերլուծելով Հայաստանում տեղակայված ռուսական զորքերի տարածաշրջանային նշանակությունը և Արցախյան հակամարտության տարիներին դրա առկայության կարևորությունը՝ հետազոտողներ Ն. Նարտովը և Վ. Նարտովը նշում են. «Ռուսական զինված ուժերի առկայությունն ապահովում է Հայաստանի անվտանգությունը, նախ և առաջ, Թուրքիայից, որը 1915թ. իրականացրել է հայ ժողովրդի ցեղասպանությունը՝ այդպիսով կանխագործելով հայտնի հոլոքոստը... Կարելի է մեծ հավանականությամբ ենթադրել, որ ռուսական զորքերի առկայությունը զսպեց թուրքերին ռազմական գործողություններից, որոնք ունենալով բարձր հովանավոր՝ ի դեմս ԱՄՆ-ի, գործում են քրդերի դեմ՝ խախտելով միջազգային իրավունքի բոլոր նորմերը» [15]:

Շարունակելով թուրքական սպառնալիքի քննարկումը՝ նշենք, որ վտանգ է ներկայացնում նաև Եվրամիությանն ինտեգրման և այդ կառույցին անդամագրման Թուրքիայի որդեգրած քաղաքականության տապալման դեպքում վերջինում հնարավոր բացասական զարգացումները՝ մահմեդական ծայրահեղականության տեսքով: Ինչպես նշում է ամերիկացի հայտնի քաղաքագետ Ջ. Բժեզինսկին. «Եթե Թուրքիայի առջև վերջնականապես փակվեն ԵՄ դռները, չի կարելի բացառել այդ երկրում մահմեդական կրոնա-քաղաքական ավանդույթների վերածնունդը, և, որպես հետևանք, նրա արմատական (և, հավանաբար, կապված ներքին ցնցումների հետ) միջազգային կուրսի փոփոխությունը: Չարժի թերագնահատել այդ հավանականությունը» [16]:

Տարածաշրջանում Թուրքիայի հավակնությունների վերաբերյալ բավականին զգաստացնող են հնչում նաև Գ. Հարությունյանի դիտարկումները. «Նեոսոմանական գաղափարախոսություն-

նով տոգորված թուրքական քաղաքական վերնախավն ավելի քան ամբիցիոզ է և հավակնում է ստեղծել՝

- «Իսլամական ՆԱՏՕ» և «Իսլամական խաղաղարար ուժեր» (այդպիսով վերակենդանացնելով Էրդողանի գաղափարական հայր, նախկին վարչապետ և ռադիկալ իսլամիստ Էրբաքանի ծրագրերը),
- միջուկային զենք,
- թուրքական լիրայի տնտեսական գոտի» [17]:

Ինչպես նշում է խնդրի հետազոտող Ս. Սարոյանը՝ հիմնվելով իր հաջողված ծրագրային դրույթների վրա՝ Թուրքիան ներկայում իրեն պատկերացնում է որպես այն նոր քաղաքակրթական առանցքը, որի շուրջ պետք է համախմբվեն նախկինում Օսմանյան կայսրության մաս կազմած շատ երկրներ: Նշված քաղաքական գծի ճարտարապետ, Թուրքիայի ԱԳ նախարար Ահմեդ Դավութօղլուի ձեռամբ այդ ռազմավարությունը ստացել է նեոօսմանականություն անվանումը [18]:

Փաստ է, որ ԽՍՀՄ փլուզումից հետո Հարավային Կովկասում իրադարձությունների զարգացումն ակնհայտորեն ի ցույց դրեց անվտանգության տեսակետից տարածաշրջանի խոցելիությունը՝ պայմանավորված դեռևս ԽՍՀՄ առաջին տարիներին հանրապետությունների վարչատարածքային բաժանման, միջէթնիկական խնդիրների կարգավորման ընթացքում դրված «ականներով»: Ինչպես նշում է Կ. Գաջիևը. «Խորհրդային Միության փլուզումը և միացյալ սոցիալական և տնտեսական տարածության ապահովման գործընթացումը յուրաքանչյուր հետխորհրդային պետությունում ծնեցին բազմաթիվ տնտեսական, սոցիալական, էթնոքաղաքական և այլ սուր խնդիրներ: Անդրկովկասի նորանկախ երկրներն ինչպես ներքաղաքական, այնպես էլ աշխարհաքաղաքական տեսանկյունից հայտնվեցին որակապես նոր իրավիճակում: Փոփոխվեցին իշխանության համակարգը, գաղափարախոսությունը, հասարակական հարաբերությունները, զարգացման բնույթն ու ուղղությունը, կենսական առաջնահերթությունները, համաշխարհային ընկերակցության կառուցվածքի մեջ տեղն ու

դերը և այլն: Դիտարկվող համատեքստում առանցքային նշանակություն ունեն տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարները, որի չափորոշիչներից և վեկտորներից, ինչպես ենթադրվում է, կախված կլինի տարածաշրջանի՝ ինչպես աշխարհաքաղաքական դիմանկարն ընդհանրապես, այնպես էլ՝ այնտեղ բնակվող յուրաքանչյուր ժողովրդի ճակատագիրը» [19]:

Մեր կարծիքով՝ տարածաշրջանում առկա հակամարտությունների կարգավորման և քաղաքական հակասությունների հարթեցման ուղիների վերաբերյալ հաճախ հակոտնյա մոտեցումների առկայության պարագայում միանշանակ է այն, որ տարածաշրջանում անվտանգության կայուն համակարգի ստեղծման, տնտեսական վերընթաց և երկարաժամկետ զարգացման ապահովման, փոխշահավետ համագործակցության, տնտեսական ինտեգրացման ու արդյունավետ գործակցության գրավականը Հարավային Կովկասում առկա միջէթնիկական հակամարտությունների կարգավորումն է: Տարածաշրջանում՝ կոնկրետ ՀՀ ռազմական անվտանգության ապահովման մակարդակի հետ կապված, լավատեսական է հնչում ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Ն. Բորդյուժայի հայտնած տեսակետը. «Այն քայլերը, որոնք այսօր արվում են Հայաստանի ղեկավարության կողմից անվտանգության ապահովման ազգային համակարգի ձևավորման ուղղությամբ, այն քայլերը, որոնք արվում են ՀԱՊԿ-ի կողմից Հայաստանի անվտանգության ապահովման ուղղությամբ, վկայում են, որ այսօր ստեղծված ողջ համակարգը՝ բաղկացած երեք մակարդակից՝ ազգային, հայ-ռուսական և ՀԱՊԿ, թույլ է տալիս խոսել Հայաստանի անվտանգության ապահովման բավականին բարձր աստիճանի մասին» [20]:

Ամփոփելով նշենք, որ Հարավային Կովկասի անվտանգության համար գոյություն ունեցող բազմաթիվ ռիսկերը օժտված են տարածաշրջանային իրավիճակը ապակայունացնելու ներուժով: Միաժամանակ, Կովկասը հետխորհրդային ամենաանհանգիստ տարածաշրջաններից է, որտեղ ոչ միայն պահպանվում է բազմաբնույթ հակամարտությունների վերսկսման հավանականությունը,

այլ նաև հնարավոր են միջէթնիկական դիմակայության նոր օջախներ: Պակաս անհանգստության առարկա չէ նաև Կասպից ծովի ռեսուրսների շահագործման շուրջ ստեղծված իրավիճակը, որը անհամաձայնությունների և լարվածության աղիթ է դառնում:

Հարավային Կովկասի անվտանգության հաջորդ խնդիրն է տարածաշրջանը թմրանյութերի և վերազգային հանցավոր խմբավորումների համար տարանցիկ գոտի վերածվելու վտանգը: Ինչպես նշում է Ա. Ռյաբովը՝ Հարավային Կովկասը դիտարկվում է որպես տարանցիկ շրջան, որի միջոցով Մերձավոր և Միջին Արևելքից Ռուսաստան են ներթափանցում իսլամական ահաբեկչությունը և միջազգային հանցավոր ցանցերը [21]:

Տարածաշրջանի անվտանգության սպառնալիքների աստիճանակարգում էական տեղ է զբաղեցնում փախստականների և միգրացիայի խնդիրը: Միգրացիոն տրամադրությունների վրա մեծապես ազդում են ստեղծված հակամարտությունները, ներքաղաքական անկայունությունը, տնտեսական անբավարար զարգացումը, կենսամակարդակի կտրուկ անկումը և այլն [22]:

Այսպիսով, Հարավային Կովկասում անվտանգության տեսակետից ստեղծված իրադրությունը պահանջում է կառավարչական, գիտական և վերլուծական մտքի կենտրոնացում, ինչպես առանձին պետությունների մասշտաբով, այնպես էլ՝ տարածաշրջանում ընդհանուր առմամբ, որպեսզի գտնվեն արդեն իսկ առկա և նոր ի հայտ եկող մարտահրավերներին համարժեք պատասխանելու ամենարդյունավետ ձևաչափերն ու միջոցները:

5.3. ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Կովկասյան տարածաշրջանի անվտանգության բազմամակարդակ համակարգի առանցքային սպառնալիքներից է հայադրբեջանական հակամարտությունը: Շուրջ երկուսուկես տասնամյակ ձգվող միջէթնիկական դիմակայությունն ունի իր նախապատմությունը և պատմական տարբեր փուլերում պարբերաբար սրվել է:

Հարավային Կովկասում բախվում են Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Թուրքիայի, Իրանի, ինչպես նաև՝ ԵՄ շահերը, որոնց հետաքրքրություններին մեծապես նպաստում են Կասպյան ավազանի հարուստ էներգետիկ ռեսուրսները: Տարածաշրջանում առկա են նաև միջէթնիկական հակամարտություններ, ինչպիսիք են՝ Աբխազիայի, Արցախի և Հարավային Օսիայի սատեղված հակամարտությունները:

Խնդրի քննարկման համատեքստում պետք է համաձայնել, որ ճշմարտացի է հնչում այն պնդումը, որ ով վերահսկում է Անդրկովկասը, վերահսկում է Կասպից ծովը, ելքերը դեպի Միջին Ասիա և Մերձավոր Արևելք [23]:

Հենց վերոնշյալով պայմանավորված՝ ակնհայտ է, որ Հարավային Կովկասում, երկրների ներսում և նրանց միջև հարաբերություններում իրադարձությունների վրա ազդող հիմնական գործոնը արտաքին համատեքստն է, և հենց վերջինիս հետ կապված հանգամանքներն են կարող փոխել ստատուս-քվոն, որը ձևավորվել է չկարգավորված հակամարտությունների օջախներում և դուրս բերել իրավիճակը հավասարակշռությունից [24]:

Ակնհայտ է, որ այսօր աշխարհում տեղի են ունենում փոփոխություններ, որոնք բնութագրվում են միաբևեռից բազմաբևեռ համակարգին անցնելու գործընթացով, ինչը չի կարող իր ուղղակի ազդեցությունը չունենալ Հարավային Կովկասի տարածաշրջանի վրա:

Ըստ ռուս հետազոտող Եվսենի՝ ներկայումս Հարավային Կովկասի անվտանգության ոլորտում իրավիճակը որոշվում է երեք հիմնական գործոնով.

- սիրիական խորը ճգնաժամով, որը դեռ կարող է հանգեցնել ԱՄՆ և իր դաշնակիցների պատերազմին Բաշար Ասադի դեմ,
- իրանական միջուկային հիմնախնդրով,
- Ռուսաստանի՝ Վրաստանի հետ 2008թ. օգոստոսյան պատերազմի երկարաժամկետ ազդեցություններով [25]:

Նշյալին պարտադիր կերպով պետք է ավելացնել նաև ՌԴ-Արևմուտք աճող լարվածությունը՝ կապված Ուկրաինայի շուրջ ծավալվող իրադարձությունների և դրիմյան ճգնաժամի հետ:

Փաստ է, որ ղարաբաղյան հակամարտության հիմքում ընկած են ազգամիջյան տարաձայնությունները, որոնք անմիջականորեն կապված են 1905թ. Բաքվի հայկական ջարդերի, 1915թ. Թուրքիայի կոլոմից իրականացված Հայոց Ցեղասպանության, 1918-1921թթ. Ադրբեջանի և Ղարաբաղի տարածքում իրականացված ջարդերի, 1988-1990թթ. Բաքվի, Կիրովաբադի, Սումգայիթի ջարդերի ժամանակ խաղաղ հայ բնակչության ֆիզիկական ոչնչացման և բռնագաղթի հետ: Գաղտնիք չէ, որ ազգամիջյան այդ վիհն առավել խորացավ ղարաբաղյան պատերազմի տարիներին:

Նշենք, որ միջազգային իրավունքի տեսակետից Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ բազմաթիվ վերլուծություններ բավականին հակասական իրողության են հանգեցնում, մասնավորապես՝ ժողովուրդների ինքնորոշման և տարածքային ամբողջականության սկզբունքների համադրման կամ դրանցից մեկին առավելություն տալու տեսանկյունից: Կարելի է ենթադրել, որ ամբողջովին համադրել այդ երկու հակոտնյա սկզբունքները բավականին բարդ, եթե չասենք՝ անլուծելի խնդիր է և հակամարտության կարգավորման շուրջ ընթացող բանակցությունների ինչ-որ փուլում սկզբունքներից որևիցե մեկին, գոնե որոշակի, առավելություն է տրվելու: Հակամարտության վերաբերյալ ՀՀ մոտե-

ցումները հստակորեն արտացոլված են «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն» փաստաթղթում, որում տեղ գտած ձևակերպման համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը հետամուտ է հակամարտության կարգավորմանը միայն խաղաղ և փոխզիջումային ճանապարհով: Փաստաթղթում, միաժամանակ, ամրագրված է, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հոչակման իրավական հիմքերն անխոցելի են: Մշտապես ելնելով այն սկզբունքից, որ ցանկացած վերջնական համաձայնություն կամ վերջնական փաստաթուղթ պետք է ստանա նաև ղարաբաղյան կողմի հավանությունը՝ ՀՀ-ն ընդունելի է համարում կարգավորման միայն այն տարբերակները, որոնք ուղղված կլինեն ԼՂՀ փաստացի գոյության անշրջելի իրողությունն ամրագրելուն: ԼՂՀ պետք է աշխարհագրական կապ ունենա ՀՀ հետ: Անվտանգությունն պետք է երաշխավորված լինի [26]:

Ադրբեջանն, իր հերթին, առաջ է մղում ԼՂՀ-ից հայկական զինված ուժերի դուրսբերման անհրաժեշտության և իրենց նախկին բնակության վայր փախստականների վերադարձի հարցերը, միաժամանակ պատրաստակամություն հայտնելով Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղին տրամադրել ինքնավարության ամենաբարձր կարգավիճակ:

Ակնհայտ է, որ 1994թ. մայիսին հրադադարի վերաբերյալ ստորագրված համաձայնությունն՝ չնայած սահմանամերձ գոտում ադրբեջանական զինուժի կողմից կատարվող պարբերական խախտումներին, ընդհանուր առմամբ, պահպանվում է նաև ներկայումս: Պետք է, սակայն, նշել, որ հակամարտող կողմերի միջև հակասությունները՝ կապված ԼՂՀ կարգավիճակի, փախստականների և այլ հարցերի հետ, առ այսօր մնում են չլուծված, ինչը հակամարտությունը արագ ճանապարհով լուծելու հնարավորության փոքր հույս է թողնում: Հայ-ադրբեջանական հակամարտության բազմաշերտությունը հաշվի առնելով՝ զարմանալի չէ այն, որ հակամարտության տարբեր փուլերում վերջինիս վրա ազդող գործոնները փոփոխվել են, իսկ կողմերի դիրքորոշումները՝ առավել կարծրացել: Ինչպես ղարաբաղյան զինադադարի 15-ամյակին

նվիրված միջազգային գիտաժողովի բացման արարողությանը նշել է «Կաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը՝ տարածաշրջանը զերծ չէ մարտահրավերներից և սպառնալիքներից: Մասնավորապես՝ «Կամար անմիջական ռազմական սպառնալիքներ են.

- Ղարաբաղյան հակամարտության առկայությունը և հակամարտող կողմերի միջև կարգավորման փոխհամաձայնեցված քաղաքական-իրավական հիմքեր չլինելը,
- Ադրբեջանի կողմից վարվող ռազմականացման քաղաքականությունը, ռազմական գերակայության հասնելու և Ղարաբաղյան հակամարտությունը ռազմական ուժի կիրառմամբ լուծելու ձգտումը,
- «Ը շրջափակումը և տարածաշրջանում նրան մեկուսացնելու քաղաքականությունը [27]:

Անշուշտ, կրոնական և էթնիկական տարբերությունները, համատեղ պատմության ցավոտ կողմերը, ազգամիջյան հարաբերությունների մեջ պարբերական սրացումները խորը ջրբաժան դարձան հակամարտող կողմերի միջև: Զինված հակամարտության երկարելուն զուգահեռ, որն ուղեկցվում էր զինվորականների և խաղաղ բնակչության շրջանում բազմաթիվ զոհերով, բռնագաղթով, նյութական կորուստներով, երկու կողմի խաղաղ գոյակցության հույսերն աստիճանաբար սառեցվում էին, իսկ հակամարտության կարգավորման կողմերի մոտեցումները՝ բևեռացվում: Վերջին տարիներին խնդիրն առավել բարդանում է ադրբեջանական կողմի տոտալ հակահայկական քարոզչության և սպառազինությունների մրցավազք հրահրելու պատճառով: Վերոնշյալ գործոններով պայմանավորված՝ ներկայում նկատելիորեն արգելակվում է բնակցային գործընթացը: Սակայն, ի վերջո, ակնհայտ է, որ ԼՂՀ բնակչությունը կարող է և պետք է դիտարկվի որպես ինքնորոշման իրավունք ունեցող ժողովուրդ և սեփական կամքով տնօրինի իր քաղաքական ճակատագիրը: Տվյալ դեպքում, կարծում ենք, այդ իրավունքի իրացումն ունի մի շարք հիմնավորումներ՝

1. Լեռնային Ղարաբաղը երբեք չի եղել անկախ Ադրբեջանի կազմում, իսկ Խորհրդային Միության տարիներին նրա բռնակցումը և ենթակայությունն Ադրբեջանի ԽՍՀ-ին եղել է կամայական և չի արտահայտել տեղի բնակչության հավաքական կամքը:

2. Հրադադարի կնքումից հետո ստեղծված ստատուս-քվոն չի ապահովագրում ԼՂՀ-ն Ադրբեջանի ռազմական ագրեսիայից, իսկ վերջինիս կողմից պարտադրվող սպառազինությունների մրցավազքը, հակահայական և այլատյացության քարոզչությունը, ռազմական ծախսերի կտրուկ ավելացումը ցանկացած պահի կարող են վերաճել նոր և լայնածավալ պատերազմի բռնկման՝ սպառնալով ԼՂՀ բնակչության ֆիզիկական անվտանգությանը:

3. Լեռնային Ղարաբաղը փաստացի արդեն իսկ անջատվել էր Ադրբեջանի ԽՍՀ-ից՝ նախքան վերջինիս կողմից անկախացումը և ՄԱԿ անդամ դառնալը:

4. Խորհրդային Միության փլուզումից հետո և ԼՂՀ փաստացի անկախությունից հետո անցել է ավելի քան երկու տասնամյակ, որի ընթացքում մեծացել է նոր սերունդ, որը ոչ մի պարագայում այլևս չի պատկերացնում իրեն այլ, հատկապես ազգային հողի վրա իր հանդեպ ագրեսիվորեն տրամադրված պետության կազմում:

Վերոնշյալի համատեքստում տեղին է մեջ բերել Հ. Քոթանջյանի հետևյալ դիտարկումը. «Ադրբեջանի, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի բնակչության նախապատրաստությունը ԼՂՀ ճանաչմանը, ինչպես նաև Ադրբեջանի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև զուգահեռ բանակցություններին՝ ԼՂՀ անվտանգության շրջանի մեջ մտնող որոշ տարածքների կարգավիճակի, հայկական և ադրբեջանական փախստականների հետագա վերադարձ իրենց նախկին բնակավայրեր՝ բոլոր երեք անկախ պետությունների բնակչության անվտանգության և կայուն զարգացման երաշխիքներով, կարող է դառնալ Հարավային Կովկասում ամուր խաղաղության և անվտանգության հաստատման և միջազգային

հանրություն նրա արդյունավետ ինտեգրման գործոններից մեկը» [28]:

Խնդրի վերլուծության առումով հատկանշական է նաև այն, որ չնայած Ադրբեջանի կողմից իրականացվող շրջափակմանը անցած ավելի քան 20 տարիները եղել են ԼՂՀ տնտեսության վերականգնման, պետական, քաղաքական և քաղաքացիական ինստիտուտների կայացման, ամրապնդման և կայուն զարգացման ժամանակաշրջան: Ներկայումս Ադրբեջանը հայկական կողմի վրա ճնշում գործադրելու նպատակով որդեգրել է ԼՂՀ-ին և ՀՀ-ին տարածաշրջանային բոլոր տնտեսական ծրագրերից մեկուսացման հստակ քաղաքականություն և հրաժարվում է վերջիններիս հետ միացնող բոլոր տրանսպորտային ուղիների շահագործումից:

Ի տարբերություն Ադրբեջանի ապակառուցողական դիրքորոշմանը՝ ՀՀ-ն իր ԱԱ ռազմավարության փաստաթղթում ամրագրել է, որ մշտապես հանդես է գալիս տարածաշրջանային համագործակցության միջավայրի ձևավորման, անվտանգության համակարգի ստեղծման, հարևան պետությունների միջև կառուցողական հարաբերությունների հաստատման օգտին [29]:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն աջակցելու առաքելությունը կողմերի համաձայնությամբ վստահվել է ԵԱՀԿ Մինսկի խմբին՝ Ռուսաստանի, ԱՄՆ և Ֆրանսիայի համանախագահությամբ: Այստեղ նույնպես պետք է փաստենք, որ ի տարբերություն ՀՀ մոտեցումների, որը բանակցությունների շարունակությունը տեսնում է բացառապես մինսկյան ձևաչափով, Ադրբեջանը, թերևս գոհ չլինելով իրերի դասավորումից, վերջին տարիներին փորձեր է կատարում դուրս բերել բանակցություններն այս ձևաչափից: Անհրաժեշտ է ընդգծել նաև, որ խաղաղարար գործընթացը վարկաբեկող և վերջինիս հեռանկարը սահմանափակող գործոններից է Ադրբեջանի իշխանությունների ռազմատենչ հոետորաբանությունը և հակահայկական հիստերիան: Այնպիսի երևույթները, ինչպիսիք են Ռամիլ Սաֆարովի հերոսացումը և մտավորականության ներկայացուցիչների բռնաճնշումը

(օրինակ՝ գրող Աքրամ Այլիսլի) հանդուրժողական հայացքների համար, հանրության գիտակցության մեջ թուլացնում են խաղաղարար կազմակերպությունների դիրքերը [30]:

Ներկա գործընթացները ցույց են տալիս, որ կողմերի հակոտնյա դիրքորոշումների պատճառով այսպես կոչված՝ ոսկե միջին տարբերակին հանգեցրել, զոնե այս պահին, հնարավոր չէ: Բացի այդ, համաձայնելով, որ հակամարտության վերջնական կարգավորման համար պատասխանատու են առաջին հերթին հակամարտող կողմերը, փաստ է, որ վերջինիս վրա ազդում են նաև Ռուսաստանի, ԱՄՆ, ԵՄ, և առավել նվազ չափով՝ Թուրքիայի, Իրանի շահերը: Եվ դրանք բոլորը տվյալ պահին հաշվի առնելը քիչ հավանական է թվում:

Ակնհայտ է, որ նավթադոլարների կայուն հոսքը դեռևս թույլ է տալիս Բաքվին Հարավային Կովկասում հրահրել սպառազինությունների մրցավազք, սակայն այն փաստը, որ այդ ամենն իրականացվում է հենց ադրբեջանցիների սոցիալական խնդիրների չլուծման գնով, մեծացնում է այն հավանականությունը, որ վաղ թե ուշ նման քաղաքականությունը բացասաբար կազդի Ադրբեջանի ներքաղաքական կայունության վրա: Ինչպես նշում է քաղաքագետ Ս. Մինասյանը՝ Ադրբեջանի տնտեսության հիպերտրոֆիկ կախվածությունը էներգառեսուրսների իրացումից ստացվող եկամուտներից (որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կազմում են, տարբեր գնահատականներով, բյուջեի մուտքերի 85 և արտահանման 92%-ը), լուրջ և խրոնիկական սպառնալիք է երկրի կայուն սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման համար [31]:

Համաշխարհային բանկի տվյալներով՝ ՀՀ ռազմական ծախսերը 2012թ. կազմել են ՀՆԱ-ի 3.9%-ը, Ադրբեջանի ռազմական ծախսերը՝ 4.6%-ը: 2011թ.-ից Ադրբեջանն ավելացրել է ռազմական ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը մինչև 4.6%-4.7%-ով: ՀՀ-ի ցուցանիշն իջել է 3.9%-ի: Բացի այդ, 2014թ. Ադրբեջանի ռազմական ծախսերը գերազանցելու են 3.7 մլրդ դոլարը [32]:

Պետք է արձանագրել, որ վերջին տարիներին Ադրբեջանի կողմից ռազմական ծախսերի շոշափելի ավելացումը մտահոգիչ է և պետք է դիտարկվի որպես սպառնալիք, սակայն, ակնհայտ է նաև, որ վերջինս երբեմն առավելապես կիրառվում է որպես հոգեբանական ճնշման և ռազմական ագրեսիայի սպառնալիքի տակ հակառակորդ կողմից զիջումներ կորզելու գործիք: Ուստի ճշմարտացի է հնչում այն դիտարկումը, որ Ադրբեջանի կողմից իր ռազմական բյուջեի աճի բարձր տեմպերի առավել գովազդված շեշտադրումներն առավել չափով հանդիսանում են հայկական կողմի վրա հոգեբանական ազդեցության գործիք, քան ռազմական շինարարության ոլորտում որակական փոփոխություններ անցկացնելու ընդունակության իրական ցուցանիշ [33]:

Խնդրի վերլուծության շրջանակներում անհրաժեշտ է նշել, որ ժամանակակից աշխարհաքաղաքական իրականության մեջ ՀՀ-ն, լինելով ԱՊՀ և ՀԱՊԿ անդամ երկիր, իր անվտանգությանը վերաբերող հարցերի շուրջ համագործակցում է նաև մի շարք այլ կառույցների ու կազմակերպությունների, այդ թվում՝ Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության (ՆԱՏՕ) հետ: Այսպես, ներկայումս ՀՀ-ՆԱՏՕ համագործակցությունն իրականացվում է Եվրասատլանտյան գործընկերության խորհրդի (ԵԱԳԽ) և «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում և այլն:

Ամփոփելով նշենք հետևյալը.

- Ղարաբաղյան չկարգավորված հակամարտությունը պայմանավորված է, և՛ պատմական և՛ արդիական գործոններով և օրինաչափորեն դիտարկվում է որպես ՀՀ ԱԱ սպառնացող գործոն, իսկ խնդրի ժամանակակից դրությունը և պատմական ասպեկտների վերլուծությունը ցույց են տալիս, որ հակամարտության կարգավորման միանշանակ և իրական ուղիներ՝ գոնե կարճաժամկետ կտրվածքով, չեն նշմարվում: Միաժամանակ, կարգավորման քննարկվող տարբերակները չեն բավարարում կողմերին,

ինչն Ադրբեջանի կողմից ունեցած հասնելու փորձ իրականացնելու ռիսկեր է պարունակում:

- Ադրբեջանի կողմից ռազմական գործողությունների սանձազերծման համար, համապատասխան աշխարհաքաղաքական իրավիճակի պարագայում, Casus belli⁴ կարող է հանդիսանալ ցանկացած սահմանային միջադեպ: Այստեղ որպես գործոն պետք է հաշվի առնել ադրբեջանական քաղաքական վերնախավի ռազմատենչ հոետորաբանությունը, մշտապես աճող ռազմական ծախսերը և, առնվազն կարճաժամկետ հեռանկարում, էներգակիրների վաճառքից ստացվող եկամուտների կայունությունը: Վերոնշյալ պարագայում ՀՀ համար իրավիճակը բարդացնում է նաև ՀԱՊԿ անդամ երկրների հետ ընդհանուր սահմանի բացակայությունը:
- Ներկա աշխարհաքաղաքական իրողությունների պայմաններում ՀԱՊԿ անդամ ՀՀ, չնայած իր հստակ աշխարհաքաղաքական և ռազմաքաղաքական դիրքորոշմանը դեպի Մաքսային միություն և ձևավորվող Եվրասիական տնտեսական միություն, փորձում է զգույշ և հավասարակշռված արտաքին քաղաքականություն վարել՝ տարբեր ձևաչափերով համագործակցելով այլ ուժային կենտրոնների և կառույցների հետ:

⁴ Հռոմեական ժամանակների իրավական տերմին՝ պատերազմ հայտարարելու ֆորմալ պատճառ:

ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ

- Բնորոշեք ռազմական անվտանգության էությունը:
- Ներկայացրեք պետության ռազմական անվտանգության ոլորտները:
- Ներկայացրեք ռազմական անվտանգության օբյեկտները, սուբյեկտները և սպառնալիքները:
- Ներկայացրեք պատերազմների տեսակները:
- Բնորոշեք Հարավային Կովկասի անվտանգության ընդհանուր միջավայրը:
- Ներկայացրեք տարբեր տերությունների շահերը Հարավային Կովկասի տարածաշրջանում:
- Ներկայացրեք արցախյան հակամարտության էությունը և դրա ազդեցությունը Հարավային Կովկասի անվտանգության համակարգի վրա:
- Ներկայացրեք հակամարտող կողմերի մոտեցումները արցախյան հակամարտության հանգուցալուծման վերաբերյալ:
- Ներկայացրեք ԼՂՀ ինքնորոշման իրավունքի իրացման հիմնավորումները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Кулагин В.М., Современная международная безопасность: учебное пособие/ В.М. Кулагин. –М.: КНОРУС, 2012. С. 18.
2. Кулагин В.М., նշվ. աշխ., էջ. 115:
3. Кулагин В. М., նշվ. աշխ., էջ 93:
4. Շիրինյան Լ.Ղ., Նոր աշխարհակարգը և Հայաստանը (Երկրաքաղաքական-քաղաքակրթական ակնարկ), Եր., 2010, էջ 154:
5. Гаджиев К.С., Геополитика Кавказа.- М.: Междунар. отношения, 2003. С. 37-38.
6. Тадевосян И., Национальный вопрос на Кавказе.- Ер.: Тигран Мец, 2007. С. 5.
7. Семедов С.А., Кавказский вектор внешней политики России, Внешняя политика: вопросы теории и практики: материалы научного семинара: под ред. П. А. Цыганкова.- М.: КДУ, 2009, С. 224.

8. Покровский Н. Кавказские войны и Имамат Шамиля.- М.: 2000. С. 103.
9. Cornell S. E. Small Nations and Great Powers. A Study of Ethnopolitical Conflict in the Caucasus // Curzon Press, Caucasus World, 2001. P. 399.
10. Эйвазов Д., Геополитические уроки постсоветского Кавказа: путь к глобализации или возвращение к классической Евразийской геополитике? // Кавказ и глобализация, 2006, Т. 1., № 1. С. 28.
11. Քոթանջյան Հ., Հարավային Կովկասում և շրջական տարածաշրջանում անվտանգության դինամիկայի որոշ անհամաչափ առանձնահատկություններ, http://www.mil.am/files/Final%20Marshall%20Center%20Conference_ARM.pdf
12. Սարգսյան Ս., ՀԱՊԿ և ՇՀԿ քաղաքականությունը Հարավային Կովկասի տարածաշրջանում, «ԳԼՈՐՈՒՍ», թիվ 4 (25), 2012, էջ 52-53:
13. Աթոյան Վ., «Հարավային Կովկասի անվտանգության հարցերի շուրջ», «Բանբեր ՀՊՏՀ», թիվ 4 (32), 2013, էջ 140-141:
14. Մինասյան Ս., Լեռնային Ղարաբաղ. հայեցակարգային մոտեցումներ կարգավորման հեռանկարներին, «Գլոբուս», N 4 (37), 2013, էջ 16:
15. Нартов Н.А., Нартов В.Н. Геополитика: учебник для студентов, обучающихся по специальностям «Государственное и муниципальное управление», «Международные отношения», «Регионоведение» / под ред. В.И. Старовойтова. 4-е изд., перераб. и доп. М.: ЮНИТИ-ДАНА, 2007. С. 215.
16. Бжезинский Зб. Выбор. Глобальное господство или глобальное лидерство. Пер. с англ. М.: Междунар. отношения, 2010. С. 82
17. Հարությունյան Գ., Հայաստանին ուղղված մարտահրավերները գլոբալացվող աշխարհում, «21-րդ դար», թիվ 6 (46), 2012թ., էջ 8:
18. Սարոյան Ս., «Հարավային Կովկաս. հաղորդակցային միջաճգնք, թե՛ տարածաշրջանային տերությունների փոխհարաբերությունների հարթակ», Հարավային Կովկասը 2008 թվականից հետո/ հմբ.՝ Գ. Լալայան, Մ. Սարգսյան, Կ. Կալենջյան, Եր.: Ռազմավարական և ազգային հետազոտությունների կենտրոն, 2011, էջ 95:
19. Гаджиев К. С., նշվ. աշխ., էջ 57:
20. Տե՛ս «ՀԱՊԿ-ի շրջանակում Հայաստանում կստեղծվի միացյալ օդուժ» (27/06/2013), <http://www.azatutyun.am/content/article/25029768.html>

21. Материалы международной конференции «Динамика региональной безопасности на Южном Кавказе»: Ереван, 17-18 ноября 2011, Ер.: Академически-исследовательский фонд политических наук, 2012. С. 114.
22. Малышева Д., Проблемы безопасности на Кавказе.
http://www.ca-c.org/journal/2001/journal_rus/cac-01/05.malishr.shtml
23. Мироненко А. Геополитика: Учеб. пособие.– М.: ИНФРА-М, 2009. С. 161-162.
24. Лукьянов Ф., Южный Кавказ-2010 – Конец понятия эпохи, «Кавказ-2010. Ежегодник Института Кавказа»/ Ред. А. Искандарян. Ер.: Институт Кавказа, 2012. С. 129.
25. Евсеев В., Иран в системе безопасности на Южном Кавказе (06/12/2013),
http://iran.ru/news/analytics/91967/Iran_v_sisteme_bezopasnosti_na_Yuzhnom_Kavkaze
26. «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն», ՀՀ ՊՆ Դ. Կանայանին անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, Եր., 2007, էջ 30:
27. ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի բացման խոսքը, «Աշխատանքային տետրեր», ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հավելված, 1, 2009, էջ 8:
28. Котанджян Г., Перегрузка международного сотрудничества с применением «умной силы» как фактор безопасности на Южном Кавказе, Материалы международной научной конференции «Динамика региональной безопасности на Южном Кавказе»: Ереван, 17-18 ноября, 2011. Ер.: Академический-исследовательский фонд политических наук, 2012. С. 111-112.
29. «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն», էջ 40:
30. Багдасарян Г., Гасанов А., Золян М., Маилян М., Пашаева Г., Приближение перспективы мира. 20 лет гражданского миротворчества в контексте Нагорно-Карабахского конфликта. International Alert, август 2013. С. 35.

31. Մինասյան Ա., Էներգետիկ գործոնի դերը Ղարաբաղյան հակամարտությունում. նոր վերաիմաստավորում, «Գլոբուս», թ. 11, 2012, էջ 39:
32. «Ռեզոլյուցիայի ծախսերն աշխարհում» (30.01.2014), <http://www.irates.am/hy/1391071509>
33. Ղարաբաղյան հակամարտություն. 15 հարց ու պատասխան «ոչ պատերազմի, ոչ խաղաղության» 15 տարիներն անց, Եր., Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ, 2009, էջ 21:

ՎԵՐՋԱԲԱՆ

Հարյուր անգամ անվրանգ կկուլես, եթե գիտես և՛ քեզ, և՛ նրան:

Եթե ճանաչում ես միայն քեզ և չես ճանաչում հակառակորդին, ճակատամարտերից մեկում կհաղթե՛ս, մյուսում՝ կպարտվե՛ս:

Ցանկացած ճակատամարտ կավարտես պարտությամբ, եթե չե՛ս ճանաչում ինքդ քեզ և հակառակորդին...

Սուն-Յզի

Գլոբալացման պայմաններում համաշխարհային քաղաքակրթության հետագա զարգացումը բնորոշվում է երկու հիմնական հակոտնյա միտումով: Մի կողմից՝ տեղի է ունենում համաշխարհային հանրության տարբեր մասերի տեղեկատվական փոխկապակցվածության կտրուկ բարձրացում, ինչը բարձրացնում է նրա՝ որպես բարդ ինքնակազմակերպվող համակարգ, կայունությունը: Մյուս կողմից՝ արևմտյան քաղաքակրթության հզոր մշակութաբանական և տեղեկատվական ծավալապաշտության ազդեցության հետևանքով մնացյալ երկրների ազգային մշակույթներն աստիճանաբար զիջում են իրենց դիրքերը: Այս միտումն արագ կրճատում է համաշխարհային հանրության մշակութային բազմազանությունը, ինչը վերջինիս՝ որպես բարդ համակարգի, աղքատացման և քայքայման նշաններից է, և հենց այդ պատճառով, կարծում ենք, պետք է դիտվի որպես բացասական, քանի որ ազգային մշակույթն է այն առանցքը, հիմքը, որն ապահովում է յուրաքաչյուր ազգի կենսունակությունն ու հարատևությունը, փոխադարձ հոգևոր կապն ու աշխարհի քաղաքակրթական բազմազանությունը: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ ազգային մշակույթն ԱԱ առանցքային օբյեկտներից մեկն է: Անվտանգության նշյալ խնդիրներն առավել խորանում են երկրագնդի անթրոպոգեն աննախադեպ ազդեցությունների և մոլորակի բնական ռեսուրսների անխնա շահագործման պայմաններում: Այս գործընթացը ոչ միայն կարող է փակել մարդկային քաղաքակրթության հետագա զարգաց-

ման ճանապարհը, այլ նաև մարդկությանը կանգնեցնել ինքնա-
ոչնչացման իրական սպառնալիքի առաջ:

Այսօր ԱԱ մարտահրավերները ձեռք են բերել սպառնացող չա-
փեր, արտաքին միջամտության թերագնահատումը հիմնարար
սխալներից մեկն է: Նման միտումներն արդիական նշանակություն և
համապատասխան հակաքայլեր են պարտադրում ոչ միայն փոքր
երկրներին: Այսպես, ըստ ՌԴ նախագահ Վ. Պուտինի՝ մեծ հաշվով
այն, ինչի հետ բախվում է այսօր աշխարհը՝ լուրջ համակարգային
ճգնաժամ է, գլոբալ վերափոխման տեկտոնական գործընթաց: Դա
նշմարվող անցումն է մշակութային, տնտեսական, տեխնոլոգիական,
աշխարհաքաղաքական նոր դարաշրջան: Աշխարհը մտնում է տուր-
բուլենտության գոտի: Եվ, անկասկած, այդ շրջանը երկարատև և
ցավոտ է լինելու: Այստեղ պատրանքներ պետք չէ ունենալ⁵:

Տնտեսապես թույլ, քաղաքականապես անկայուն պետությունը,
իդեալազուրկ հասարակությունը հաճախ դառնում է քաղաքա-
կրթական, գաղափարական և տնտեսական ագրեսիայի և ծավալա-
պաշտության օբյեկտ: Մեծ հաշվով այն ճանապարհը, որով խելակո-
րույս ընթանում է մարդկային քաղաքակրթությունը կամ, որը պար-
տադրվում է ինչ-ինչ ուժերի կողմից, ծնում է անզուսպ սպառման
կուռք, առաջ է բերում հասարակության սոցիալական, տնտեսական և
կրթական խորը շերտավորում, հանգեցնում է ապամշակութացմանը
և զանգվածային մշակույթի տարածմանը, դուրս է մղում մարդուն,
մարդու միջից, այսինքն՝ մարդկայնությունը, կարեկցանքը, ազգային
պատկանելիության զգացումը, ավանդույթները, ոգեղենությունը, եթե
կուզեք՝ հոգին դուրս են մղվում մարդու միջից՝ թողնելով միայն նյութն
ու նյութականը: Կասկածից վեր է, որ համամարդկային քաղաքա-
կրթության ապագայի համար մեծագույն մարտահրավեր է նման
արժեհամակարգի հետագա զանգվածայնացումը:

Գաղտնիք չէ, որ քաղաքակրթական և մշակութային ծավա-
լապաշտության վերաբերյալ դիսկուրսն այս կամ այն համատեքստում
նոր երևույթ չէ և առկա է նաև հայաստանյան ինտելեկտուալ արդի
դաշտում: Այդ համատեքստում հետաքրքրական ենք համարում մեջ-

⁵ «Россия сосредотачивается — вызовы, на которые мы должны ответить»
(16/01/2012), <http://izvestia.ru/news/511884>

բերել Մ. Լալայանի կարծիքը. «Առհասարակ, արևմտյան քարոզչության ժամանակակից տեխնոլոգիաները բավականին նուրբ են, և, որպես կանոն, մենք դրանց կործանարար ազդեցությունը հասկանում ենք կատարված իրողություններից հետո: Օրինակ, եթե ասենք, որ արտաքին հարձակումը այսօր մեզ վրա բոլոր ուղղություններով է, միգուցե շատերի տարակուսանքը շարժենք, որովհետև պատերազմ՝ մեզանում շատերը դեռևս հասկանում են միայն ռազմական գործողություններ: Այնինչ, մենք ամեն օր տանուլ ենք տալիս պատերազմները ինֆորմացիոն, հոգևոր, տնտեսական և այլ ոլորտներում: Եվ քանի դեռ չենք ընդունել տոտալ պատերազմի փաստը և, հետևաբար, դրան դիմակայելու խնդիր չունենք, անընդհատ կորուստներ ու անհաջողություններ ենք արձանագրելու⁶... Միօրինակություն քարոզող տեսությունները և դրանց հետևում կանգնած ուժերի խնդիրն ակնհայտ է. շահարկելով ինտեգրացման բնական գործընթացները՝ բոլոր ազգերին պարտադրել միօրինակ բարքեր, միօրինակ մշակույթ, մտածելակերպ, հասարակարգ, տնտեսաձև, կարճ ասած՝ աշխարհաքաղաքացու համընդհանուր կենսակերպ⁷»:

Ամփոփելով աշխատանքը նշենք, որ դասախոսությունների ընթացքում քննարկված հարցերն ու հիմնախնդիրները, իհարկե, չեն ամփոփում ԱԱ ամբողջ համատեքստը: Ինչպես արդեն նշել էինք սկզբում՝ խնդիր չենք դրել համապարփակ կերպով ներկայացնել ԱԱ տեսության և, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության ԱԱ ապահովման ոլորտին վերաբերող բոլոր հարցերը: Նպատակ ենք հետապնդել որոշակիորեն լրացնել մեզանում ԱԱ ոլորտի գրականության դաշտում առկա բացը, և ներկա դասախոսությունների շարքը դիտարկել որպես համեստ ներդրում՝ ՀՀ-ում ազգային անվտանգային քաղաքագիտության դպրոցի կայացման գործում:

⁶ Լալայան Մ., Ազգային գաղափարախոսության խնդիրների շուրջ, «Հայրենիք» ակումբ, Եր., 2008, էջ 12:

⁷ Նույնը, էջ 39:

ВАРДАН КОРЮНОВИЧ АТОЯН

Кандидат экономических наук

Директор программы «Исследования национальной безопасности»

Исследовательского центра «Амберд»,

Армянский государственный экономический университет

«ПРОБЛЕМЫ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ» (лекции)

В работе представлены содержание, ключевые понятия, компоненты, направления и методы обеспечения национальной безопасности. Рассматриваются вопросы, касающиеся роли *мозговых центров* в обеспечении национальной безопасности и основные вопросы обеспечения безопасности в контексте глобализации мировой экономики. Обсуждаются особенности глобальной информационной системы, сетевого общества, информационной безопасности и основные манипулятивные технологии. В работе также рассматриваются основные проблемы обеспечения военной и региональной безопасности и пути их решения.

Курс лекций предназначен для студентов и преподавателей вузов, а также специалистов заинтересованных вопросами политологии и национальной безопасности.

VARDAN ATOYAN

PhD in Economics

Director of „National Security Research” Program at „Amberd” Research Center, Armenian State University of Economics

„NATIONAL SECURITY ISSUES”

(lectures)

Lectures are devoted to main issues, concepts, components, fields and provision mechanisms of national security. Some issues regarding the participation format and activities of *think tanks* in the sphere of national security provision are discussed, also security provision issues in the context of world economy globalization. Meanwhile, specifications of network society and global information system, issues of providing information security and manipulation technologies are discussed. Military and regional security issues of the State are particularly emphasized.

The lectures are intended for students, lecturers and specialists interested in Political Science and National Security issues.

ՎԱՐԴԱՆ ԱԹՈՅԱՆ

տնտեսագիտության թեկնածու,
ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի
«Ազգային անվտանգության
հետազոտություններ» ծրագրի տնօրեն

Ազգային անվտանգության հիմնախնդիրներ

(դասախոսություններ)

Էջադրումը՝ **Ռ. Պեպրոսյանի**
Ձևավորումը՝ **Ն. Խչեյանի**

Պատվեր՝ 83,
Չափսը՝ 60 x 84^{1/16}
9,7 տպ. մամուլ,
Տպաքանակը՝ 400:

ՀՊՏՀ «ՏՆՏԵՍԱԳԵՏ» հրատարակչություն
Երևան, Նալբանդյան 128
010 59 34 37

